

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

Էմիլ Ամիրխանյան
Արթուր Հովհաննիսյան

**ՄԻԵԴ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ
ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹ**

ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1

Թեմա 1: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը
և այդ հոդվածի խախտման փաստն արձանագրելու համար
անհրաժեշտ պայմանները.....

Թեմա 2: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառման
ոլորտը

ԴԱՍ 2

Թեմա 1: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սուբյեկտների
շրջանակը.....

Թեմա 2: Պետության պոզիտիվ պարտավորությունը

ԴԱՍ 3

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական
երաշխիքների ապահովման հարցում.....

ԴԱՍ 4

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը ձեռնարկատիր-
ական գործունեության իրականացման ոլորտում.....

ԴԱՍ 5

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը մտավոր սեփա-
կանության ոլորտում.....

ԴԱՍ 6

Թեմա 1: Սեփականությունից զրկելը.....

Թեմա 2: Սեփականությունից զրկելու օրինականության պայմանները

ԴԱՍ 7

Թեմա: Պեղական վերահսկողությունը սեփականության օգտագործման նկատմամբ և դրա պարտադիր պայմանները

ԴԱՍ 8

Թեմա: Միջամտությունը գույքից անարգել օգտվելու իրավունքին և դրա իրավաչափության պայմանները

ԴԱՍ 9

Թեմա: ՄԻԵԿ 1 արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցությունը արդարացի բավարարման իրավունքի հետ

ԴԱՍ 10

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցությունը կոնվենցիայի 6-րդ, 8-րդ, 14-րդ հոդվածների հետ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում (այսուհետ նաև՝ Կոնվենցիա կամ ՄԻԵԿ) սեփականության պաշտպանության մեխանիզմների ներառումը միանշանակ և հարթ չընթացավ՝ դառնալով բազմաթիվ քննարկումների առարկա: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան և Շվեդիան մտավախություն ունեին, որ այդ իրավունքի ներառումը կարող է սահմանափակել պետության իշխանական լծակները՝ քաղաքական և սոցիալական նպատակներով գույքի ազգայնացման ծրագրերի իրականացման մասով: Այդ էր պատճառը, որ սեփականության իրավունքը սահմանվեց Կոնվենցիայի վավերացումից միայն 2 տարի անց ընդունված արձանագրությամբ: Արձանագրությամբ դիտավորյալ կերպով չօգտագործվեց սեփականության իրավունք եզրույթը, և ընդհանրապես մշակողները ձեռնպահ մնացին իրավունք եզրույթը օգտագործելուց: Հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ լիազորված է անարգել օգտվելու իր գույքից: Հետագայում միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ), մեկնաբանելով հոդվածը, արձանագրեց, որ խոսքը սեփականության մասին է:

Բացի այդ՝ անդամ պետությունների համար սահմանվեց հայեցողության լայն շրջանակ՝ իրականացնելու իրենց սոցիալական և տնտեսական քաղաքականությունը, նույնիսկ այն դեպքերում, երբ առկա է միջամտություն անձի սեփականության իրավունքին: Բայց դա ամենևին չի նշանակում, որ Եվրոպական դատարանը որևէ դերակատարում չունի վերահսկելու այդ միջամտության օրինականությունը և համապատասխանությունը կոնվենցիոն պահանջներին: Մասնավորապես, գործերից մեկով Եվրոպական դատարանը (*James v. the United Kingdom* (1986)) արձանագրեց, որ *չնայած Դափարանը չի կարող ինքնուրույն մեկնաբանել ազգային օրենսդրությունը և դրանով իսկ փոխարինել ազգային իշխանական մարմիններին, բայց վերջինս լիազորված է գնահատման առարկա դարձնել ազգային մարմինների կողմից կիրառված միջոցները, գնահատել դրանց համապատասխանությունը կոնվենցիոն պահանջներին, և այդ անելու ընթացքում հաշվի առնել և գնահատման*

առարկա դարձնել այն փաստերը, որոնք հիմք են հանդիսացել ազգային մարմինների կողմից նման միջոցների կիրառման համար:

Այսպիսով՝ եվրոպական երկրները, մի դեպքում գիտակցելով, որ ժողովրդավարական պետությունում կարևորվում է անձի սեփականության պաշտպանությունը, մյուս կողմից էլ կարևորելով պետության իրավունքը՝ հանրային շահով պայմանավորված՝ փոփոխելու սոցիալական և տնտեսական քաղաքականությունը, փորձեցին, այս երկու գործոնները հաշվի առնելով, ձևավորել սեփականության իրավունքը մեկնաբանելու համար բավականին բարդ դատական պրակտիկա:

ԴԱՍ 1

Թեմա 1: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը և այդ հոդվածի խախտման փաստն արձանագրելու համար անհրաժեշտ պայմանները

ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավասու է անարգել օգտվելու իր գույքից: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարկերի, գանձումների, փուզանքների վճարումն ապահովելու համար»:

ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին նորմերից: ՄԻԵԴ-ը նման եզրահանգման է եկել Sporrong and Lönnroth v. Sweden (1982) գործով, որը ՄԻԵԴ կարևորագույն վճիռներից է սեփականության պաշտպանության ոլորտում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը արձանագրեց. «Առաջին նորմը, որն ընդհանուր բնույթի է, սահմանում է սեփականությունից անարգել օգտվելու սկզբունքը. այն ամրագրված է առաջին պարբերության առաջին նախադասության մեջ: Երկրորդ նորմը վերաբերում է սեփականությունից զրկելուն և դրա համար որոշակի պայմաններ է սահմանում. այս նորմը ամրագրված է նույն պարբերության երկրորդ նախադասության մեջ: Երրորդ նորմի համաձայն՝ պետություններն իրավունք ունեն, այլոց թվում, վերահսկելու գույքի օգտագործումը՝ հանրության շահերին համապատասխան, գործադրելով այնպիսի օրենքներ, ինչպիսիք անհրաժեշտ են համարում այդ նպատակին հասնելու համար, այս նորմն ամրագրված է երկրորդ պարբերության մեջ» (տես Sporrong and Lönnroth v. Sweden, 23/09/1982 թ. վճիռ, գանգապ թիվ 7151/75, 7152/75, կետ 61):

Նույն գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ նշված երեք նորմերը, այնուամենայնիվ, փոխկապակցված են. «Երկրորդ և երրորդ նորմերը վերաբերում են սեփականության անարգել օգտագործման իրավունքին միջամտելու որոշակի դեպքերի, ուստի պետք է մեկնաբանվեն առաջին նորմում ամրագրված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո» (տե՛ս *Agosi v. The UK*, 24/10/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 9118/80, կետ 48):

Միաժամանակ, ՄԻԵԴ-ն ավելացրեց, որ հասկանալու համար, թե արդյոք պահպանվել են առաջին նորմի պահանջները, դատարանը պետք է որոշի վերջին երկուսի կիրառելիությունը (տե՛ս *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23/09/1982 թ. վճիռ, գանգապ թիվ 7151/75, 7152/75, կետ 61):

1. *Սեփականությունից զրկելը* (երկրորդ նորմ).

Սեփականությունից զրկելը ենթադրում է անձի սեփականության իրավունքի դադարեցում: Սակայն, հարկ է ընդգծել, որ ՄԻԵԴ-ը հաշվի է առնում ոչ միայն այն դեպքը, երբ ֆորմալ առումով դադարում է անձի սեփականության իրավունքը, այլ նաև գնահատման առարկա է դարձնում այն հարցը, թե արդյոք առկա է սեփականության իրավունքից փաստացի զրկում: Նշվածը բացատրվում է այն հանգամանքով, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու իրավունքներ, որոնք «գործնական են և արդյունավետ»:

Մասնավորապես, *Papamichalopoulos v. Greece* (1993) գործով դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը 1967 թ. պետության կողմից տրվել էր ծովային զինված ուժերին, որը այդ հողամասում ծովային զորամաս էր տեղակայել: Նշվածի պատճառով սեփականատերը չնայած *de jure* (ըստ օրենքի) չէր զրկվել իր սեփականության իրավունքից, բայց *de facto* (փաստացի) զրկվել էր իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասը օգտագործելու կամ վաճառելու հնարավորությունից: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ տեղի է ունեցել սեփականության իրավունքից փաստացի զրկում:

2. *Վերահսկողություն գույքի օգտագործման նկատմամբ* (երրորդ նորմ).

Պետության կողմից կիրառված միջոցներն ընկնում են այս կանոնի

կարգավորման շրջանակներում, եթե դրա հիմնական նպատակը պետության կողմից գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության սահմանումն է՝ ելնելով ընդհանուր շահից, կամ հարկերի, այլ վճարների կամ տուգանքների վճարման ապահովման նպատակից:

Օրինակ՝ *Handyside v. UK* (1976) գործով դիմումատուի գրքերի վրա արգելանք էր դրվել՝ դրանցում անպարկեշտ նկարների առկայության պատճառով: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գրքերի վրա արգելանքի կիրառումը ժամանակավոր միջոց է՝ Եվրոպական դատարանը եկավ այն եզրահանգման, որ այս դեպքում առկա չէ սեփականության իրավունքից զրկում, և գործի քննությունը շարունակեց երրորդ կանոնի լույսի ներքո:

Մեկ այլ՝ *Mellacher and others v Austria* (1989) գործով դիմումատուների կողմից ներկայացված բողոքի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ օրենքով սահմանվել էր գույքի վարձակալության վճարի առավելագույն չափ: Այս գործով պետական միջամտության իրավաչափությունը նույնպես գնահատման առարկա դարձավ երրորդ կանոնի շրջանակներում:

3. *Սեփականությունից անարգել օգտվելու իրավունք* (առաջին նորմ):

Չնայած սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, կոչված լինելով երաշխավորելու անձի սեփականության իրավունքի պաշտպանությունը, ամրագրված է հողվածի հենց առաջին նախադասությունում, այնուամենայնիվ Եվրոպական դատարանի կողմից այն միշտ գնահատման առարկա է դարձվում վերջում: Այն կիրառվում է միայն այն դեպքում, երբ մյուս երկու նորմերը կիրառման ենթակա չեն: Այսինքն՝ առաջին նորմն ունի ընդհանուր բնույթ և իր մեջ ներառում է անձի սեփականության իրավունքի միջամտության բոլոր այն դեպքերը, որոնք չեն կարող որակվել որպես սեփականությունից զրկում կամ գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն: Կոնկրետ գործով կիրառելի նորմը որոշելիս ՄԻԵԴ-ը նախ և առաջ գնահատման առարկա է դարձնում երկրորդ կամ երրորդ նորմերի կիրառելիության հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ և երրորդ նորմերը բավականին լայն մեկնաբանության առարկա են դարձել (հատկապես գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության նորմը)՝ այս նորմի կիրառելիության

շրջանակները այնքան էլ լայն չեն, որքան կարելի էր ակնկալել:

Ինչ վերաբերում է ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի խախտումների արձանագրմանը, ապա իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատված համարելու համար Եվրոպական դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք 1-ին հոդվածի իմաստով առկա է սեփականության իրավունք:

2. Արդյո՞ք առկա է միջամտություն այդ իրավունքին:

3. Հոդվածում նշված ռի կանոնին է վերաբերում միջամտությունը:

4. Արդյո՞ք միջամտությունը համապատասխանում է օրինականության և իրավական որոշակիության պահանջներին:

5. Արդյո՞ք միջամտությունը հետապնդում է իրավաչափ նպատակ (հանրային կամ ընդհանուր շահ):

6. Արդյո՞ք միջամտությունը համաչափ է. առկա է արդար հավասարակշռություն հանրային շահի և անձի սեփականության իրավունքի պաշտպանության պահանջի միջև:

Ի դեպ, հարկ է արձանագրել, որ սեփականության իրավունքին միջամտության առկայության դեպքում կարելի է փաստել ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման մասին, եթե վերոնշյալ 4-6-րդ հարցերից որևէ մեկի պատասխանը բացասական է:

Թեմա 2: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառման ոլորտը

Նշված թեմայի շրջանակներում կներկայացվի հոդվածով երաշխավորվող իրավունքների շրջանակը (շարժական և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ, այլ գույքային և ոչ գույքային իրավունքներ): Մասնավորապես, կներկայացվեն «սեփականություն» հասկացությունը, դրա ինքնավար հայեցակարգը, «սեփականության» հիմնական տեսակները, «իրավաչափ ակնկալիք» հասկացությունը: Քննարկման առարկա կդարձվեն «գոյություն ունեցող գույք», «ապագայում ձեռք բերվելիք գույք» հասկացությունները:

ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառման

ոլորտին առաջին անգամ համապարփակ ձևով անդրադարձել է Marckx v. Belgium (1979) գործով՝ արձանագրելով. «Ճանաչելով այն, որ յուրաքանչյուր ոք ունի սեփական գույքից անարգել օգտվելու իրավունք, հողվածք, ըստ էության, երաշխավորում է սեփականության իրավունքը: Սա այն հստակ տրամաբանությունն է, որ թողնում են «գույք» «possession» և «գույքի օգտագործում» «use of property» (ֆրանսերեն՝ «biens», «propriété», «usage des biens») հասկացությունները: Նախապարաստական փաստաթղթերը անվերապահորեն հաստատում են դա: Նախագիծը մշակողները շարունակաբար խոսում էին «սեփականության իրավունքից» (տե՛ս Marckx v. Belgium, 13/06/1979 թ. վճիռ, գանգաղ թիվ 6833/74, կետ 63):

Այսինքն՝ Եվրոպական դատարանը տվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ամրագրված դրույթի ընդլայնված մեկնաբանություն՝ արձանագրելով, որ ՄԻԵԿ-ը երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը:

ՄԻԵԿ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է առանձնացնել սեփականության հետևյալ տեսակները՝

1. Շարժական և անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ,
2. Գույքային և ոչ գույքային իրավունքներ՝
 - Բաժնետոմսեր (Bramelid & Malmstrom v Sweden (1982)),
 - Մտավոր սեփականության իրավունքներ (Anheuser–busch INC. v. Portugal (2007)),
 - Բարի համբավ (Van Marle & Ors v The Netherlands (1986)),
 - Կենսաթոշակի նկատմամբ իրավունքներ (Stec and others v United Kingdom (2005)),
 - Ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված տնտեսական շահը (Tre Traktorer Aktiebolag v Sweden (1989)),
 - Որոշակի մասնագիտությամբ գործունեություն իրականացնելու իրավունքը (հաճախորդներ) (Malik v. The United Kingdom (2012)),
 - Նախնական պայմանագրից բխող իրավունքներ (Ceni v. Italy (2014)),
 - Սեփական գույքից շահույթ ստանալու իրավունք (Bitto and others v. Slovakia (2014)),

- Իրավաչափ ակնկալիք (*Harrach v. Czech Republic* (2003)) և այլ:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է հասկանալ, թե վերոնշյալ գույքային իրավունքներն ինչ ծավալով են պաշտպանվում ՄԻԵԴ-ի կողմից, որովհետև շատերի մոտ կա թյուրըմբռնում, որ, օրինակ, եթե ՄԻԵԴ-ի կողմից պաշտպանվում են կենսաթոշակի կամ աշխատավարձի նկատմամբ իրավունքները, ապա դա արվում է բացարձակ կերպով: ՄԻԵԴ-ի կողմից պաշտպանության տակ առնված հիմնական գույքային իրավունքներին կոնկրետ օրինակներով ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի հաջորդ դասերի ընթացքում, բայց մինչ այդ պետք է հասկանալ ՄԻԵԴ-ի որդեգրած սկզբունքները այս հարցում:

ՄԻԵԴ-ը մասնավորապես, նշել է. «*Հողվածը փարածվում է միայն գոյություն ունեցող գույքի նկատմամբ, և այն չի երաշխավորում գույք ձեռք բերելու իրավունքը, լինի դա կտակի բացակայության հիմքով, թե կամավոր օտարման միջոցով*» (տե՛ս *Marckx v. Belgium*, 13/06/1979 թ. վճիռ, գանձապար թիվ 6833/74, կետ 50): Օրինակ՝ *Marckx v. Belgium* (1979) գործի փաստերի համաձայն՝ Բելգիայի ազգային օրենսդրությամբ անօրինական երեխաների համար ժառանգելու իրավունք նախատեսված չէր: Եվրոպական դատարանը մերժել էր դիմումը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կոնվենցիան չի երաշխավորում նոր գույքի ձեռքբերումը, այդ թվում՝ ժառանգության հիմքով, սակայն այն տարածվում է այն դեպքերի նկատմամբ, երբ ըստ ներպետական օրենքի՝ ժառանգելու իրավունքը արդեն իսկ ծագել է: Այսինքն՝ անձը պետք է որոշակի իրավունք ունենա՝ սահմանված իր ներպետական օրենքով, հակառակ դեպքում նրա պահանջը չի կարող Կոնվենցիայի իմաստով համարվել «գույք»: Մասնավորապես, *S. v. the United Kingdom* (1986) գործով երկու կին երկար տարիներ համատեղ բնակվում էին որպես նույնասեռական գույգ, որոնցից մեկը ուներ բնակարանի նկատմամբ վարձակալության իրավունք. իրավատերը մահացել էր, և մյուսը զրկվել էր այդ տանը ապրելու իրավունքից: Եվրոպական դատարանն արձանագրել էր, որ իրականում այդ կինը որևէ պայմանագրային իրավունք չունի, և այն փաստը, որ նա ապրել է այդ տանը, բավարար չէ արձանագրելու, որ նա Կոնվենցիայի իմաստով ունի գույքային իրավունք (տե՛ս *S. v. the United Kingdom* 14/05/1986 թ. Հանձնաժողովի որոշում, գանձապար թիվ

11716/85, կետ 5):

Հետագա գործերով ՄԻԵԴ–ի կողմից սահմանվել է «սեփականության» ինքնավար հայեցակարգը: Մասնավորապես, *Beyeler v. Italy* (2000) գործով Եվրոպական դատարանն արձանագրել է. «*Թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածով նախատեսված «սեփականություն» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում ֆիզիկական բարիքների սեփականությամբ և անկախ է ներպերական օրենսդրությամբ նախատեսված ֆորմալ որակումից»* (տե՛ս *Beyeler v. Italy 05/01/2000 թ. վճիռ, գանգապ թիվ 33202/96, կետ 100*):

Նման լայն մեկնաբանության համար հիմք է ծառայել ֆրանսերեն տեքստում օգտագործվող *Bien* եզրույթը, որը ֆրանսիական իրավունքում իր մեջ ներառում է բոլոր գույքային իրավունքները, այդ թվում՝ բաժնետերերի իրավունքները, տնտեսական շահը, մտավոր սեփականության իրավունքները, վարձակալության իրավունքները:

Սեփականության իրավունքի ինքնավարության վառ օրինակ է *Tre Traktor Aktiebolag v. Sweden* (1989) գործը, որով ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ սեփականության իրավունքը տարածվում է ոչ միայն ավանդական անշարժ կամ շարժական գույքի վրա: Այդ նախադեպով **տնտեսական շահը ՄԻԵԿ** թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով որակվեց որպես սեփականության իրավունք: Վերջինիս կարևորությունը բացատրվում է այն հանգամանքով, որ առկա է կարծիք այն մասին, որ թույլտվությունները, լիցենզիաները, ինչպես նաև մասնագիտական գործունեության արտոնագրերը ցանկացած դեպքում Կոնվենցիայի իմաստով համարվում են սեփականություն: Մինչդեռ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայով պաշտպանության տակ է առնվում միայն տնտեսական շահը, որը ծագում է վերոնշյալ արտոնագրերի իրավատերերի մոտ (տե՛ս *նաև դաս 4*):

Gasus Dosier v. Netherlands (1995) գործով ՄԻԵԴ–ն անդրադարձել է գույքի ապահովման իրավունքին: Մասնավորապես, գործով դիմումատուս ստացել էր բետոնե շաղախիչի մատակարարման պատվեր: Գույքը մատակարարվել էր, սակայն վճարումը պետք է կատարվեր հետագայում: Նիդերլանդների օրենսդրության համաձայն՝ վաճառողը պահպանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը մինչև գնորդի

կողմից գումարի վճարումը: Այդ ընթացքում հարկային կատարածուն բունազանձում տարածեց այդ գույքի նկատմամբ պատվիրատուի կողմից չվճարված հարկային պարտավորությունների դիմաց: Նշված գործով դատարանն արձանագրել է. ««Գույքի» գաղափարը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ինքնուրույն իմաստ ունի, որը սահմանափակված չէ ֆիզիկական ապրանքների սեփականությամբ, որոշակի այլ իրավունքներ և շահեր, որոնք հանդիսանում են ակտիվներ, նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և այդպիսով՝ «գույք»: Հետևաբար, էական չէ՝ բեյրոնի շաղախիչի նկատմամբ դիմումագրուի իրավունքը սեփականության իրավունք է, թե գույքի ապահովման իրավունք: Ցանկացած դեպքում, բեյրոնե շաղախիչի վրա արգելանք դնելը և հետագայում դրա վաճառքը գնահատվում են որպես միջամտություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված անձի «գույքից» «անարգել օգտվելու» իրավունքին» (տես *Gasus Dosier v. Netherlands* 23/02/1995 թ. վճիռ, գանգապ թիվ 15375/89, կետ 53):

ՄԻԵԴ-ն անդրադարձել և բնորոշել է նաև «իրավաչափ ակնկալիք» հասկացությունը: Մասնավորապես՝

- *Harrach v. Czech Republic* (2003); *Kopecký v. Slovakia* (2004) գործերով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Կոնվենցիայի իմաստով գույք է «գոյություն ունեցող գույքը» կամ «ունեցվածքը», այդ թվում՝ պահանջի իրավունքը, որի հիմքով դիմումատուն կարող է հիմնավորել, որ ունեցել է «իրավաչափ ակնկալիք» ձեռք բերելու սեփականության իրավունք (տես *Kopecký v. Slovakia* 28/09/2004 թ. վճիռ, գանգապ թիվ 44912/98, կետ 35(c)): ««Իրավաչափ ակնկալիք»-ն առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր՝ վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մեջ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին» (տես *Kopecký v. Slovakia* 28/09/2004 թ. վճիռ, գանգապ թիվ 44912/98, կետ 45-52):
- *Pine Valley Developments Ltd and Others v. Ireland* (1991) գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ հողատարածքի նա-

խագծման և կառուցապատման թույլտվությունը Կոնվենցիայի իմաստով գույք է, քանի որ. ««Pine Valley» ընկերությունը հողամասը ձեռք է բերել՝ հիմք ընդունելով պետական ռեգիստրում պարզաձև կարգով գրանցված թույլտվության առկայությունը, և բոլոր հիմքերն ունեցել է ենթադրելու, որ այն վավերական է: Թույլտվությունը նպաստավոր որոշում էր, որը պլանավորման համար պատասխանատու մարմնի կողմից չէր կարող վերանայվել: Նշված հանգամանքներում ձևական կլիներ փաստելը, որ գերագույն դատարանի որոշմամբ անձի գույքին միջամտություն չի կատարվել: Մինչ դրա կայացումը դիմողներն առնվազն ունեցել են իրավաչափ ակնկալիք, որ թույլտվության հիմքով կարող են տարածքի կառուցապատում իրականացնել, ինչը պետք է գնահատել որպես վեճի առարկա սեփականության բաղկացուցիչ տարր» (տես *Pine Valley Developments Ltd and Others v. Ireland*, 29/11/1991 թ. վճիռ, գանգապ թիվ 12742/87, կետ 51):

- *X v. the Federal Republic of Germany* (1979) գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ նոտարական ծառայության վճարները Կոնվենցիայի իմաստով կարող են գնահատվել որպես գույք միայն այն դեպքում, երբ խոսքը արդեն իսկ մատուցված ծառայության դիմաց վճարվելիք գումարների մասին է, իսկ մյուս բոլոր դեպքերում նոտարները չէին կարող իրավաչափ ակնկալիք ունենալ, որ պետությունը չի նվազեցնի իրենց վճարների չափը (տես *X v. the Federal Republic of Germany*, 13/12/1979, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում թիվ 8410/78):
- *Pressos Compania Naviera S. A v. Belgium* (1995) գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է. «Վճռաբեկ դատարանի 05/11/1920, 15/12/1983 և 17/05/1985 թվականների վճիռների հիման վրա դիմողները կարող են ունենալ «իրավաչափ ակնկալիք», որ պատահարի արդյունքում վերջիններիս ներկայացրած պահանջը պետք է քննվի վնասի հատուցման ընդհանուր կանոններով» (տես *Pressos Compania Naviera S. A v Belgium* 20/11/1995 թ. վճիռ թիվ 17849/91, կետ 31):
- *Centro Europa 7 S. R. L. and Di Stefano v. Italy* (2012) գործի

փաստական հանգամանքների համաձայն՝ 1999 թ. հուլիսի 28-ին համապատասխան պետական լիազոր մարմինը, ղեկավարվելով թիվ 249/1997 օրենքով, Centro Europa 7 S. R. l.-ին տրամադրել էր համագալին ստացիոնար հաղորդակներով հեռուստահեռարձակման արտոնագիր՝ թույլատրելով տեղադրել և գործարկել անալոգային հեռուստացանց: Ինչ վերաբերում էր հաճախականությունների տրամադրմանը, ապա արտոնագրով հղում էր կատարված 1998 թ. հոկտեմբերի 30-ին ընդունված պետական հաճախականության տրամադրման պլանին: Վերջինիս համաձայն՝ սարքավորումները քսանչորս ամսվա ընթացքում պետք է համապատասխանեցվեին առաջադրանքների պլանի (piano di assegnazione) պահանջներին, և այդ նպատակով իրականացվող միջոցառումները պետք է համապատասխանեին հեռահաղորդակցության նախարարության հետ համատեղ հեռահաղորդակցությունը կանոնակարգող մարմնի կողմից սահմանված ճշգրտման-կանոնավորման ծրագրին: *Consiglio di Stato*-ի (թարգմ.՝ Պետական խորհուրդ, իրավական-վարչական խորհրդարվական մարմին, որը երաշխավորում է հանրային կառավարման օրինականությունը Իտալիայում: *Խորհուրդն իրավասություն ունի վարչական բոլոր մարմինների ակտերի նկատմամբ*) 2008 թ. մայիսի 31-ի թիվ 2624 որոշմամբ հաճախականությունների տրամադրումը հետաձգվել էր մինչև իշխանությունների կողմից ճշգրտման-կանոնավորման ծրագրի ընդունումը, որի հիման վրա դիմող ընկերությունը պարտավոր էր արդիականացնել իր տեխնիկական սարքավորումները/տեղադրումները: Ճշգրտման-կանոնավորման ծրագիրն իր հերթին պետք է հաշվի առներ պետական հաճախականությունների տրամադրման պլանի պահանջները: Սակայն պլանը չէր իրականացվել: Պետական մակարդակում կիրառվեց անցումային ծրագրերի-սխեմաների մի շարք, որոնցից օգտվեցին գործող հեռուստալիքները: Արդյունքում դիմող ընկերությունը, արտոնագիր ունենալով հանդերձ, մինչև 2009 թ. հունիսը զրկված էր հեռարձակում ապահովելու հնարավորությունից, քանի որ նրան չէր տրամադրվել որևէ հաճախականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական հանգամանքները և հաշվի առնելով արտոնագրի և գործող օրենսդրական դաշտի պահանջները

րը՝ Եվրոպական դատարանն արձանագրեց, որ դիմող ընկերությունը ողջամտորեն ակնկալել է, որ 1999 թ. հուլիսի 28-ին հաջորդող քսանչորս ամիսների ընթացքում անհրաժեշտ իրավական միջոցառումներ կձեռնարկվեն ստացիոնար հաղորդակներով հեռարձակելու գործունեությունը կանոնակարգելու ուղղությամբ: Դիմող ընկերությունը իր սարքավորումները արդիականացնելուց հետո պետք է իրավունք ունենար հաղորդելու հեռուստատեսային ծրագրերը: Հետևաբար, Ընկերությունը ունեցել էր «իրավական ակնկալիքներ»:

Իրավաչափ ակնկալիք եզրույթին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի («Քաղաքացի Գևորգ Սլոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 18.04.2014 թ. թիվ ՍԴՈ-1148 որոշում) և ՀՀ վճռաբեկ դատարանի (Լյուդմիլա Ցվետկովա ընդդեմ Սվետլանա Հովակիմյան, 29.07.2011 թ. թիվ ԳԴ1/0145/02/10, Գոլդուեյ ընդդեմ Վալթի Մոթորս, 19.10.2012 թ. թիվ ԵՇԴ/0177/02/11 որոշումներ) կողմից կայացված որոշումներով: Մասնավորապես, Լյուդմիլա Ցվետկովա ընդդեմ Սվետլանա Հովակիմյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից պաշտպանության տակ է առնվել գույք հատկացնելու մասին վարչական ակտին վստահելու իրավունքը:

ԴԱՍ 2

Թեմա 1: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սուբյեկտների շրջանակը

Նշված թեմայի շրջանակներում կներկայացվեն սուբյեկտներին ներկայացվող հիմնական պահանջները, սուբյեկտների հիմնական տեսակների (իրավաբանական անձինք, քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա քաղաքացիներ) կարգավորման առանձնահատկությունները:

ՄԻԵԿ 34-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը կարող է զանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպություններից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են Կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների խախտման զոհ կարող է լինել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ ներառյալ առևտրային կազմակերպությունները (տե՛ս *Autronic AG v. Suisse*, (1990)):

Այսինքն՝ Կոնվենցիան կիրառելի է Եվրոպական կոնվենցիայի մասնակից պետության իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի, այն է՝ ՄԻԵԿ մասնակից պետությունների քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Չնայած Կոնվենցիան երաշխավորում է իր սեփականությունից օգտվելու ցանկացած անձի իրավունքը, այնուամենայնիվ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ առկա են որոշակի տարբերություններ սեփական քաղաքացիների և օտարերկրացիների սեփականության պաշտպանության դեպքերում:

Մասնավորապես, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքից զրկելու կարևոր պայմաններից մեկը **միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների** պահպանումն է: Սակայն, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ սեփական քաղաքացիները փոխհատուցման հետ կապված միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառման ոլորտից

դուրս են (տե՛ս James v. UK (1986), Lithgow v. UK (1986)): Նշվածը բացատրվում է հետևյալ հանգամանքներով՝

- Քաղաքացիները ներպետական հարցերում չեն կարող պահանջ ներկայացնել՝ հղում անելով միջազգային իրավունքին:
- Օտարերկրյա քաղաքացիները ավելի խոցելի են ազգային օրենսդրության տեսանկյունից:
- Հանրային շահը վերաբերելի է միայն քաղաքացիներին:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը առանձնացնում է նաև խախտման «անմիջական զոհ» և «անուղղակի զոհ» հասկացությունները: Եթե առաջինի մասով ամեն ինչ պարզ է, ապա որպես անուղղակի զոհ ՄԻԵԴ–ը որակում է այն անձանց, որոնք ունեն սերտ հարաբերություններ անմիջական զոհի հետ, և որոնք Կոնվենցիայի խախտման արդյունքում կրել են վնաս կամ շահագրգիռ են խախտման վերացման հարցում (տե՛ս *Agrotexim and Others v. Greece*, 26/09/1995 թ. *Հանձնաժողովի որոշում*, թիվ 15/1994/462/543, կետեր 62, 64): Անուղղակի զոհ կարող է լինել, օրինակ, ընկերության բաժնետերերը ընկերության գույքը հարկադիր օտարելու դեպքում:

Այս մասով, Եվրոպական հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) արձանագրել է, որ ընկերության բաժնետերերը նույնպես կարող է համարվել զոհ, նույնիսկ եթե Ավստրիական իրավունքի համաձայն՝ միայն ընկերությունը ունի դատարան դիմելու իրավունք: Այդ առումով պետք է հաշվի առնել այն, որ դիմումատուն հանդիսանում է բաժնետոմսերի 91 % սեփականատերերը (տե՛ս *X v. Austria*, 04/10/1966 թ. *Հանձնաժողովի որոշում*, թիվ 1706/62):

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է. «*Բաժնետերերը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով համարվում է «խախտման զոհ», եթե Ընկերությունում ունի «էական մասնաբաժին»՝ «մեծամասնության կամ հսկիչ փաթեթի առկայություն»* (տե՛ս *Yarrow and Others v. the United Kingdom*, 28/01/1983 թ. *Հանձնաժողովի որոշում*, գանգապ թիվ 9266/81):

Նշված իրավական հարցի մասով դասընթացի ընթացքում կներկայացվի նաև *Agrotexim v. Greece* (1995) գործը: Նշված գործով դիմումատուները գարեջրի արտադրությամբ զբաղվող ընկերության բաժ-

նետերերն էին: Ընկերությանը պատկանող հողատարածքի օտարման վերաբերյալ Աթենքի խորհրդի որոշման հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ էր կրել և արդյունքում սնանկ ճանաչվել: Նշանակվել էր սնանկության կառավարիչ: Բաժնետեր ընկերությունները գանգատ էին ներկայացրել ՄԻԵԴ՝ պատճառաբանելով, որ Աթենքի խորհրդի որոշմամբ խախտվել էր ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրենց սեփականության իրավունքը: Պատասխանող պետության կողմից ներկայացվել էր փաստարկ այն մասին, որ դիմումատուները ընդամենը ընկերության բաժնետերեր են, հետևաբար Աթենքի խորհրդի որոշմամբ չէր կարող խախտվել նրանց սեփականության իրավունքը, քանի որ նրանք Կոնվենցիայի իմաստով տուժող չեն: Հանձնաժողովը արձանագրեց, որ դիմումատուները տուժել են Աթենքի խորհրդի որոշման արդյունքում, քանի որ միջամտության հետևանքով բաժնետոմսերի արժեքը նվազել էր: Մինչդեռ, ՄԻԵԴ-ն արտահայտեց հակառակ դիրքորոշումը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը չհամաձայնվեց դիմումատուների այն փաստարկի հետ, համաձայն որի՝ բաժնետերերը ցանկացած դեպքում իրավասու են ընկերության սեփականության իրավունքի խախտման հարց բարձրացնելու: Դատարանը նման դիրքորոշումը բացատրել է այն հանգամանքով, որ ընկերությունների բաժնետերերի և կառավարման մարմինների միջև անհամաձայնությունները սովորական երևույթ են, և նման իրավունքի նախատեսման արդյունքում կարող են խախտվել ընկերության շահերը: Միաժամանակ, կարող են խնդիրներ առաջանալ ներպետական միջոցների սպառման տեսանկյունից, քանի որ անդամ պետությունների մեծ մասում ընկերության բաժնետերերը նման իրավասություն չունեն:

Արդյունքում, ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ բաժնետերերին նման իրավունք պետք է ընձեռնվի միայն բացառիկ դեպքերում: Մասնավորապես, երբ հաստատվի, որ ընկերությունը գրկված է իր կառավարման մարմինների կամ լուծարման դեպքում սնանկության կառավարչի միջոցով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Նշված գործով Եվրոպական դատարանը հաստատված համարեց, որ առկա չէ որևէ իրավական պատճառ, թե ինչու ընկերության իրավունք-

ների պաշտպանությամբ չպետք է հանդես գա սնանկության կտրա-վարիչը, ինչպես նաև չհիմնավորվեց, որ վերջինս ոչ պատշաճ էր կա-տարում իր պարտականությունները (տես նաև *Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy*, 07/06/2012 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 38433/09, կետ 92):

ՄԻԵԴ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի սուբյեկտների շրջա-նակում ընդգրկված են նաև հասարակական կազմակերպությունները և անձանց խմբերը, եթե ՄԻԵԿ կամ արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների խախտման գոհ են (*ՄԻԵԿ հ.34*): Հատկանշական է, որ 2014 թ. ՄԻԵԴ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ առանձնահա-տուկ դեպքերում հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ նաև այլ անձանց շահերի պաշտպանությամբ (բացառիկ խոցելի անձանց, որոնք ի վիճակի չեն հանդես գալու իրենց անունից, և բացակայում է որևէ այլ անձ, որը կարող է դա անել) (տես *Centre for Legal Resources On Behalf of Valentin Câmpeanu v. Romania*, 17/07/2014 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 47848/08, կետ 110–114):

Թեմա 2: Պետության պոզիտիվ պարտավորությունը

Նշված թեմայի շրջանակներում կներկայացվեն անձի իրավունքների պաշտպանության մեխանիզմներ (կանխարգելիչ մեխանիզմներ, հասց-ված վնասի հատուցման մեխանիզմներ)՝ ապահովելու ՄԻԵԿ անդամ պետությունների պոզիտիվ պարտավորության էությունը, դրսևորման եղանակները:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի զարգացման առաջին շրջա-նում անձի սեփականության իրավունքը պաշտպանության տակ էր առնվում միայն այն դեպքերում, երբ պետության կողմից առկա էր ան-միջական միջամտություն անձի սեփականության իրավունքին: Սակայն հետագայում անձի սեփականության իրավունքի պաշտպանության կոնվենցիոն մեխանիզմների գործողության շրջանակներն ընդլայնվե-ցին՝ դրանք տարածելով նաև մասնավոր անձանց միջև վեճերի վրա:

Մասնավորապես, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածով երաշխավորված անձի

սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքը այլ անձանց ոտնձգություններից (տես *Sovtransauro holding v. Ukraine*, 25/07/2002 թ. վճիռ, գանգապ թիվ 48553/99, կետ 96, *James and others v. UK* 21/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79):

Այսպես, որպես պետության պոզիտիվ պարտավորության իրացման մեխանիզմների տեսակներ՝ կարելի է առանձնացնել կանխարգելիչ մեխանիզմը և հասցված վնասի հատուցման մեխանիզմը:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Դատական և գործնական միջոցներ ձեռնարկելու պարտականություն

Broniowski v. Poland (2004) գործով դիմումատուին ազգային օրենսդրությամբ, իսկ հետագայում նաև դատական ակտով ընձեռնվել էր սեփականության իրավունքի դադարման դիմաց հատուցում ստանալու հնարավորություն: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում անձը զրկվել էր հատուցում ստանալու իրավունքից, իսկ հետագայում այն վերականգնվել էր, սակայն բացակայում էին դրանք կյանքի կոչելու համար անհրաժեշտ վարչարարական մեխանիզմները: Հետագայում օրենսդրությունում առկա բացը լրացվել էր, և անձը հնարավորություն էր ստացել իրացնելու վնասների հատուցում ստանալու իր իրավունքը: Նշված գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ բացակայում է թե՛ անձին սեփականության իրավունքից զրկելու (երկրորդ նորմ) և թե՛ գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության (երրորդ նորմ) դեպքերը, և արձանագրեց հոդվածի 1-ին նորմի խախտում: Դատարանը գտավ, որ պետության կողմից չէր իրականացվել իր պոզիտիվ պարտավորությունը:

Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրեց. «*Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված օրենքի գերակայության և օրինականության սկզբունքները պետությունից պահանջում են ոչ միայն տեսանելի և հետևողական ձևով հարգել և կիրառել օրենքները, որոնք նրանք ընդունել են, այլ նաև ապահովել դրանց կատարման*

իրավական և գործնական պայմաններ: ...Լեհական իշխանությունները պարտավոր էին վերացնել օրենքի տառի և պետական պրակտիկայի միջև առկա անհամապատասխանությունը, որը խոչընդոտել է դիմումատիրոջ սեփականության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Վերոնշյալ սկզբունքները պահանջում են նաև ողջամիտ ժամկետում պարզաճ և հետևողական եղանակով կատարել օրենսդրական խոստումները: Վերջինս բխում է հանրային և ընդհանուր շահից» (տես *Broniowski v. Poland*, 22/06/2004 թ. վճիռ, գանգապ թիվ 31443/96, կետ 184):

2. Ընթացակարգային երաշխիքների ապահովում

Sovtransavto v. Ukraine (2002) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ պետությունը պարտավոր է նախատեսել դատական ընթացակարգեր, որոնք սահմանում են անհրաժեշտ դատավարական երաշխիքներ, և հետևաբար նաև դատարաններին հնարավորություն են ընձեռում արդար և արդյունավետ կերպով քննելու մասնավոր անձանց միջև ծագած վեճերը:

Նշված պարտավորությունը առկա է թե՛ անհատների և թե՛ անհատների ու պետական մարմինների միջև ծագած վեճերի դեպքում: Սա նշանակում է, որ ՄԻԵԿ 6–րդ հոդվածով նախատեսված պահանջները կիրառելի են նաև այս դեպքում¹:

Դասընթացի ընթացքում կներկայացվեն նաև՝

- *Ceni v. Italy* (2014) գործը: Նշված գործով, ՄԻԵԴ–ը, քննարկման առարկա դարձնելով սնանկության կառավարչի կողմից նախնական պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափության հարցը, արձանագրել է. «Դիմումատիրոջ չունեղ որևէ հնարավորություն գնահատման առարկա դարձնելու սնանկության կառավարչի գործողությունների համաչափությունը՝ հաշվի առնելով, որ վերջինս գործել է հայեցողական լիազորությունների շրջանակներում, ինչը դատական հսկողությունից դուրս է: Հիմք ընդունելով վե-

¹ Jean–François Akandji–Kombe, *Human rights handbook*, No. 7: Positive obligations under the European Convention on Human Rights. A guide to the implementation of the European Convention on Human Rights, Strasbourg, Council of Europe, 2007.

րոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ Պեպոյթյան կողմից չի ապահովվել 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված պոզիտիվ պարտավորությունը» (տե՛ս *Ceni v. Italy*, 04/02/2014 թ. վճիռ, գանգապ թիվ 25376/06, կետ 74, 75):

- *O. N. v. Bulgaria* (2000) գործը, որով քննարկման առարկա է դարձել մասնավոր անձանց միջև վեճերով պետության պոզիտիվ պարտավորության շրջանակները: Նշված գործով Դատարանն արձանագրել է, որ «Պեպոյթյան վրա օրենսդրական կամ դատական կարգով գնաճի և դրամի արժեզրկման դեմ իրավական պաշտպանության միջոցներ նախատեսելու պոզիտիվ պարտավորություն դնելը նույնն է, ինչ պեպոյթյանը պարտադրես երաշխավորելու գույքի արժեքը անկախ գնաճից կամ այլ տնտեսական իրավիճակներից» (տե՛ս *O. N. v. Bulgaria*, 06/04/2000 թ. ՄԻԵԴ որոշում, գանգապ թիվ 35221/97):

ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ինչպես նշվեց վերևում, ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պետությունը պոզիտիվ պարտավորություն է կրում՝ հատուցելու միջամտության արդյունքում այլ անձանց հասցված վնասները:

ՄԻԵԴ-ը նշված հարցին անդրադարձել է *Blumberga v. Latvia* (2008) գործով՝ արձանագրելով. «Իրավունքի ցանկացած սահմանափակում, որը իրականացվել է ֆիզիկական անձի կողմից, պեպոյթյան համար առաջացնում է պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու անձի իրավունքների պաշտպանությունը ազգային օրենսդրությամբ սահմանված արդյունավետ մեխանիզմների միջոցով, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում ապահովելու վնասների հատուցման իրավունքը» (տե՛ս *Blumberga v. Latvia*, 14.10.2008 թ. վճիռ, գանգապ թիվ 70930/01, կետ 67):

Ի դեպ, վնասների հատուցումը նախ և առաջ պետք է լինի համաչափ այն գույքի արժեքին, որն անձը կորցրել է միջամտության արդյունքում (ամբողջական հատուցումը պարտադիր չէ): Բացի այդ՝ այն պետք է վճարվի ողջամիտ ժամկետում (տե՛ս *Human rights handbook*, No. 4:

The right to property. A guide to the implementation of Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights, Strasbourg, Council of Europe, 2001):

ԴԱՍ 3

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական երաշխիքների ապահովման հարցում

Նշված թեմայի շրջանակներում անդրադարձ կկատարվի «մասնակցային և ոչ մասնակցային նպաստներին» (կենսաթոշակային համակարգերին), դրանց կարգավորման առանձնահատկություններին, ՄԻԵԴ-ի կողմից «մասնակցային նպաստները» որպես «գույք» որակելու հիմքում ընկած հիմնավորումներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սկզբնապես ամրագրել է դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական նպաստ կամ թոշակ ստանալու իրավունքով չի օժտել: Միաժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ որոշակի իրավունքներ կարող են ծագել այն դեպքում, երբ ուղղակի կապ է եղել կատարված վճարումների և նշանակված նպաստների միջև (տե՛ս *De Kleine Staarman v. The Netherlands* (1985)):

Նշված դիրքորոշումը պայմանավորվել է մասնակցային նպաստների անձնական և սոցիալական բնույթով, ինչպես նաև մասնավոր ապահովագրական համակարգերի հետ նմանությամբ (տե՛ս *Deumeland v. Germany* (1986)):

Սակայն ՄԻԵԴ-ի պրակտիկան հետագայում հանգում է այն տրամաբանության, որ սոցիալական նպաստը, նույնիսկ ոչ մասնակցային համակարգերում, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է համարվել «գույք»: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը նշել է, որ, օրինակ, հիմնավորված չէ դուրս թողնել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության շրջանակներից այն նպաստները, որոնք գոյացել են ընդհանուր հարկահավաքման միջոցով, քանի որ նման մոտեցումը կնշանակեր անտեսել այն փաստը, որ այս վերջին տեսակի համակարգով բազմաթիվ դիմողներ նաև մասնակցում են սոցիալական համակարգի ֆինանսավորմանը՝ հարկեր վճարելու միջոցով:

Արդյունքում, ՄԻԵԴ-ի դիրքորոշումն այս գործերով հանգել է նրան, որ այն դեպքում, երբ անհատը, ներպետական օրենսդրության համա-

ձայն, սոցիալական ապահովության նպաստ ստանալու վկայակոչելի իրավունք ունի, այդ իրավունքի նկատմամբ պետք է կիրառելի լինի Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, և եթե որևէ մասնակից պետություն ունի գործող օրենսդրություն, որը սոցիալական նպաստի վճարումը նախատեսում է որպես իրավունք (անկախ մասնակցային համակարգի առկայությունից), այդպիսի օրենսդրությունն առաջացնում է գույքային շահ, որը տեղավորվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սահմաններում այն անձանց համար, ովքեր բավարարում են համապատասխան հոդվածի պահանջները:

Stec and others v. United Kingdom (2005) գործով ոչ մասնակցային նպաստները ՄԻԵԿ իմաստով որպես սեփականություն գնահատելիս ՄԻԵԴ-ն առաջնորդվել է.

1. Կոնվենցիան որպես մեկ ամբողջություն ընկալելու, միասնականություն և ներդաշնակեցում ապահովելու անհրաժեշտությամբ.

Մասնավորապես, ՄԻԵԴ-ն արձանագրել է. ««Գույքի» ինքնուրույն հայեցակարգը հարկ է մեկնաբանել այնպիսի եղանակով, որը համահունչ է 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրամական իրավունքների հայեցակարգին: Առավել ևս կարևոր է որդեգրել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այնպիսի մեկնաբանություն, որը զերծ կպահի վերաբերմունքի հարցում այնպիսի փարբերակումների հիման վրա անհավասարություններից, որոնք մեր օրերում համարվում են անփրամաբանական և ոչ հարարև» (տե՛ս *Stec and others v. United Kingdom*, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգապ թիվ 65731/01, 65900/01, կետ 49):

«Օրենքի հետագա մշակումը և վերաբերմունքի հավասարության սկզբունքը հիմնավորում են այն տեսակետը, որ այսօր ընդհանուր կանոնն այն է, որը 6-րդ հոդվածի 1-ին կետն իսկապես կիրառելի է սոցիալական ապահովագրության ոլորտում, ներառյալ՝ անգամ սոցիալական ապահովության օժանդակությունը» (տե՛ս *Stec and others v. United Kingdom*, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգապ թիվ 65731/01, 65900/01, կետ 48):

2. Որոշակիության և անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ.

ՄԻԵԴ–ն արձանագրել է. «Քազմաթիվ անհատներ իրենց ողջ կյանքի ընթացքում կամ որոշակի հատվածում գոյապահման համար ամբողջովին կախված են սոցիալական ապահովության նպաստներից: Քազմաթիվ ներպետական իրավական համակարգեր ընդունում են, որ այսպիսի անհատները որոշակիության և անվտանգության կարիք ունեն, և նախատեսվում են նպաստներ, որոնք պետք է վճարվեն որպես իրավունք՝ որոշակի պայմանների բավարարման դեպքում» (տես *Stec and others v. United Kingdom*, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգապ թիվ 65731/01, 65900/01, կետ 51):

3. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում սոցիալական ապահովության կազմակերպման իրավական եղանակի հաշվառմամբ (տես *Stec and others v. United Kingdom*, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգապ թիվ 65731/01, 65900/01, կետ 50):

Խոսքն այն մասին է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, հատկապես նախկին խորհրդային պետություններում գործում է հենց ոչ մասնակցային սոցիալական նպաստների համակարգ:

Միաժամանակ, ՄԻԵԴ–ը, սոցիալական երաշխիքների ապահովման հարցում նույնպես կիրառելով *Kopecský v. Slovakia* (2004) գործով սահմանած սկզբունքը, արձանագրել է, որ հասկանալու համար սոցիալական ապահովության որևէ նպաստ «գույք» է, թե ոչ, պետք է պարզել, թե դիմողը ներպետական օրենսդրությամբ ունի այդ իրավունքը, թե ոչ (տես *Stec and others v. United Kingdom*, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգապ թիվ 65731/01, 65900/01, կետ 54): Մասնավորապես, հատկանշական է, որ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածը չի ստեղծում սեփականություն ձեռք բերելու իրավունք և որևէ սահմանափակման չի ենթարկում մասնակից պետության ազատությունը՝ որոշելու՝ ունենալ սոցիալական ապահովության համակարգի որևէ տարբերակ, թե ոչ: Եթե, այնուհանդերձ, մասնակից պետությունը ունի գործող օրենսդրություն, որը սոցիալական նպաստի վճարումը նախատեսում է որպես իրավունք (մասնակցային կամ ոչ մասնակցային), հարկ է համարել, որ այդպիսի օրենսդրությունն առաջացնում է գույքային շահ, որը տեղավորվում է 1–ին հոդվածի սահմաններում այն անձանց համար, ովքեր բավարարում են այդ հոդվածի պահանջները (տես *Kopecský v. Slo-*

vakia, 28/09/2004 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 44912/98, կետ 35):

Դասընթացում անդրադարձ կկատարվի նաև քաղաքացիության հիմքով կենսաթոշակից զրկելու դեպքերին, ինչը ՄԻԵԴ–ի կողմից որակվել է որպես հողվածի խախտում (Luczak v. Poland (2007)):

Անդրադարձ կկատարվի նաև այն իրավական հարցադրմանը, թե արդյոք սխալմամբ կենսաթոշակի վճարումը պետության մոտ առաջացնում է վճարված գումարը հետ վերադարձնելու պահանջի իրավունք: Մասնավորապես Moskal v. Poland (2009) գործով նման իրավունքի նախատեսումը ՄԻԵԴ–ի կողմից որակվել է որպես *անհամաչափ բեռ (excessive burden)*:

Անդրադարձ կկատարվի նաև ՀՀ–ում դատավորների ու դատախազների նկատմամբ տարվող սոցիալական քաղաքականությանը, որի արդյունքում նոր ընդունվող օրենքները հետադարձ կերպով կիրառվում են այս խմբերի նկատմամբ (տես *Manukyan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգապ թիվ 44326/13, Dzvakeryan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգապ թիվ 44331/13, Asatryan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգապ թիվ 44335/13, Gabrielyan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգապ թիվ 44338/13*):

ԴԱՍ 4

Թեև: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածը ձեռնարկատիրական գործունեության իրականացման ոլորտում

Նշված թեմայի շրջանակներում կներկայացվեն բաժնետոմսերը, արտոնագրերից, լիցենզիաներից բխող տնտեսական շահը, սեփական գույքից շահույթ ստանալու իրավունքը, նախնական պայմանագրից բխող իրավունքները որպես «գույք» որակելու ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան:

Մասնավորապես, ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով «գույք» են որակվել քաղաքացիական իրավունքի

այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են բաժնետոմսերը, շահաբաժինները, արտոնագրերից, լիցենզիաներից բխող տնտեսական շահը, սեփական գույքից շահույթ ստանալու իրավունքը, նախնական պայմանագրից բխող իրավունքները, բարի համբավը և այլն:

Բաժնետոմսեր

ՄԻԵԴ-ը բաժնետոմսերին, որպես թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանության տակ առնվող օբյեկտներ, անդրադարձել է *Bramelid and Malmström v. Sweden* (1982) գործով: Նշված գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուները Շվեդիայում գտնվող հայտնի հանրախանութի բաժնետերերն էին: 1977 թ. ընդունվել է «Ընկերությունների մասին» ակտ, որը սահմանում էր, որ ցանկացած ընկերություն, որը մեկ այլ ընկերությունում տիրապետում է 90 %-ից ավելի ձայների և բաժնետոմսերի, իրավունք ունի պարտադրելու քիչ թվաքանակ կազմող բաժնետերերին վաճառել իրենց բաժնետոմսերը այն նույն գնով, ինչ դրանք կվաճառվեին հրապարակային սակարկությունների արդունքում կամ արբիտրաժային համաձայնության արդյունքում: Բաժնետոմսերի քիչ մասին տիրապետող բաժնետերերը, դիմելով ՄԻԵԴ, գանգատարկել են նոր օրենքի կիրառումը իրենց նկատմամբ: Նրանք մասնավորապես պնդել են, որ ստիպված են եղել հրաժարվել իրենց բաժնետոմսերից՝ վաճառելով դրանք շուկայական արժեքից ցածր արժեքով:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք բաժնետոմսերը ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող են որակվել որպես «գույք», ՄԻԵԴ-ն արձանագրել է. *«Բաժնետիրոջը հավասարազոր է առ այն, որ այն տիրապետողը պարտավորվում է ընկերության սեփականության մեջ ունենալ իր մասնակցությունը և համապարասխանաբար վերջինիս օժտում է ձայնի իրավունքով, ինչպես նաև ենթադրում է անուղղակի պահանջի իրավունք ընկերության միջոցների նկատմամբ»* (տե՛ս *Bramelid and Malmström v. Sweden*, 12/10/1982 թ. Հանձնաժողովի որոշում, գանգապ թիվ 8588/79, 8589/79): Նշված գործը կարևորվել է նաև այն հանգամանքով, որ ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ Կոնվենցիան կիրառելի է նաև մասնավոր անձանց միջև ծագած

իրավահարաբերություններում²:

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

Արտոնագրերին անդրադառնալու կարևորությունը բացատրվում է այն հանգամանքով, որ գերակշռում է այն կարծիքը, որ թույլտվությունները, լիցենզիաները, ինչպես նաև մասնագիտական գործունեության արտոնագրերը ցանկացած դեպքում Կոնվենցիայի իմաստով համարվում են սեփականության իրավունք: Մինչդեռ, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայով պաշտպանության տակ է առնվում միայն տնտեսական շահը, որը ծագում է վերոնշյալ արտոնագրերի իրավատերերի մեջ:

Այսպես, ՄԻԵԴ դատական պրակտիկայից կարելի է առանձնացնել Tre Traktorer Aktiebolag v Sweden (1989) գործը, որով դատարանը **տնտեսական շահը** ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով որակեց որպես սեփականության իրավունք:

Նշված գործի փաստերի համաձայն՝ դիմումատուն շվեդական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն էր, որը 1980 թ. ձեռք էր բերել «Լը Կարդինալ» ռեստորանը կառավարելու իրավունք: Մինչև այդ իրավունքի ձեռքբերումը ռեստորանն ուներ ակրոհոլային խմիչքներ վաճառելու թույլտվություն: Հարկային ստուգումների արդյունքում որոշում կայացվեց կասեցնելու ակրոհոլային խմիչքների վաճառքի լիցենզիան: Արդյունքում, ՍՊԸ-ն ստիպված էր դադարեցնել ռեստորանի գործունեությունը, իսկ այնուհետև նաև վաճառել այն շուկայականից խիստ ցածր գնով: ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ, ունենալով տնտեսական արժեք, արտոնագիրը ընդգրկվում է սեփականության իրավունքի հասկացության մեջ, քանի որ արտոնագրի առկայությունը բիզնեսով զբաղվելու կարևոր նախապայման էր, իսկ արտոնագրի կասեցումը բացասական ազդեցություն ունեցավ ընկերության գործունեության վրա, և հետևաբար արտոնագրի կասեցումը պետք է դիտարկվի որպես սեփականության իրավունքի իրացման միջամտություն:

² Monica Carss-Frisk, A guide to the implementation of the European convention on human rights and its protocols. The right to property under the European Convention on human rights, Human rights handbooks, N 4.

Եվրոպական դատարանը մասնավորապես արձանագրեց. ««Կարդինալ» ռեստորանի շահագործման հետ կապված տնտեսական շահերը գույք են՝ համաձայն Կոնվենցիայի: Արտոնագրի պահպանումը բիզնեսի շարունակման առումով առանցքային պայմաններից մեկն է, և դրա չեղյալ հայտարարումը ունեցել է վնասակար հետևանքներ ռեստորանի «գուղվիլի» և արժեքի վրա» (տե՛ս *Tre Traktorer Aktiebolag v Sweden*, 07/07/1989 թ. վճիռ, գանգադ թիվ 10873/84, կետ 53):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Պետությանը հաջողվել է պահպանել արդարացի հավասարակշռություն ընկերության տնտեսական շահերի և սեփական երկրի քաղաքացիների ակտիվի սպառման Շվեդիայի սոցիալական քաղաքականության միջև:

Մեկ այլ՝ *Centro Europa 7 S. R. L. and Di Stefano v. Italy* (2012) գործով հեռարձակման արտոնագրի հետ կապված տնտեսական շահը Եվրոպական դատարանի կողմից ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով որակվեց որպես «գույք»: Այս գործի առանձնահատկությունը այն էր, որ դիմողը ոչ թե զրկվել էր հեռարձակման արտոնագրից, այլ պետական մարմինների կողմից չէին ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ, որոնք դիմողին թույլ կտային սկսել այդ արտոնագրից բխող գործունեությունը: Մասնավորապես, դիմող ընկերությունը, արտոնագիր ունենալով հանդերձ, զրկված էր հեռարձակում ապահովելու հնարավորությունից, քանի որ նրան չէր տրամադրվել որևէ հաճախականություն: Իսկ Իտալիայի վարչական դատարանները դիրքորոշում հայտնեցին այն մասին, որ արտոնագրի առկայությունը դիմողին չի օժտում հեռարձակման հաճախականություններ ստանալու իրավունքով:

Նշված գործով ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ չնայած նախորդ գործերով դատարանը որպես Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքին միջամտություն է որակել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արտոնագրերի դադարեցումը (տե՛ս *Tre Traktörer AB v. Sweden* (1989), կետ 53, *Capital Bank AD v. Bulgaria*, կետ 130, *Rosenzweig and Bonded Warehouses Ltd v. Poland* (2005), կետ 49, և *Bimer S. A. v. Moldova* (2007) կետ 49), իսկ այս գործում դիմումատուին տրված արտոնագիրը փաստացի չէր դադարել, սակայն առանց հեռարձակման հաճախականություններ տրամադրելու

այն կորցնում էր իր էությունը: Միաժամանակ, Եվրոպական դատարանը գտավ, որ արտոնագրի շահագործման հետ կապված շահը գույքային շահ է, որը պաշտպանվում է Կոնվենցիայի 1–ին արձանագրության 1–ին հոդվածով: Հետևաբար, դիմող ընկերության օրինական ակնկալիքները, որոնք կապված էին գույքային շահերի հետ, որպիսին արտոնագրի ուժով հեռուստատեսային ցանցի գործարկումն էր, ունեին բավարար հիմք, որպեսզի որակվեն որպես ծանրակշիռ շահ և այդպիսով՝ «գույք» (տես *Centro Europa 7 S. R. L. and Di Stefano v. Italy*, 07/06/2012 թ. Մեծ պալատի վճիռ, գանգալի թիվ 38433/09, կետ 77–79):

Ինչ վերաբերում է մասնագիտական գործունեության արտոնագրերին, ապա Հայաստանում այս հարցի արդիականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ քիչ չեն դատական վեճերն այս հարցի շուրջ, և մասնագետների մի ստվար զանգված այն կարծիքին է, որ նման արտոնագրերը կամ թույլտվությունները (օրինակ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր) ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով «գույք» են, այն շնորհիվու պահից դրա իրավատիրոջ մեջ ծագում է սեփականության իրավունք, և հետևաբար դրա վրա տարածվում են սեփականության իրավունքի պաշտպանության մեխանիզմները:

Մինչդեռ, ՄԻԵԿ–ը, անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է, որ մասնագիտական գործունեության արտոնագրերը պաշտպանության տակ են առնվում միայն այն դեպքում, երբ դրանց իրավատերը ձևավորել է հաճախորդներ: Այսինքն՝ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով որպես «գույք» կարող է որակվել ոչ թե ինքնին արտոնագիրը, այլ այն տնտեսական շահը, որը կարող է ձևավորվել արտոնագրի հիման վրա:

Մասնավորապես, ՄԻԵԿ–ը գործերից մեկով, գնահատման առարկա դարձնելով պետական լիազոր մարմնի կողմից հաշվապահական լիցենզիայի տրամադրումը մերժելու իրավաչափությունը, արձանագրել է. «Թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի կիրառելիությունը տարածվում է մասնագիտական գործունեության տեսակների վրա, որոնց դեպքում դիմումատու ձևավորել է հաճախորդներ, քանի որ դրանք ունեն մասնավոր իրավունքների բնույթ, հանդիսանում են ակտիվներ, հեղաբար, 1–ին հոդվածի իմաստից ելնելով՝ գույք» (տես *Van Marle and*

Others v. the Netherlands, 26/06/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8543/79, 8674/79, 8675/79, 8685/79, կետ 41):

Մեկ այլ դեպքում՝ ՄԻԵԴ–ի կողմից քննության էր առնվել մի գործ, որով դիմումատուն, որը մասնագիտությամբ բժիշկ էր, հանվել էր Ազգային առողջապահական ծառայության ցուցակից: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ մասնագիտական գործունեության իրականացման միջամտությունը առկա է, եթե կիրառված միջոցները ազդեցություն են ունենում մասնագիտական գործունեության պայմանների վրա, նվազեցնում են դրանց իրականացման շրջանակները, և որպես հետևանք՝ անկում են ապրում դիմումատուի եկամուտը, հաճախորդների և բիզնեսի արժեքը (տե՛ս *Malik v. The United Kingdom*, 13/03/2012 թ. վճիռ, գանգապ թիվ 23780/08, կետ 90, 105):

Միաժամանակ, նշված գործով Եվրոպական դատարանը ընդգծեց նաև պետական միջամտության արդյունքում դիմումատուի ֆինանսական դրության բացասական ազդեցությունը հիմնավորելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը, մերժելով դիմումատուի գանգատը, վճռի հիմքում դրեց նաև այն հանգամանքը, որ նույնիսկ եթե կիրառված միջոցի արդյունքում կրճատվել է հաճախորդների քանակը, դիմումատուն չի հիմնավորել, որ այն ուղղակի ազդեցություն է ունեցել իր ֆինանսական դրության վրա:

Սեփական գույքից շահույթ ստանալու իրավունք

Դատարանն անդրադարձել և ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով «գույք» է որակել նաև անձի՝ սեփական գույքից շահույթ ստանալու իրավունքը: Մասնավորապես, *Bitto and others v. Slovakia* (2014) գործով պետության կողմից բնակարանի վարձակալության առավելագույն չափի սահմանումը գնահատվել է որպես սեփական գույքից շահույթ ստանալու իրավունքի և հետևաբար ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի խախտում:

Նախնական պայմանագրից բխող իրավունքներ

Ceni v. Italy (2014) գործով Եվրոպական դատարանն անդրադարձել է նաև նախնական պայմանագրից բխող իրավունքներին: Մասնավորապես, Եվրոպական դատարանը գնահատման առարկա է դարձրել սնանկության կառավարչի կողմից սնանկ ճանաչված անձի կողմից

նախկինում կնքված՝ նախնական պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափության հարցը: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց. «Դատարանը կարծում է, որ սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ դիմումատուի «Իրավաչափ ակնկալիքը», որը վերաբերում է այնպիսի գույքային շահի, ինչպիսին են նախնական պայմանագրով նախատեսված գումարի ամբողջական վճարումը և բնակարանն իր տիրապետմանը հանձնելը, բավարար է հաստատված համարելու, որ առկա է նյութական շահ, հետևաբար նաև թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ «գույք» (տե՛ս Ceni v. Italy, 04/02/2014 թ. վճիռ, գանգապ թիվ 25376/06, կետ 44):

ԴԱՍ 5

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը մտավոր սեփականության ոլորտում

Նշված թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն մտավոր գործունեության արդյունքների և անհատականացման միջոցների նկատմամբ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիության շրջանակները, համապատասխան ոլորտում ձևավորված ՄԻԵԴ նախադեպային իրավունքը: Մասնավորապես կներկայացվեն մտավոր սեփականության այնպիսի օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան, ինչպիսիք են՝ ապրանքային նշանը, գյուտը, օգտակար մոդելները, ինչպես նաև հեղինակային իրավունքի օբյեկտները:

Արձանագրության վավերացումից բավականին երկար ժամանակ 1-ին հոդվածով երաշխավորված գույքից անարգել օգտվելու իրավունքը Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների շարքում համարվում էր ամենաթույլ օղակը: Մասնավորապես անդամ պետություններին տրված էր լայն հայեցողություն՝ կարգավորելու մասնավոր սեփականության հետ կապված հարցերը հանրային շահի հաշվառմամբ³: Հիմնականում դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ հաջորդող տասնամյակների ընթացքում մինչև 1990-ականները մտավոր սեփականության օբյեկտների իրավատերերը ձեռնպահ էին մնում նման հարցերով դիմումներ ներկայացնելուց, իսկ ներկայացված դիմումները համատարած կերպով մերժվում էին: Այդ է պատճառը, որ քաղաքացիական շրջանառության այլ օբյեկտների հետ համեմատած մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ ՄԻԵԴ վճիռների քանակը բավական փոքր է: Իրավիճակը փոխվեց, և վերջին տասնամյակում Եվրոպական դատարանը անդրադարձավ և քննարկման առարկա դարձրեց այս ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ:

1990-ականներին երեք գործերով կայացված վճիռներով Հանձնաժողովն արձանագրեց, որ արտոնագրերը և հեղինակային իրավունք-

³ Arjen van Rijn, Right to the Peaceful Enjoyment of One's Possessions, in Theory and practice of the European Convention on Human Rights, 863, 864, 4ed, 2006.

ները ներառված են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառման ոլորտում: Սակայն, Եվրոպական դատարանն այս հարցին համապարփակ ձևով անդրադարձավ միայն *Anheuser–busch INC. v. Portugal* (2007) գործով: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ մտավոր սեփականությունը օգտվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության մեխանիզմներից: Այսպես, Եվրոպական դատարանը անվերապահորեն արձանագրեց, որ սեփականության իրավունքով պաշտպանվում են մտավոր սեփականության օբյեկտների իրավատերերի ֆինանսական շահերը: ՄԻԵԴ-ի նման տեսակետը իր հիմնավորումն է գտել մտավոր սեփականության վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջին որոշման մեջ: Մասնավորապես, Հանձնաժողովը, քննելով արտոնագրային իրավունքի վերաբերյալ վեճը (տե՛ս *Smith Kline and French Laboratories Ltd v. Netherlands* (1990)) և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հոլանդիայի օրենսդրության համաձայն՝ արտոնագիրը դրա իրավատիրոջ անձնական սեփականությունն է, որը կարող է փոխանցվել և օտարվել, արձանագրեց, որ արտոնագիրը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվում է «գույք» (տե՛ս *Smith Kline and French Laboratories Ltd v Netherlands, 04/10/1990* թ. ՄԻԵԴ որոշում, գանգառ թիվ 12633/87):

Հանձնաժողովի նշված պատճառաբանությունից կարելի է եզրահանգել, որ ՄԻԵԴ-ը մեծապես կարևորում է մտավոր սեփականության օբյեկտների իրավատերերին ազգային օրենսդրությամբ տրված՝ օգտագործելու և տնօրինելու բացառիկ իրավունքների առկայությունը⁴: Քանի որ նշված բացառիկ իրավունքները վերագրելի են մտավոր սեփականության թե՛ ազգային և թե՛ միջազգային իրավական համակարգերին, կարելի է եզրակացնել, որ ՄԻԵԴ-ը նույն մոտեցումը կորդեգրի նաև մտավոր սեփականության մյուս օբյեկտների նկատմամբ (առևտրային գաղտնիքներ, ինտեգրալ միկրոսխեմաներ, սելեկցիոն նվաճումներ, կատարողների իրավունքներ և այլն):

Այս ոլորտի առավել կարևոր գործերից է *Anheuser–busch INC. v. Portugal* (2007) գործը, որը վերաբերում էր ապրանքային նշաններին: Նշված գործով ապրանքային նշանը ՄԻԵԴ թիվ 1 արձանագրության

⁴ Laurent Sermet, *The European convention on human rights and property rights*, 13 (1998).

1-ին հոդվածի իմաստով որակվեց որպես «գույք»: Բացի այդ՝ Եվրոպական դատարանը անդրադարձավ և գնահատման առարկա դարձրեց հարցադրումն այն մասին, թե արդյոք ապրանքային նշանի գրանցման հայտի ներկայացման փուլում անձն ունի Կոնվենցիայի նշված հոդվածի ուժով պահպանվող իրավունք: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրեց. «Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը տարածվում է նաև ապրանքային նշանի գրանցման հայտի նկատմամբ: Չնայած ապրանքային նշանի գրանցումը վերջնական է և ունի իրավական ուժ, եթե դրանով չեն խախտվում այլ անձանց իրավունքները, հետևաբար դրա գրանցման հայտի հետ կապված իրավունքները դառնում են պայմանական, այդուհանդերձ հաստատվում, որը ցանկանում էր գրանցել ապրանքային նշանը, կարող էր սպասելիք ունենալ, որ հայտը գնահատման առարկա կդարձվեր գործող օրենսդրության համապատասխան (և կգրանցվեր), եթե այն համապատասխաներ վերաբերելի նյութական և ընթակարգային նորմերին» (տե՛ս Anheuser–busch INC. v. Portugal, 11/01/2007 թ. Մեծ պալատի վճիռ, գանգալ թիվ 73049/01, կետ 78):

Եվրոպական դատարանը վերոնշյալ դատողություններով ամրապնդում է դիրքորոշումն այն մասին, որ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների ծագման և դրանց պահպանության միակ նախապայմանը համապատասխան պետական մարմնում դրա գրացված լինելը չէ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքով անդրադարձել է նաև հեղինակային իրավունքներին:

Մասնավորապես, Dima v. Romania (2005) գործը վերաբերում էր պաշտոնական խորհրդանիշների իրավական պահպանությանը հեղինակային իրավունքի շրջանակներում:

Նշված գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուն 1989 թ. մասնակցել էր Ռումինիայի պետական զինանշանի ստեղծման համար անցկացված մրցույթին: Հետագայում նրա կողմից ստեղծված պատկերը որոշակի փոփոխություններով օրենսդիր իշխանության կողմից հաստատվեց որպես պետական զինանշան: Դիմումատուն երբեք որևէ ֆինանսական հատուցում չէր ստացել իր աշխատան-

քի արդյունքն օգտագործելու համար: Պատկերը իր անվամբ գրանցելու դիմումատուի փորձերը չեն հաջողվել: Գրանցումը մերժվել է այն հիմքով, որ Ռումինիայի օրենսդրության համաձայն (ընդունված 1996 թ.)՝ պետական զինանշանները հեղինակային իրավունքի օբյեկտներ չեն: 1956 թ. ընդունված և պատկերի ստեղծման պահին գործող «Հեղինակային իրավունքների վերաբերյալ» օրենքով պետական զինանշանների վերաբերյալ հատուկ կարգավորում նախատեսված չէր:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ *դիմումատուն չուներ «իրավաչափ ակնկալիք»՝ որպես հեղինակ «ձեռք բերելու սեփականության իրավունք», որովհետև պարզ չէ, թե պաշտոնական խորհրդանիշը* հեղինակային իրավունքի *օբյեկտ է, թե՛ ոչ*: Եվրոպական դատարանն ավելացրեց, որ բոլոր այն դեպքերում, երբ հեղինակային իրավունքների առկայությունը կամ ծավալը անորոշ է, այդ հարցը պետք է լուծում ստանա ազգային դատարանների մակարդակով: Դիմումատուի «Իրավաչափ ակնկալիքի» բացակայությունը հիմնավորվեց այն հանգամանքով, որ նույնիսկ մինչև նոր օրենքի ընդունումը (1996 թ.) դիմումատուն չուներ ողջամիտ հիմք՝ ենթադրելու, որ 1956 թվականի օրենքի ուժով ունի բավարար իրավական հիմք իր կողմից ստեղծված պատկերի մասով հայցելու հեղինակային իրավունքների պաշտպանություն: Չկար որևէ դատական ակտ կամ նախադեպ, որով սահմանված լիներ, որ պետական խորհրդանիշները պահպանվում են հեղինակային իրավունքով (տե՛ս *Dima v. Romania*, 26/05/2005 թ. ՄԻԵԴ որոշում, գանձապ թիվ 58472/00):

Հարց է ծագում, թե արդյոք պաշտպանության տակ են առնվում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատերերի միայն գույքային, թե նաև ոչ գույքային իրավունքները: Այս հարցին Եվրոպական դատարանը չանդրադարձավ, քանի որ նշված գործով դիմումատուի կողմից բարձրացվել էր հենց գույքային իրավունքների խախտման հարցը: Հարկ է ընդգծել, որ գերակշռում է այն կարծիքը, որ ոչ գույքային իրավունքները օգտվում են ավելի բարձր պաշտպանության երաշխիքներից, քան գույքային իրավունքները, քանի որ ոչ գույքային իրավունքները պաշտպանում են մտավոր գործունեության արդյունքի և այն ստեղծողի միջև առկա անձնական կապը⁵:

⁵ Orit Frischman Afori, Human rights and copyright: The introduction of natural law consid-

ԴԱՍ 6

Թեմա 1: Սեփականությունից զրկելը

Նշված թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն՝ անձի սեփականության իրավունքին կատարված միջամտությունների տեսակները (ֆորմալ կամ փաստացի սեփականագրկումը), յուրաքանչյուրի դրսևորման եղանակները, դրանց կարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ ձևավորված ՄԻԵԴ դատական պրակտիկան:

1-ին դասի «ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը» թեմայի շրջանակներում հակիրճ անդրադարձ կատարվեց ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված 2-րդ նորմին, որը վերաբերում է սեփականությունից զրկելուն: Այսպես, նշվեց, որ ՄԻԵԿ 1-ին արձանագրության վերոնշյալ հոդվածի իմաստով սեփականությունից զրկելը հասկացվում է որպես անձի սեփականության իրավունքի դադարեցում: Ներկայացվեցին սեփականության իրավունքի դադարեցման տեսակները՝ ֆորմալ և փաստացի զրկում: Ընդգծվեց, որ ՄԻԵԴ-ը հաշվի է առնում ոչ միայն այն դեպքը, երբ ֆորմալ առումով դադարում է անձի սեփականության իրավունքը, այլ նաև գնահատման առարկա է դարձնում այն հարցը, թե արդյոք առկա է սեփականության իրավունքից փաստացի զրկում: Նշվածը բացատրվում է այն հանգամանքով, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու իրավունքներ, որոնք «գործնական են և արդյունավետ»:

Մասնավորապես, *Sporrong and Lönnroth v. Sweden* (1982) գործով ՄԻԵԴ-ն արձանագրեց. «Որոշելիս, թե արդյոք տեղի է ունեցել սեփականությունից զրկում՝ հոդվածի 2-րդ կանոնի համաձայն, հարկ է գնահատման առարկա դարձնել ոչ միայն իրավունքի ֆորմալ զրկման առկայության հարցը, այլ նաև պետք է հաշվի առնել իրական իրավիճակը: Քանի որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու «հստակ և արդյունավետ» իրավունքները, պետք է գնահատման առարկա դարձվի այն հարցադրումը, թե արդյոք տեղի է ունեցել իրավունքի փաստացի զրկում»

erations into American copyright law, 14 FORDHAM INTELL. PROP. MEDIA& ENT. L.J. 497, 524 (2004)

(տնն *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23/09/1982 թ. վճիռ, գանգալի թիվ 7151/75, 7152/75, կետ 73):

Որպես սեփականությունից փաստացի զրկման օրինակ՝ կներկայացվի *Papamichalopoulos v. Greece* (1993) գործը, որով դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը 1967 թ. պետության կողմից տրվել էր ծովային զինված ուժերին, որոնք այդ հողամասում ծովային զորամաս էին տեղակայել: Գույքի փոխանցումը կատարվել էր առանց հարկադիր օտարման ակտի: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ չնայած դիմումատուն *de jure* (ըստ օրենքի) չէր զրկվել իր սեփականության իրավունքից, բայց *de facto* (փաստացի) զրկվել էր իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասը օգտագործելու կամ վաճառելու հնարավորությունից: Նշվածի հաշվառմամբ, ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ տեղի է ունեցել սեփականության իրավունքից փաստացի զրկում:

ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կանոնի կիրառման մեկ այլ օրինակ է *Brumarescu v. Romania* (1999) գործը: Նշված գործով ազգային դատարանի դատական ակտով (առաջին աստիճանի դատարան) վերականգնվել էր դիմումատուի սեփականության իրավունքը դեռևս 1950 թ. պետականացված գույքի նկատմամբ: Հետագայում նշված դատական ակտը բեկանվել էր Գերագույն դատարանի կողմից: ՄԻԵԴ-ն առաջին աստիճանի դատարանի դատական ակտը Կոնվենցիայի իմաստով որակել էր որպես սեփականության իրավունք (գույք) և գործը քննել էր երկրորդ կանոնի լույսի ներքո:

Որպես սեփականության իրավունքի դադարման հաճախակի հանդիպող օրինակներ կարելի է առանձնացնել սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի, գույքի պետականացումը, գույքի ոչնչացումը, պահանջի իրավունքից զրկումը և այլն:

Դասընթացում մասնավորապես կներկայացվեն.

1. *The Holy Monasteries v. Greece* (1994) գործը: Գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուների նկատմամբ կիրառվել էր 1987 թ. ընդունված մի օրենք, որը նախատեսում էր, որ օրենքի հրապարակման պահից վեցամսյա ժամկետում պետությունը դառնում է եկեղեցիների գույքի սեփականատերը, բացառությամբ այն դեպքերի,

երբ եկեղեցիները կապացուցեն նշված գույքի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը՝ ներկայացնելով կան օրենքով սահմանված կարգով գրանցված փաստաթուղթ (խնդիրն այն էր, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը պարտադիր էր դարձել՝ 1856 թվականից սկսած), կան պետության դեմ կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: ՄԻԵԴ–ի դիրքորոշման համաձայն՝ 1987 թվականի օրենքով սահմանված պետական սեփականության կանխավարկածը սեփականության իրավունքի ապացուցման բեռը դնում էր եկեղեցիների վրա: Վերջիններն էլ իրենց հերթին կարող էին ապացուցել իրենց սեփականության իրավունքը՝ բացառապես հիմնվելով օրենքով սահմանված կարգով գրանցված փաստաթղթի կամ պետության դեմ կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վրա: Նրանք, փաստորեն, ի հիմնավորումն իրենց սեփականության իրավունքի չէին կարող վկայակոչել ձեռքբերման վաղեմությունը կամ մասնավոր անձի դեմ կայացված վերջնական դատական ակտի առկայությունը: Փաստորեն, պետությունը մեխանիկորեն վեճի առարկա գույքը փոխանցել էր իր սեփականությանը: Ստացվում էր, որ նշված դեպքում խոսքը ոչ թե ապացուցման բեռին վերաբերող դատավարական նորմի մասին էր, այլ նյութական իրավունքի նորմի, որը, որպես հետևանք, վեճի առարկա գույքը ամբողջ ծավալով դարձնում էր պետության սեփականությունը: Այդպիսով՝ ՄԻԵԴ–ը եզրահանգել էր, որ առկա է միջամտություն եկեղեցիների գույքային իրավունքին, ինչը գնահատել էր սեփականությունից զրկում: ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ 1987 թվականի օրենսդրական փոփոխությամբ փոխհատուցում չէր սահմանվել, հետևաբար 1987 թվականի օրենքը անհամաչափ բեռ էր դրել եկեղեցիների վրա՝ զրկելով նրանց սեփականությունից, և չէր ապահովել արդարացի հավասարակշռություն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը արձանագրել էր եկեղեցիների սեփականության իրավունքի խախտում:

2. *Pressos Compania Naviera v. Belgium* (1995) գործը, որով ՄԻԵԴ–ն արձանագրեց, որ դիմումատուն զրկվել էր վնասի հատուցման պահանջի իրավունքից: Մասնավորապես, գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուները նավերի սեփականատերեր և ապահովագրական ընկերություններ էին, որոնց նավերը մինչև

1988 թվականը Բելգիայի և Նիդերլանդների տարածքում վթարի էին ենթարկվել: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ միջադեպը տեղի էր ունեցել Բելգիայի նավապետերի խորհրդատուների մեղքով, նրանք հայցեր ներկայացրին ընդդեմ Բելգիայի և մի քանի մասնավոր ընկերությունների, որոնք նավապետերի խորհրդատուների տրամադրման ծառայություններ էին մատուցում (1967 թ. օրենքի համաձայն՝ նավապետերի խորհրդատուների տրամադրման ծառայություններ մատուցում է կամ պետությունը, կամ նրա կողմից լիցենզավորված անձինք): 1988 թվականին 1967 թվականի օրենքում կատարվեց փոփոխություն, որով պետությունը և նավապետերի խորհրդականների ծառայություններ մատուցող անձինք ազատվեցին նավապետերի խորհրդականների անփութության համար նախատեսված պատասխանատվությունից: Օրենքում կատարված փոփոխություններին տրվել էր հետադարձ ուժ: Եվրոպական դատարանն արձանագրեց, որ դիմումատուները կարող էին իրավաչափ ակնկալիք ունենալ, որ պատահարից բխող պահանջները կմեկնաբանվեն վնասների հատուցման ընդհանուր կանոններին համապատասխան, քանի որ այդպիսին էր դատական պրակտիկան այն պատահարների նկատմամբ, որոնք տեղի էին ունեցել մինչև 1988 թվականի օրենքի ընդունումը: Հիմք ընդունելով վերոգրյալը և անդրադառնալով միջամտության՝ հանրային շահից բխելու և համաչափության պահանջին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ 1988 թվականի ակտը հետադարձ կիրառմամբ դիմումատուներին զրկել է վնասների հատուցման պահանջի իրավունքից, իսկ որոշ դեպքերում նաև արդեն իսկ դատարանում գտնվող գործերով վնասների հատուցման պահանջների բավարարման հնարավորությունից:

3. Hentrich v. France (1994) գործը, որով սեփականության իրավունքից զրկում որակվեց չափազանց ցածր գնով գնված ապրանքը հարկային մարմնի կողմից գնելու նախապատվության իրավունքի իրացումը: Մասնավորապես, նշված գործով դիմումատուները գնել էին հողատարածք: Հարկային ծառայությունը իրացրել էր իր գնման նախապատվության իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով դիմումատուներին վերադարձնելով առք ու վաճառքի պայմանագրով վճարված գումարը՝ վճարելով նաև այդ գումարի 10 %-ի չափով հավելավճար և

հատուցելով պայմանագրի հետ կապված ծախսերը: Նշված գործով Եվրոպական դատարանը նշել էր, որ թեև գնելու նախապատվության իրավունքը, հանդիսանալով պետության ինքնիշխանության բաղկացուցիչ մաս, ինքնին քննադատության առարկա չէ: Սակայն մոտեցումը փոխվում է, երբ այդ իրավունքի իրացումը հայեցողական բնույթ է կրում, և ընթացակարգը, ինքնին, արդար չէ: Նշված գործով գնման նախապատվության իրավունքը հայեցողական էր և դժվար կանխատեսելի, միաժամանակ ապահովված չէին հիմնական ընթացակարգային երաշխիքները: Մասնավորապես, Հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածը չէր համապատասխանում հստակության, որոշակիության և կանխատեսելիության պահանջներին: Մրցակցային ընթացակարգի պահպանման բացակայության դեպքում (գործարքի գնի վերաբերյալ փաստարկներ ներկայացնելու հնարավորության բացակայություն) գնման նախապատվության իրավունքի իրացումը չի կարող լինել իրավաչափ: ՄԻԵԴ-ը նաև նշել էր, որ համաչափության սկզբունքի պահպանումը պետք է նաև գնահատել այն տեսակետից, որ յուրաքանչյուր գնորդի նկատմամբ գնման նախապատվության ընթացակարգի կիրառման հնարավորությունը և հետևաբար իր սեփականության իրավունքը կորցնելու վտանգը անհամաչափ են ձեռք բերվող գույքի արժեքը ոչ պատշաճ գնահատման հնարավոր դեպքերը կանխելու նպատակին: Հետևաբար, միայն վճարված գումարի վերադարձը, հավելյալ 10 %-ի վճարումը և պայմանագրի հետ կապված ծախսերի հատուցումը սեփականության իրավունքի կորուստը փոխհատուցելու տեսանկյունից չեն կարող բավարար գնահատվել այն պայմաններում, երբ առք ու վաճառքի պայմանագիր կնքելիս բացակայել է հակաօրինական որևէ վարքագիծ: Հետևաբար, գնման նախապատվության իրավունքի իրացման արդյունքում տուժողը կրել է անհամաչափ բեռ, որը կարող էր գնահատվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ նա ունենար իր դեմ կիրառված միջոցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն:

Դասընթացում կներկայացվի նաև *James v. UK* (1986) գործը, որի փաստական հանգամանքների համաձայն՝ երկարաժամկետ վարձակալության պայմանագրով սահմանվել էր 99 տարի անց վարձատուին գույքը վերադարձնելու պարտականություն, իսկ հետագայում ընդուն-

ված օրենքով նախատեսվեց պայմանագրի առարկա գույքը գնելու վարձակալների իրավունքը: ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ սեփականության պարտադիր փոխանցումը մեկ մասնավոր անձից մյուսին, պայմանավորված կոնկրետ փաստական հանգամանքներով, կարող է իրավաչափ նպատակ հետապնդել: Այս առումով, ՄԻԵԴ-ը նշել է, որ «հանրային շահից բխելու» հասկացությունը չի կարող մեկնաբանվել այն իմաստով, որ սեփականությունը պետք է տրվի հանրության օգտագործմանը, կամ որ հանրության էական մասը պետք է էական շահ ունենա այդ իրավունքի փոխանցումից: Սեփականությունից զրկումը, որը նպատակ է հետապնդում նպաստելու սոցիալական արդարությանը, պետք է մեկնաբանվի որպես հանրային շահից բխող: Մասնավորապես, պետության կողմից օրենքի արդարության ապահովումը, որը կարգավորում է մասնավոր անձանց սեփականության իրավունքների պայմանագրային հարաբերությունները, բխում են հանրային շահից, նույնիսկ եթե այն նախատեսում է մի մասնավոր անձից սեփականության իրավունքի փոխանցումը մեկ այլ անձի: Այսպիսով՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ սոցիալական, տնտեսական կամ այլ քաղաքականության շրջանակում մասնավոր անձի սեփականության իրավունքը դադարեցնելը կարող է բխել հանրային շահից, նույնիսկ եթե հանրությունը կամ դրա մեծ մասը չունի ուղղակի օգուտ այդ սեփականությունից: Ընդունված օրենքը նպատակ էր հետապնդում պաշտպանելու վարձակալների վարձակալած բնակարանների նկատմամբ «բարոյական իրավունքը»: Մասնավորապես, բնակչությանը կացարանով ապահովելը կարևոր սոցիալական նպատակ է, որը չի կարող թողնվել շուկայի կարգավորմանը: Այդ պատճառով, պետության միջամտությունը, այդ թվում՝ մասնավոր անձանց պայմանագրային հարաբերություններին, կարող է գնահատվել իրավաչափ: Դատարանն իրավասու չէ գնահատել՝ արդյոք պետության ընտրած օրենսդրական կարգավորումը ստեղծված իրավիճակի համար լավագույն լուծումն է, թե ոչ: Հետևաբար, օրենքով (որով միաժամանակ սեփականատիրոջ համար ֆինանսական փոխհատուցում էր նախատեսվում) սեփականության իրավունքի փոխանցումը վարձակալներին անհամաչափ չի կարող գնահատվել:

Թեևս 2: Սեփականությունից զրկելու օրինականության պայ-

մանները

Նշված թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն անձին սեփականության իրավունքից զրկելը ՄԻԵԿ տեսանկյունից իրավաչափ որակելու համար ՄԻԵԴ–ի կողմից առաջ քաշված պայմանները: Մասնավորապես, անդրադարձ կկատարվի այնպիսի պարտադիր պայմանների, ինչպիսիք են՝

- Կիրառված միջոցների համապատասխանությունը ներպետական օրենքին,
- Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների պահպանումը,
- «Հանրության շահի» և թույլատրելի հայեցողության շրջանակը,
- Համաչափության սկզբունքի պահպանումը:

Կիրառված միջոցների համապատասխանությունը ներպետական օրենքին

Կիրառված միջոցի ներպետական օրենքին համապատասխանության հարցին ՄԻԵԴ–ն անդրադարձել է *Lithgow and Others v. the United Kingdom* (1986) գործով՝ արձանագրելով, որ «Օրենքով սահմանված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է պարզաճ մակարդակի մատչելի և բավարար հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն» (տես *Lithgow and Others v. the United Kingdom*, 08/07/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 9006/80, 9262/81, 9263/81, 9265/81, 9266/81, 9313/81, 9405/81, կետ 110):

Sunday times v. The United Kingdom (1979) գործով ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ.

– Օրենքը պետք է լինի բավականաչափ մատչելի:

– Նորմը կարող է որակվել որպես «օրենք», եթե այն բավականաչափ հստակ է, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները (տես *Sunday times v. The United Kingdom*, 26/04/1979 թ. վճիռ, գանգապ թիվ 6538/74, կետ 49):

Նշված ենթաթեմայի շրջանակներում անդրադարձ կկատարվի *Minasyan and Semerjyan v. Armenia* (2009) գործին, որի վերաբերյալ կա-

յացված վճռով ՄԻԵԴ–ը թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի խախտումն արձանագրեց՝ հիմք ընդունելով, որ սեփականության օտարման վերաբերյալ երբևէ օրենք չի ընդունվել, և օտարման ողջ գործընթացը, ներառյալ փոխհատուցման չափը որոշելու կարգը, կարգավորվել է կառավարության մի շարք որոշումներով (տե՛ս *Minasyan and Semerjyan v. Armenia*, 23/06/2009 թ. *վճիռ, գանձադ թիվ 27651/05, կետ 69–72*):

ՄԻԵԴ–ն անդրադարձ է կատարել նաև «օրենքի» կարգավիճակին, դրան ներկայացվող պահանջներին՝ ամրագրելով նաև իրավունքի գերակայության սկզբունքը:

Մասնավորապես, *James and others v. UK* (1986) գործով Եվրոպական դատարանն արձանագրել է. «*Կոնվենցիայի իմաստով «օրենք» և «օրինական» բառերը չեն սահմանափակվում՝ ներպետական իրավունքին հղում կատարելով, այլ վերաբերում են նաև օրենքի որակին: Նրանք պետք է համապատասխանեն իրավունքի գերակայության սկզբունքին»* (տե՛ս *James and others v. UK*, 21/02/1986 թ. *վճիռ, գանձադ թիվ 8793/79, կետ 67*):

Մեկ այլ գործով ՄԻԵԴ–ը հանգել է այն եզրահանգման, որ օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ և կանխատեսելի, իսկ սեփականությունից զրկելը պետք է ուղեկցվի համապատասխան դատավարական երաշխիքներով: Այսինքն՝ սեփականության իրավունքին միջամտելը պետք է միաժամանակ լինի բավականաչափ կարգավորված օրենքով, որը պահանջում է բավականաչափ հասանելիություն, հստակություն և կանխատեսելիություն ներպետական օրենքում և պրակտիկայում (տե՛ս *Carbonara and Ventura v. Italy*, 30/05/2000 թ. *վճիռ, գանձադ թիվ 24638/94, կետ 64*):

Hentrich v. France (1994) գործով Դատարանն անդրադարձել է «օրենքին» ներկայացվող պահանջներին (գործի փաստական հանգամանքների համաձայն՝ հարկային մարմնի կողմից իրացվել էր չափազանց ցածր գնով գնված ապրանքը գնելու նախապատվության իրավունքը)՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ օրենսդրությունը թույլ է տալիս իշխանություններին ցուցաբերել հայեցողություն, օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատեսելի, ապահովի հիմնարար ընթացակարգային երաշխիքները (մրցակցային վարույթը): Դիմումա-

տուները պետք է ունենան ողջամիտ հնարավորություն՝ պատասխանատու իշխանություններին իրենց բողոքը ներկայացնելու, արդյունավետ կերպով հերքելու այն եղանակները, որոնք, ըստ իրենց, միջամտություն են իրենց իրավունքներին (տե՛ս *Hentrich v. France*, 22/09/1994 թ. վճիռ, գանգապ թիվ 13616/88, կետ 42):

Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների պահպանումը

Սեփականության իրավունքից զրկելը իրավաչափ որակելու հարցը գնահատման առարկա դարձնելիս ՄԻԵԴ-ի կողմից կարևորվել է նաև միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների պահպանման հարցն օտարերկրյա քաղաքացիների դեպքում:

Մասնավորապես, ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ *ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:*

Հատկանշական է, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների պահպանման պահանջը վերաբերում է միայն օտարերկրյա քաղաքացիներին, քանի որ «*սեփական քաղաքացիները փոխհատուցման հետ կապված միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառման ոլորտից դուրս են*»:

Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ օտարերկրյա քաղաքացիները պետք է լինեն պաշտպանված անօրինական հարկադիր օտարումից, և օրինական օտարման դեպքում վերջիններիս համար պետք է ապահովվի ճիշտ ժամանակին համարժեք և արդյունավետ փոխհատուցում ստանալու իրավունքը: Նշված հանգամանքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ օտարերկրյա քաղաքացիներն ավելի խոցելի են ազգային օրենսդրության տեսանկյունից, իսկ հանրային շահը վերաբերելի է միայն սեփական քաղաքացիներին (տե՛ս *James and others v. UK*, 21/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79, կետ 59–63):

«Հանրության շահի» և թույլատրելի հայեցողության շրջանակը

ՄԻԵԴ–ն իր նախադեպային իրավունքով համապարփակ ձևով անդրադարձ է կատարել «հանրության շահ» հասկացությանը և պետական հայեցողության թույլատրելի շրջանակին:

«Հանրային շահ» հասկացության բացահայտման նպատակով դասընթացում կներկայացվեն James and others v. UK (1986) և Pressos Compania Naviera S. A. and others v. Belgium (1995) գործերը, որոնցով «հանրության շահ» հասկացությանը հաղորդվել է լայն իմաստ: Մասնավորապես, ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ քանի որ ազգային իշխանություններն ավելի քաջատեղյակ են իրենց հասարակության կարիքներին, քան միջազգային դատավորը, առաջինները ավելի նախընտրելի վիճակում են՝ գնահատելու, թե ինչն է բխում «հանրային շահից»:

Կոնվենցիայով ներդրված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է նախնական գնահատում կատարեն, թե արդյոք առկա են հանրային կարևորություն ներկայացնող խնդիրներ, որոնք պահանջում են սեփականությունից զրկում, և զրկման դեպքում ինչպիսի իրավունքի պաշտպանության միջոցներ պետք է ձեռնարկվեն: Այս հարցում ազգային իշխանություններն ունեն որոշակի հայեցողության շրջանակ:

Բացի այդ՝ Եվրոպական դատարանն ավելացրեց. *«Սեփականությունից զրկելու վերաբերյալ օրենքների ընդունումը սովորաբար ենթադրում է քաղաքական, տնտեսական և հասարակական հարցերի հետազոտում, որոնց վերաբերյալ կարծիքների հակասություն կարող է առաջանալ ժողովրդավարական երկրներում: Սոցիալական և տնտեսական քաղաքականությունը իրականացնելու հարցում օրենսդրին վերապահված լայն հայեցողության սահմանը բնական համարելով՝ Դատարանը պետք է հարգի օրենսդրի որոշումն առ այն, թե ինչն է բխում «հանրության շահից», բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրի նման որոշումը զուրկ է ողջամիտ հիմնավորումից: Այլ կերպ ասած, նա չի փոխի իր սեփական դիրքորոշումը ներպետական իշխանությունների դիրքորոշմամբ, այլ պետք է վերահսկի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթների ներքո վիճարկվող եղանակները, և այդ նպատակով ուսումնասիրի այն փաստերը, որոնց հիման վրա գործել են նշված*

իշխանությունները» (տե՛ս *Pressos Compania Naviera S. A. and others v. Belgium, 20/11/1995 թ. վճիռ, գանգապ թիվ 17849/91, կետ 37*):

Վերոնշյալից հետևում է, որ ՄԻԵԴ-ը յուրաքանչյուր անդամ պետությանը շնորհել է հայեցողության լայն շրջանակ՝ որոշելու, թե ինչն է բխում «հանրության շահից»: Միաժամանակ, Եվրոպական դատարանը սահմանել է պայման, որ այդ շրջանակը պետք է ողջամտորեն հիմնավորված լինի, և յուրաքանչյուր գործով ՄԻԵԴ-ը, գնահատման առարկա դարձնելով գործի փաստական հանգամանքները, պետք է ստուգի, թե որքանով է հիմնավորված պետության կողմից կիրառված միջոցների համապատասխանությունը տվյալ հանրության շահերին: Մասնավորապես, *Handyside v. The United Kingdom (1976)* գործով ՄԻԵԴ-ն արձանագրեց. «Դատարանը պետք է սահմանափակվի միջամտության օրինականության և նպատակահարմարության վերահսկմամբ» (տե՛ս *Handyside v The United Kingdom, 07/12/1976 թ. վճիռ, գանգապ թիվ 5493/72, կետ 62*):

Դատընթացում կներկայացվեն *The former king of Greece and others v. Greece (2000)* գործը, որով ՄԻԵԴ-ը եկավ այն եզրահանգման, որ նախկին թագավորին սեփականության իրավունքից զրկելը բխում է հանրային շահից, քանի որ անհրաժեշտ էր պահպանել երկրի սահմանադրական կարգավիճակը որպես հանրապետություն (տե՛ս *The former king of Greece and others v. Greece, 23/11/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 25701/94, կետ 88*):

ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև այն իրավական հարցին, թե արդյոք գույքի հարկադիր փոխանցումը մի անհատից մյուսին կարող է դիտարկվել որպես միջամտություն «հանուն հանրային շահի»:

Մասնավորապես, դատարանը հանգել է հետևյալ եզրահանգման.

««Հանուն հանրային շահի» արտահայտությունը չի ընկալվում այնպես, որ փոխանցված ունեցվածքը պետք է օգտագործման հանձնվի լայն հանրությանը, կամ որ համայնքն ընդհանրապես կամ էլ համայնքի մի զգալի հատվածը պետք է ուղղակիորեն օգտվի գույքի առգրավումից: Սեփականության առգրավումը, որը հետապնդում է համայնքի ներսում սոցիալական արդարությունը խորացնելու քաղաքականություն, կարող է որակվել որպես «հանուն հանրային շահի»: Մասնավորապես, մասնավոր անձանց պայմանագրային կամ գույքային իրավունքները կարգա-

վորող իրավական համակարգի արդար լինելը հանրային մրահոգության առարկա է, և, հետևաբար, նման արդարություն հաստատելու նպատակ ունեցող օրենսդրական միջոցները կարող են լինել «հանուն հանրային շահի», եթե նույնիսկ դրանք ներառում են գույքի հարկադիր փոխանցում մի անհարկ մյուսին» (տե՛ս *James v. The United Kingdom*, 22/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79, կետ 41):

Համաչափության սկզբունք

Ինչպես նշվեց վերևում, սեփականության իրավունքից զրկելը ՄԻԵԿ տեսանկյունից իրավաչափ որակելու հարցը գնահատման առարկա դարձնելիս ՄԻԵԴ-ը անդրադառնում է նաև կիրառված միջոցի համաչափության պահպանման հարցին:

Մասնավորապես, *James v. The United Kingdom* (1986) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց. «Բավարար չէ, որպեսզի սեփականության իրավունքից զրկման եղանակը հետապնդի «հանրության շահի» իրավաչափ նպատակը, նաև պետք է գոյություն ունենա համաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և դրված նպատակների միջև» (տե՛ս *James v. The United Kingdom*, 22/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79, կետ 50):

Sporrong and Lönnroth v. Sweden (1982) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ համաչափությունը կխախտվի այն դեպքում, երբ շահագրգիռ անհատը ենթարկվի «հատուկ և բացառիկ պարտավորության» (տե՛ս *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23/09/1982 թ. վճիռ, գանգապ թիվ 7151/75, 7152/75, կետ 73):

Կիրառված միջոցի համաչափությունը քննարկելիս լսարանում կուսումնասիրվեն ՄԻԵԴ հետևյալ գործերը.

- *Sporrong and Lönnroth v. Sweden* (1982) գործը, որով Շվեդիայի կառավարությունը 1956 թ. հանրային կարիքների համար դիմումատուին պատկանող գույքի օտարման որոշում էր կայացրել: Միաժամանակ արգելվել էր շինարարության իրականացումը: Միայն 1979 թ. կառավարությունը չեղյալ հայտարարեց գույքի օտարման թույլտվությունը: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց. «Այնպիսի բարդ բնագավառում, ինչպիսին է քաղաքների կառուցապատումը, պայմանա-

վորվող պետությունները օգտվում են լայն հայեցողության սահմանից՝ քաղաքաշինական քաղաքականության իրականացման համար» (տես *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23/09/1982 թ. վճիռ, գանգապ թիվ 7151/75, 7152/75, կետ 69): Չնայած դրան՝ Եվրոպական դատարանն արձանագրել է անհամաչափ բեռի առկայություն՝ հաշվի առնելով միջամտության ժամանակի տևողությունը:

Համաչափության սկզբունքի պահպանման համատեքստում ՄԻԵԴ–ի կողմից կարևորվել է նաև փոխհատուցման հարցը:

Մասնավորապես, Եվրոպական դատարանը *The Holy Monasteries v. Greece* (1994) գործով արձանագրել է, որ գնահատելու համար, թե արդյոք միջամտությունը ապահովում է արդարացի հավասարակշռություն, պետք է հաշվի առնել ներպետական օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանները: Առանց սեփականության արժեքին ողջամիտ գումարի վճարման՝ սեփականությունից զրկելը չափազանց մեծ բեռ է, և փոխհատուցման բացակայությունը չի կարող արդարացվել հողվածի իմաստով՝ բացառությամբ արտակարգ իրավիճակների: Եվրոպական դատարանն անդրադարձել է նաև փոխհատուցման չափին՝ նշելով. «Հողվածը չի երաշխավորում ամբողջական վնասի հատուցման իրավունքը, քանի որ «հանրության շահի» օրինաչափ նպատակները կարող են գործել ի օգուտ զիջողական փոխհատուցման՝ շուկայական արժեքից փոքր գումարով» (տես *The Holy Monasteries v. Greece*, 09/12/1994 թ. վճիռ, գանգապ թիվ 13092/87, 13984/88, կետ 71):

Միաժամանակ, մեկ այլ՝ *The former king of Greece and others v. Greece* (2000) գործով հաշվի առնելով տվյալ գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները՝ Եվրոպական դատարանը չբացառեց նաև փոխհատուցման բացակայության իրավաչափությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրեց, որ փոխհատուցման բացակայությունը կարող է արդարացված լինել այն հիմքով, որ սեփականությունը ձեռք էր բերվել որպես թագավորական պարտականությունների բաղադրիչ՝ որոշակի արտոնություններով:

Այդուհանդերձ, նշված գործով Եվրոպական դատարանը փոխհատուցման բացակայությունը գնահատել է որպես համաչափության սկզբունքի խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

- Գույքի մի մասի դիմաց կատարվել են վճարումներ:
- Ուներ օրինական սպասելիք, որ փոխհատուցումը կվճարվի, քանի որ 1973 թվականի առգրավման ժամանակ տրամադրվել էր փոխհատուցում (տե՛ս *The former king of Greece and others v. Greece* 23/11/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 25701/94, կետ 98):

ՄԻԵԴ–ն անդրադարձել է նաև փոխհատուցման վճարների ուշացման հարցին՝ արձանագրելով, որ փոխհատուցումը կդադարի ողջամիտ լինելուց, եթե հաշվի չառնվեն դրա արժեքը նվազեցնող այնպիսի հանգամանքեր, ինչպիսին է, օրինակ՝ փոխհատուցման վճարի անհարկի ուշացումը: Այն կարող է հանգեցնել ֆինանսական կորուստի, հատկապես դրամի արժեզրկման պատճառով (տե՛ս *Akkus v. Turkey*, 09/07/1997 թ. վճիռ, գանգապ թիվ 19263/92, կետ 29):

ԴԱՍ 7

Թեմա: Պետական վերահսկողությունը սեփականության օգտագործման նկատմամբ և դրա պարտադիր պայմանները

Նշված թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն պետության կողմից անձի սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության հասկացությունը, դրա դրսևորման եղանակները, ինչպես նաև վերահսկողության թույլատրելիության սահմանները: Մասնավորապես, քննարկման առարկա կդարձվեն «ընդհանուր շահ» և «հանրային շահ» եզրույթների հնարավոր տարբերությունները, ՄԻԵԴ–ի կողմից դրանց գնահատման և կիրառման առանձնահատկությունները: Կներկայացվի պետության կողմից անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության համաչափությունը գնահատելիս ՄԻԵԴ–ի կողմից հաշվի առնվող հանգամանքները՝ կոնկրետ գործերի համատեքստում:

Այսպես, ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ *«Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պեղության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ընդհանուր շահերին համապատասխան՝ կամ հարկերի, կամ մյուս գանձումների, կամ սուբսիդիաների վճարումն ապահովելու համար»:*

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ սեփականության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրավաչափության պարտադիր պայմաններն են՝

- միջամտության օրինականություն,
- ընդհանուր շահ կամ հարկերի, մյուս գանձումների, սուբսիդիաների վճարումն ապահովելու նպատակ,
- համաչափություն (Pine Valley Developments Limited c. Irlande (1991)):

Ինչ վերաբերում է միջամտության օրինականությանը, ապա այս հարցին անդրադարձ է կատարվել «Սեփականությունից զրկելու օրինականության պայմանները» թեմայի շրջանակներում: Հետևաբար, սույն թեմային նվիրված դասընթացի շրջանակներում անդրադարձ

կկատարվի սեփականության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրավաչափության մյուս պայմաններին:

Ընդհանուր և Հանրային շահ

Որոշ տեսաբանների կարծիքով, ի տարբերություն սեփականության իրավունքից զրկելու դեպքի, այս դեպքում միջամտության օրինակա- նության և նպատակահարմարության վերաբերյալ կիրառվում է ավելի թույլ վերահսկողություն⁶:

James and others v. UK (1986) գործով Եվրոպական դատարանն ան- դրադարձել է «ընդհանուր շահ» և «հանրային շահ» եզրույթների հնա- րավոր տարբերություններին: Մասնավորապես, նշված գործով դիմու- մատուների կողմից ներկայացվել էր փաստարկ, որ «ընդհանուր շահ» հասկացությունը պետությանը տալիս է ավելի շատ ազատություն, ավե- լի լայն է պետության հայեցողության շրջանակը: Մինչդեռ, Եվրոպա- կան դատարանն արձանագրել է, որ նույնիսկ եթե գոյություն ունենային տարբերություններ «հանրային շահ» և «ընդհանուր շահ» հասկացու- թյունների միջև, ապա դիմողների կողմից վկայակոչվող որևէ հիմնա- րար տարբերակման մասին խոսք լինել չի կարող: «Հանրային շահ» և «ընդհանուր շահ» հասկացությունների միջև չկա որևէ էական տարբե- րություն: «Ցանկացած միջամտություն անկախ այն հանգամանքից, թե հողվածի որ կանոնին է վերաբերում, պետք է ծառայի հանրային կամ ընդհանուր իրավաչափ շահին» (տես James and others v. UK, 21/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79, կետ 43):

Սույն թեմայի շրջանակներում անդրադարձ կկատարվի և կներկա- յացվի նաև «հանրային շահ» և «ընդհանուր շահ» եզրույթների տարբե- րությունը Կոնվենցիայի այլ հոդվածներում օգտագործվող «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» եզրույթից: Մասնավորա- պես, հոդվածը չի նախատեսում «ժողովրդավարական հասարակությու- նում անհրաժեշտ լինելու» պայման: «Հանրային կամ ընդհանուր շահի պահանջը տարբերվում է այլ հոդվածներում (հ. 8, 10) նախատեսված «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պահանջից:

⁶ F. Sudre, Droit européen et international des droits de l'homme, PUF, 7e éd, 2005

Մասնավորապես, դա նշանակում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսվում է ավելի լայն հայեցողություն (տե՛ս *James and others v. UK*, 21/02/1986 թ. վճիռ, գանգապ թիվ 8793/79, կետ 46): Այսինքն՝ հանրային կամ ընդհանուր շահը ներառում է միջոցառումներ, որոնք կարող են լինել նախընտրելի կամ ցանկալի և ոչ թե անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս նաև *Handyside v The United Kingdom*, 10/30/1975 թ. Հանձնաժողովի զեկույց, գանգապ թիվ 5493/72, կետ 167):

Միջամտության համաչափությունը

Ինչ վերաբերում է միջամտության համաչափությանը, ապա Եվրոպական դատարանը *Sporrong and Lönnroth v. Sweden* (1982) գործով արձանագրեց, որ համաչափության սկզբունքը բնորոշ է ողջ Կոնվենցիային և արտացոլված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում (տե՛ս *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23/09/1982 թ. վճիռ, գանգապ թիվ 7151/75, 7152/75, կետ 69): Նշվածից հետևում է, որ անձի սեփականության նկատմամբ կատարված ցանկացած միջամտություն պետք է լինի համաչափ:

Միջամտության համաչափությունը գնահատելիս Դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներն են՝

- կամայականության արգելք,
- հետապնդվող նպատակին հասնելու այլ միջոցների բացակայություն,
- ընթացակարգային (պրոցեսուալ) երաշխիքների առկայություն,
- հասցեատերերի համար միջամտության հետևանքները:

Դասընթացում ՄԻԵԴ նախադեպային իրավունքից կներկայացվեն սեփականության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության վերաբերյալ մի շարք գործեր:

- *Chassagnou and others v. France* (1999) գործը: Նշված գործով դիմումատուները հողատարածքների սեփականատերեր էին: 1964 թվականի օրենքի համաձայն՝ քաղաքային կամ միջքաղաքային որսորդական միությունների կազմակերպման նպատակով բոլոր դիմումատուները պետք է դառնային այդ կազմակերպություններից մեկի անդամ և իրենց հողատարածքներում որսորդությամբ

զբաղվելու իրավունքը փոխանցելին այդ որսորդական կազմակերպություններին: Նրանք չէին կարող ձեռնպահ մնալ այդ կազմակերպություններին անդամակցելուց և որսորդական իրավունքները փոխանցելուց, եթե միայն նրանց պատկանող հողատարածքը չէր գերազանցում սահմանված շեմը, որը, կախված կոնկրետ շրջանից, տատանվում էր 20–ից 60 հեկտարը. նման պայմանը դիմումատուների դեպքում առկա չէր: Դիմումատուները դիմել էին ներպետական դատարաններ՝ պահանջելով իրենց հողատարածքը չներառել որպես որսորդական տարածք: Նրանց դիմումները ներպետական դատարանների կողմից մերժվել էին:

ՄԻԵԴ–ը նշել է, որ չնայած դիմումատուները բարոյական և էթիկական տեսակետից դեմ էին որսորդությանը, այնուամենայնիվ պարտավորված էին իրենց հողատարածքում հանդուրժել նման գործունեությունը (զինված անձանց, որսորդական շների ներկայությունը): Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը արձանագրեց, որ առկա է միջամտություն անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին:

Անդրադառնալով միջամտության նպատակին՝ ՄԻԵԴ–ը նշել է, որ չկարգավորված որսորդական գործունեության դեպքերի բացառումը բխում է հանրային շահից:

Անդրադառնալով միջամտության համաչափության հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուները չէին կարող խուսափել իրենց հողատարածքների հետ կապված իրավունքները որսորդական միություններին փոխանցելուց: Մասնավորապես, գյուղատնտեսական գործունեության մասին օրենքով սահմանվում էր, որ որսորդական միության որսորդները չեն կարող որսորդությամբ զբաղվել այն հողատարածքներում, որոնք ցանկապատված են ամբողջ երկայնքով, և այդ պատճառով այդ տարածքները անհասանելի են որսորդական կենդանիների և մարդկանց համար: Այսինքն՝ այդ օրենքում խոսքը այնպիսի ցանկապատի մասին էր, որն ուներ որոշակի բարձրություն և ամրություն: Եվրոպական դատարանն արձանագրեց, որ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողատարածքներում որսորդական գործունեությամբ զբաղվելու իրավունքը որսորդական միություններին փոխանցելու պարտականությունից ազատվելու համար դիմումատուներ-

րի համար էական դրամական ծախսեր կատարելու պարտավորություն չէր կարող սահմանվել:

Միջամտության համաչափության շրջանակներում անդրադառնալով փոխհատուցման հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ գույքի օգտագործման իրավունքի կորուստի դիմաց օրենքով նախատեսված փոխհատուցումը չի կարող որակվել որպես արդարացի փոխհատուցում: Նման եզրահանգման համար Եվրոպական դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ 1964 թվականի օրենքով հողատարածքների սեփականատերերի համար նախատեսվել էր փոխհատուցման իրավունք. այն դեպքում, երբ որսորդական գործունեության իրավունքի փոխանցումը հանգեցրել է հողատարածքի սեփականատերերի եկամուտների կորուստին: Այսինքն՝ փոխհատուցումն առկա էր այն դեպքում, երբ հողատարածքների սեփականատերերը իրացնում էին որսորդական գործունեությամբ զբաղվելու իրենց իրավունքը կամ կողմ էին որսորդական գործունեությանը: Նշվածից հետևում է, որ 1964 թվականի օրենքը չէր նախատեսում փոխհատուցման հնարավորություն այն սեփականատերերի համար, որոնք չէին ցանկանում որսորդական գործունեությամբ զբաղվել և այդ իրավունքի իրականացումից եկամուտ չէին ստանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ փոքր հողատարածքների սեփականատերերի համոզմունքին հակառակ նրանց որսորդական գործունեության իրավունքի փոխանցումը վերջիններիս համար անհամաչափ բեռ է, ինչը, 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերության կանոնի, իմաստով արդարացված չէ: Հետևաբար, առկա է նշված դրույթով երաշխավորված իրավունքի խախտում:

• *Air Canada v. The United Kingdom* (1995) գործը, որով թմրանյութ տեղափոխող ինքնաթիռն առգրավվել էր, և իրավատիրոջն էր վերադարձվել £50.000, Եվրոպական դատարանն արձանագրեց, որ միջամտությունը համատեղելի է ընդհանուր շահի հետ, որի նպատակն է պայքարել թմրաբիզնեսի դեմ: Հաշվի առնելով թմրանյութի մեծ քանակությունը (£800.000), ինքնաթիռի արժեքը (£60.000.000)՝ Դատարանը £50.000 վճարման պայմանը համարել է համաչափ հետապնդվող նպատակի (տե՛ս *Air Canada v. The United Kingdom*, 05/05/1995 թ. վճիռ,

զանգապ թիվ 18465/91, կետ 47):

• *Bitto and others v. Slovakia* (2014) գործը, որով խորհրդային ժամանակաշրջանում բնակարանի օգտագործման իրավունք ձեռք բերած անձինք 1992 թ. օրենքի ուժով ձեռք էին բերել վարձակալի կարգավիճակ: Օրենքով սահմանվեց վարձակալական վճարների առավելագույն չափ: Նշված գործով Եվրոպական դատարանը, կիրառելով հողվածի 2-րդ պարբերությունը, արձանագրեց համաչափության սկզբունքի խախտում՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ երկրի տնային տնտեսության մատչելիության ապահովմանն ուղղված բարեփոխումների ողջ սոցիալական և ֆինանսական բեռը չի կարող դրվել միայն որոշակի սոցիալական խմբի վրա, որքան էլ կարևոր լինեն մեկ այլ սոցիալական խմբի շահերը (տես *Bitto and others v. Slovakia*, 28/01/2014 թ. վճիռ, զանգապ թիվ 30255/09, կետ 115):

• Մեկ այլ՝ *Trajkovski v. the Former Yugoslav Republic of Macedonia* (2002) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ օտարերկրյա արժույթի կանխիկացման սահմանափակումները բխում են հանրային շահից և պայմանավորվել են չվերահսկվող կանխիկացման բացասական ազդեցությամբ: Մասնավորապես, օտարերկրյա արժույթով դիմումատուի ավանդը 1993 թ. օրենքի ուժով սառեցված էր: Նշված օրենքը սահմանում էր, որ այդպիսի ավանդատուները կարող են հետ ստանալ իրենց ավանդները միայն օրենքով նախատեսված դեպքերում: Մասնավորապես, առկա էր հնարավորություն ձեռք բերելու քաղաքային բնակարաններ, առևտրային տարածքներ, բաժնետոմսեր և/կամ որպես առևտրային գործարք՝ վաճառել ավանդը անձանց, որոնք ցանկանում են ձեռք բերել քաղաքային բնակարաններ կամ առևտրային տարածքներ: Բացի այդ՝ սառեցված ավանդի գումարի նկատմամբ հաշվարկվում էին տոկոսներ: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վիճարկվող գործողությունները չեն հանգեցրել սեփականազրկման, տեղի չի ունեցել դիմումատուի սեփականության իրավունքի փոխանցում, ինչպես նաև նա չի գրկվել իր գույքի խաղաղ օգտագործման իրավունքից: Վիճարկվող գործողությունները էականորեն սահմանափակել են դիմումատուի՝ իր միջոցները տնօրինելու հնարավորությունները, և հետևաբար պետք է դիտարկվեն Կոնվենցիայի թիվ 1 արձանագրու-

թյան 1-ին հոդվածի 2-րդ պարբերության կարգավորման տեսակետից: Եվրոպական դատարանը, հաշվի առնելով, որ քննարկվող շրջանում նորանկախ Մակեդոնիայի Հանրապետության տնտեսական իրավիճակի պայմաններում ավանդների վերադարձը առանց հսկողության թողնելու դեպքում կհանգեցնե՞ր բանկերի սնանկության, եկել է այն եզրահանգման, որ միջամտությունն ունեցել է հանրային շահից բխող հիմք: Միջամտության համաչափության հարցը գնահատելիս Եվրոպական դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ օրենքով սահմանված դեպքերում դիմումատուն կարող էր օգտագործել իր ավանդի գումարի որոշակի մասը: Մասնավորապես, իր ամսական կարիքները հոգալու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում ավանդի գումարով կարող էր հոգալ բժշկական և ուսումնական, ամուսնության և հուղարկավորության ծախսերը, մարել երկարաժամկետ բանկային վարկերը, վճարել հարկեր, մաքսատուրքեր, բաժնետոմսերի փոխանցման հարկեր, ձեռք բերել պետությանը պատկանող գյուղատնտեսական հողեր, գյուղատնտեսական մեքենաներ և այլն: Նա նաև իրավունք ուներ պետական գույքի մասնավորեցման շրջանակում ձեռք բերելու կացարան, ընկերությունների ու բանկերի բաժնետոմսեր, ինչպես նաև այլ պետական արժեթղթեր: Դիմումատուն կարող էր նաև վաճառել իր ստեղծված խնայողությունները այն անձանց, ովքեր ուզում էին գնել բնակարան կամ առևտրային տարածք: Նշված պատճառաբանությունների հիմքով՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը պահպանվել է (տե՛ս *Trajkovski v. the Former Yugoslav Republic of Macedonia*, 07/03/2002 թ. ՄԻԵԴ որոշում, գանգապ թիվ 53320/99):

Հարկային քաղաքականություն

Դասընթացում քննարկման առարկա կդարձվի ՄԻԵԴ նախադեպային իրավունքը՝ հարկային քաղաքականության վերաբերյալ: Հատկանշական է, որ հարկային քաղաքականությունը ՄԻԵԴ-ի կողմից գնահատվել է որպես պետության ինքնիշխանության հատկանիշ:

Հարկային քաղաքականության ոլորտում ՄԻԵԴ դատական պրակտիկայի ներկայացման նպատակով դասընթացում կքննարկվի WASA

Ömsesidigt and Others v. Sweden (1988) գործը, որով ՄԻԵԴ-ն արձանագրել է. «Ցանկացած օրենսդրություն, որը նախատեսում է որոշակի տեսակի հարկային պարտավորություն, այդ մասով կհանգեցնի անձի սեփականության իրավունքից զրկելուն: Այդուհանդերձ, հողվածի 2-րդ պարբերությունը անդամ պեղությանը իրավունք է վերապահում ընդունելու նման օրենքներ, որոնք նա անհրաժեշտ է համարում հարկերի կամ այլ գանձումների վճարումն ապահովելու համար» (տե՛ս *WASA Omsesidigt and Others v. Sweden*, 14/12/1988 թ. Հանձնաժողովի որոշում, գանձապ թիվ 13013/87):

Կներկայացվի նաև *Gasus Dosier v. Netherlands* (1995) գործը, որով հարկային գանձումները ապահովելու նպատակով 3-րդ անձին պատկանող գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը Դատարանի կողմից գնահատվել է որպես սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն: Նշված գործով կայացված ՄԻԵԴ վճռով արձանագրվել է. «Օրենսդիրը պետք է ունենա լայն հայեցողություն այն հարցում, թե արդյոք հարկային մարմինները պետք է լինեն ավելի նախընտրելի իրավիճակում հարկային պարտավորությունները բռնագանձելիս, քան այլ պարտավորեր (եթե այո՛, ապա ինչ չափով): Դատարանը կհարգի օրենսդրի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդրի նման որոշումը զուրկ է ողջամիտ հիմնավորումից»: «Նշված կարգավորման նպատակն էր հեշտացնել հարկային պարտավորությունների բռնագանձումները, ինչը համապատասխանում է ընդհանուր շահին» (տե՛ս *Gasus Dosier v Netherlands*, 23/02/1995 թ. վճիռ, գանձապ թիվ 15375/89, կետ 60):

Դասընթացում կքննարկվի նաև *Rousk v. Sweden* (2013) գործը, որով Եվրոպական դատարանն անդրադարձել է 800\$ հարկային պարտավորությունների դիմաց տան վրա բռնագանձում տարածելու իրավաչափության հարցին: Նշված գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուի գույքը իրացվել է կատարողական թերթ տալու մասին որոշումը դատական ատյաններում բողոքարկելու ժամանակահատվածում: ՄԻԵԴ-ը, հարցը դիտարկելով «հարկերի վճարումն ապահովելու նպատակով գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության» շրջանակներում, արձանագրել է հողվածի խախտում: Վճռի

հիմքում դրվել էր ընթացակարգային երաշխիքների հասանելիության բացակայությունը:

Քննարկման առարկա կդառնան նաև մի շարք այլ գործեր, որոնցով պետության կողմից իրականացված միջամտության իրավաչափությունը նույնպես գնահատման առարկա դարձավ երրորդ կանոնի շրջանակներում: Մասնավորապես կներկայացվեն՝

- Mellacher and others v Austria (1989) գործը, որով դիմումատուների կողմից ներկայացված բողոքի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ հատուկ օրենքով սահմանվել էր գույքի վարձակալական վճարի առավելագույն շեմ, որն այնքան ցածր էր, որ կարող էր հավասարեցվել սեփականագրկմանը: Ըստ Եվրոպական դատարանի՝ կիրառված միջոցները չեն հանգեցրել ոչ իրական և ոչ էլ փաստացի սեփականագրկման: Մասնավորապես տեղի չի ունեցել դիմումատուների սեփականության իրավունքի փոխանցում, և նրանք չեն զրկվել իրենց գույքն օգտագործելու, վարձակալելու կամ օտարելու իրավունքից: Դատարանն արձանագրել է, որ միջամտությունը պետք է գնահատվի 1–ին հոդվածի երկրորդ պարբերության լույսի ներքո, որը պետություններին իրավունք է վերապահում ընդունելու և կիրառելու այնպիսի օրենքներ, որոնք անհրաժեշտ կլինեն վերահսկելու գույքի օգտագործումը հանրային շահի նպատակով: Այդպիսի օրենքները անհրաժեշտ են լինում տնային տնտեսության բնագավառում, որը ժամանակակից հասարակությունում սոցիալական և տնտեսական քաղաքականության հիմնական մտահոգության առարկան է: Նման քաղաքականության որդեգրման նպատակով օրենսդիրը պետք է ունենա լայն հայեցողության շրջանակ, և ընդհանուր սկզբունքն այն է, որ ՄԻԵԴ–ը հարգում է օրենսդրի որոշումներն այն հարցի հետ կապված, թե ինչն է բխում հանրային շահից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումներն ակնհայտորեն անհիմն են: Դատարանը եզրակացրել է, որ 1981 թ. Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունման ժամանակ ներկայացված հաշվետվությունը հիմնավորում է, որ 1967 թ. վարձավճարների չափի նկատմամբ հսկողության թուլացումը հանգեցրել է նույնանման բնակարանների վարձավճարների չափի միջև

էական տարբերությունների: 1981 թ. օրենքի ընդունումն ուղղված էր նույնանման բնակարանների վարձավճարների միջև չարդարացված տարբերությունների վերացմանը: Օրենքը նպատակ էր հետապնդում նաև նշված միջոցառումների օգնությամբ հասարակության նվազ վճարունակ անդամների համար բնակարաններն ավելի հասանելի դարձնելու: Նշված հիմնավորումների հիմքով, ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ օրենսդրական կարգավորումը բխում է ընդհանուր շահից:

Եվրոպական դատարանը գտել է, որ նշված դեպքում պահպանված է նաև արդարացի հավասարակշռության սկզբունքը: Մասնավորապես, կառավարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ բնակարանների վարձակալության վճարների կրճատման հաշվարկների ժամանակ հաշվի են առնվել դրանց բնական մաշվածությունը, որոշ բնակարանների կառուցման ժամանակ ավելի քիչ կատարած ծախսերը, ինչպես նաև դրանք զբաղեցնող բնակիչների վճարունակությունը: Բացի այդ, վերոնշյալ օրենքի համաձայն, վարձավճարի չափը սահմանելիս հաշվի են առնվում ոչ միայն գույքի չափերը, այլ նաև վարձատուի կողմից այդ գույքի վրա կատարած ծախսերը: Այդպիսի ծախսերի թվին են դասվում ապահովագրավճարը, կառավարման ծախսերը, առանձին ծառայությունների վճարը և հարկերը: Ավելին, որպես անցումային դրույթ՝ նախատեսվել է սեփականատերերի իրավունքն արդեն իսկ կնքված և գործող պայմանագրերի շրջանակում ստանալ 50 % ավել վարձավճար, քան նախատեսված է օրենքով: Վերոգրյալ պատճառաբանություններով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ օրենսդիր մարմինն իրավասու էր ինքնուրույն և խելամտորեն որոշելու որպես հանրային քաղաքականություն, որ այդ վարձավճարները անընդունելի էին սոցիալական արդարության տեսակետից: Հետևաբար, նշված դեպքում պահպանված է արդարացի հավասարակշռության սկզբունքը:

- Svenska Managamentgruppen AB v. Sweden (1985) գործը, որով դիմումատու ընկերությունը կենսաթոշակային վճարների և եկամտահարկի մասով սահմանված նոր հարկային պարտավորությունները որակել էր որպես միջամտություն իր սեփականության իրավունքին: Մասնավորապես, նշված գործով դիմումի հիմքում դրվել էր այն

հանգամանքը, որ եկամտահարկի վճարման պարտականության և լրացուցիչ կենսաթոշակային վճարների նախատեսումը միջամտություն է իր սեփականության իրավունքի իրացմանը: Հանձնաժողովը նշել է, որ սեփականությունը, որից գրկվել է դիմումատուն, այն դրամական միջոցներն են, որոնք նա պետք է վճարեր լրացուցիչ կենսաթոշակային շեմին և եկամուտների կարգավորման ակտին համապատասխան: Անդրադառնալով միջամտության արդարացված, իրավաչափ լինելու հարցին՝ Հանձնաժողովը նշել է, որ նշված դեպքում խոսքը հարկերի և այլ վճարումների գանձման մասին է, որտեղ պետության հայեցողության շրջանակը բավականին լայն է և կարող է համարվել ոչ իրավաչափ միայն, եթե անձի վրա դրվում է անհամաչափ բեռ: Հանձնաժողովը նշել է, որ դիմումատուն օրենսդրական փոփոխությունների արդյունքում պարտավորվում էր վճարել նոր հարկատեսակ՝ պայմանավորված իր կողմից ստացվող եկամուտների չափով, միաժամանակ դիմումատուն պետք է վճարեր սոցիալական լրացուցիչ վճար, որը կազմելու էր 0,2–0,5 տոկոս: Նշվածի հաշվառմամբ Հանձնաժողովը գտել է, որ դիմումատուի վրա չի դրվել այնպիսի անհամաչափ պարտավորություն, որը կարող էր հանգեցնել վերջինիս սեփականության իրավունքի խախտման:

- Paulet v. The United Kingdom (2014) գործը, որով դիմումատուն դատապարտվել էր ազատագրկման, ինչպես նաև նրա գույքի բռնագրավման որոշում էր կայացվել: ՄԻԵԴ–ը նշված գործով արձանագրեց, որ բռնագրավման որոշումը տեղավորվում է թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի երկրորդ պարբերության շրջանակներում, որը թույլ է տալիս՝ պայմանավորվող պետությունները վերահսկեն գույքի օգտագործումը տույժերի վճարումն ապահովելու նպատակով:
- JGK STATYBA LTD AND GUSELNIKOVAS v. LITHUANIA (2013) գործը, որով դիմումատու ընկերության կողմից կառուցված տների վրա կիրառվել էր հայցի ապահովման միջոց. ավելի քան 10 տարի տևող քաղաքացիական հայցերի շրջանակներում (տան սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին) արգելվել էին

տների վաճառքը կամ այլ ձևով օտարումը: Նշված գործը նույնպես քննվել էր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության շրջանակներում:

ԴԱՍ 8

Թեմա: Միջամտությունը գույքից անարգել օգտվելու իրավունքին և դրա իրավաչափության պայմանները

Տվյալ թեմայի շրջանակներում կբացահայտվեն գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության էությունը, դրսևորման եղանակները, դրանց իրավաչափության պայմանները, խախտման առկայությունը որոշելու չափանիշները և հարաբերակցությունը ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված մյուս 2 կանոնների հետ (սեփականության իրավունքից զրկելը և սեփականության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողությունը):

1-ին դասի՝ «ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը» թեմայի շրջանակներում հակիրճ անդրադարձ կատարվեց ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված 1-ին նորմին, որը վերաբերում է գույքից անարգել օգտվելու իրավունքին: Այսպես, նշվեց, որ չնայած սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, կոչված լինելով երաշխավորելու անձի սեփականության իրավունքի պաշտպանությունը, ամրագրված է հոդվածի հենց առաջին նախադասությունում, դատարանի կողմից այն միշտ գնահատման առարկա է դարձվում վերջում: Այն կիրառվում է միայն այն դեպքում, երբ մյուս երկու նորմերը կիրառման ենթակա չեն: Այսինքն՝ առաջին նորմն ունի ընդհանուր բնույթ և իր մեջ ներառում է անձի սեփականության իրավունքի միջամտության բոլոր այն դեպքերը, որոնք չեն կարող որակվել որպես սեփականությունից զրկում կամ գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն: Կոնկրետ գործով կիրառելի նորմը որոշելիս ՄԻԵԿ-ը նախ և առաջ գնահատման առարկա է դարձնում երկրորդ կամ երրորդ նորմերի կիրառելիության հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ և երրորդ նորմերը բավականին լայն մեկնաբանության առարկա են դարձել (հատկապես գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության նորմը), այս նորմի կիրառելիության շրջանակները այնքան էլ լայն չեն, որքան կարելի էր ակնկալել:

Որպես առաջին նորմի կիրառելիության օրինակ կարելի է առանձնացնել *Sporrong et Lönnroth v Sweden* (1982) գործը:

Նշված գործով կայացվել էր անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման որոշում, որը տասնյակ տարիներ չէր կատարվում: Արդյունքում էապես նվազել էր գույքի վաճառքի արժեքը: Դատարանը նախ և առաջ անդրադարձավ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված 2-րդ (սեփականությունից զրկվելը) և 3-րդ (վերահսկողություն գույքի օգտագործման նկատմամբ) կանոններին: Մասնավորապես Եվրոպական դատարանն արձանագրեց, որ 2-րդ կանոնը նշված գործով կիրառելի չէ, քանի որ դիմողի սեփականության իրավունքը չի վերացել, բացակայում է նաև փաստացի զրկումը, քանի որ դիմողը չի զրկվել այն օգտագործելու հնարավորությունից: Դատարանը գտավ, որ կիրառելի չէ նաև 3-րդ կանոնը, քանի որ միջամտությունը նպատակ չի ունեցել վերահսկողություն սահմանելու գույքի օգտագործման նկատմամբ: Չնայած դիմումատուները չէին զրկվել գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, և նրանք ցանկացած պահի կարող էին վաճառել այդ գույքը, ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ նշված գործով կիրառելի է առաջին կանոնը: Մասնավորապես ՄԻԵԴ-ն անձի սեփականության իրավունքի խախտում արձանագրեց այն հիմքով, որ պետության միջամտության արդյունքում սահմանափակվել էր անձի կողմից իր գույքի օգտագործումը, քանի որ չնայած անձը չի զրկվել այդ գույքը օտարելու իրավունքից, սակայն այդ որոշումներով սահմանափակվել էր դրա հնարավորությունը:

Մեկ այլ օրինակ է *Loizidou v. Turkey* (1995) գործը: Նշված գործով դիմումատուն Կիպրոսի քաղաքացի էր, որին սեփականության իրավունքով պատկանում էր Կիպրոսի հյուսիսում գտնվող հողամաս: 1974 թվականից ի վեր Կիպրոսի բաժանման հետևանքով հողամասը դուրս էր եկել նրա տիրապետությունից: ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ դիմումատուն զրկվել էր իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի տիրապետման և օգտագործման հնարավորությունից՝ կիրառելով հոդվածի առաջին նախադասությամբ սահմանված նորմը: Այս գործի ներկայացման ընթացքում քննարկման առարկա կդարձվի նաև «*Ratione temporis*» սկզբունքի կիրառումը: Մասնավորապես, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ շարունակվող իրավախախտումների դեպքում Դատարանը իրավասու է քննելու խախտումներ, որոնք տեղի են ունեցել մինչև

անդամ պետության կողմից Կոնվենցիայի վավերացումը:

Դասընթացում կներկայացվի նաև Centro Europa 7 S. R. L. and Di Stefano v. Italy (2012) գործը, որի փաստական հանգամանքների համաձայն՝ 1999 թ. հուլիսի 28-ին համապատասխան պետական լիազոր մարմինը, ղեկավարվելով թիվ 249/1997 օրենքով, Centro Europa 7 S. R. L.-ին տրամադրեց համազգային ստացիոնար հաղորդակներով հեռուստահեռարձակման արտոնագիր՝ թույլատրելով տեղադրել և գործարկել անալոգային հեռուստացանց: Մինչդեռ, դիմող ընկերությունը, արտոնագիր ունենալով հանդերձ, մինչև 2009 թ. հունիսը զրկված էր հեռարձակում ապահովելու հնարավորությունից, քանի որ նրան չէր տրամադրվել որևէ հաճախականություն:

Նշված գործով նույնպես Եվրոպական դատարանը կիրառել է ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին կանոնը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուն ուներ օրինական սպասելիք, որը վերաբերում էր այնպիսի գույքային շահին, ինչպիսին է արտոնագրի հիման վրա հեռուստացուցային ցանցի շահագործումը, ինչը բավարար հիմք է հաստատված համարելու նյութական շահի և հետևաբար նաև հոդվածի առաջին նախադասության իմաստով «գույքի» առկայությունը (տես նաև *դաս 1, թեմա 2*):

Դասընթացում կներկայացվի նաև Broniowski v. Poland (2005) գործը: Նշված գործով դիմումատուին ազգային օրենսդրությամբ, իսկ հետագայում նաև դատական ակտով ընձեռնվել էր սեփականության իրավունքի դադարման դիմաց հատուցում ստանալու հնարավորություն: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում անձը զրկվել էր հատուցում ստանալու իրավունքից, իսկ հետագայում այն վերականգնվել էր, սակայն բացակայում էր փոխհատուցման իրավունքը կյանքի կոչելու համար անհրաժեշտ վարչարարական մեխանիզմը: Հետագայում օրենսդրությունում առկա բացը լրացվել էր, և անձը հնարավորություն էր ստացել իրացնելու վնասների հատուցում ստանալու իր իրավունքը: Նշված գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ բացակայում են թե՛ անձին սեփականության իրավունքից զրկելու (երկրորդ նորմ) և թե՛ գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության (երրորդ նորմ) դեպքերը, և արձանագրեց հոդվածի 1-ին նորմի խախտում:

ԴԱՍ 9

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցությունը արդարացի բավարարման իրավունքի հետ

Նշված թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն անձի սեփականության իրավունքի խախտման դեպքում տուժողին արդարացի բավարարում տրամադրելու պետության պարտավորության էությունը, փոխհատուցման եղանակները (վնասներ (իրական վնաս, բաց թողած օգուտ), բարոյական վնաս (ֆիզիկական կամ հոգեկան տառապանքների հատուցում), անհրաժեշտ և ողջամիտ ծախսեր, պարտավորության իրականացման շրջանակները, հանգամանքները, որոնք հաշվի են առնվում Եվրոպական դատարանի կողմից վնասի չափը որոշելիս:

Մասնավորապես, ՄԻԵԿ 41-րդ հոդվածի համաձայն, *եթե Դատարանը որոշում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում փութած կողմին արդարացի բավարարում տրամադրել:*

Դասընթացում անդրադարձ կկատարվի *Minasyan and Semerjyan v. Armenia* (2011) գործին, որով կայացրած վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է. «Այն դեպքում, երբ խախտման բնույթը *restitutio in integrum* հնարավորություն է տալիս, Պետության պարտականությունն է դառնում ապահովել դրա իրականացումը, քանի որ Դատարանն այն իրականացնելու համար չունի իշխանություն և պրակտիկ հնարավորություններ: Այնուամենայնիվ, եթե ներպետական օրենսդրությունը չի նախատեսում կամ նախատեսում է միայն խախտման հետևանքների մասնակի վերականգնման հնարավորություն, 41-րդ հոդվածը Դատարանին իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում փութած կողմին տրամադրել համապատասխան արդարացի փոխհատուցում» (տե՛ս *Minasyan and Semerjyan v. Armenia*, 07/06/2011 թ. վճիռ, գանգապ թիվ

27651/05, կետ 16):

Կներկայացվի ՄԻԵԴ կանոնակարգի 60-րդ հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ «Եթե դիմումատու գանկանում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն արդարացի բավարարում ստանալ այն դեպքում, երբ Դատարանը գտնի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, նա պետք է համապատասխան պահանջ ներկայացնի: Դիմումատուն պետք է մանրամասն կերպով սահմանված ժամկետում ներկայացնի իր պահանջները և դրանք հիմնավորող ապացույցները»:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ փոխհատուցման ենթակա են՝

1. վնասները (իրական վնաս, բաց թողած օգուտ),

2. բարոյական վնասը (ֆիզիկական կամ հոգեկան տառապանքների հատուցում),

3. անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը (կատարված կամ կատարվելիք) (օրինակ՝ փաստաբանի վարձատրություն, պետական տուրք, ճանապարհաձախս, վարձակալության վճարներ և այլն):

Ինչպես արդեն իսկ նշվեց վերևում (դաս 2), ՄԻԵԴ-ի կողմից փոխհատուցման հարցը կարևորվում է միջամտության համաչափության սկզբունքի պահպանման համատեքստում:

Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է. «Գնահատելու համար, թե արդյոք միջամտությունը ապահովում է արդարացի հավասարակշռություն, պետք է հաշվի առնել ներպետական օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանները»: «Առանց սեփականության արժեքին ողջամիտ գումարի վճարման սեփականությունից զրկելը չափազանց մեծ բեռ է, և փոխհատուցման բացակայությունը չի կարող արդարացվել հոդվածի իմաստով՝ բացառությամբ արտակարգ իրավիճակների» (տե՛ս *The Holy Monasteries v. Greece*, 09/12/1994 թ. վճիռ, գանձապ թիվ 13092/87, 13984/88, կետ 71):

Անդրադարձ կկատարվի նաև պետության միջամտության արդյունքում անձին հասցված վնասի հաշվարկման կարգին: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուին հասցված վնասը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել զույքի արժեքը այն պահի

դրությամբ, երբ դիմումատուն ձեռք է բերել իրավական որոշակիություն այն հարցում, որ կորցրել է գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը: Նշված պահին ազգային դատարանի կողմից հաստատված գույքի շուկայական արժեքը պետք է ճշգրտվի գնաճի հաշվառմամբ, ինչպես նաև մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը պետք է հաշվեգրվեն տոկոսներ (տես *Guiso–Gallisay v. Italy*, 22/12/2009 թ. Մեծ պալատի վճիռ, գանգադ թիվ 58858/00, կետ 56, 105):

Միաժամանակ Եվրոպական դատարանը, անդրադառնալով փոխհատուցման չափին, արձանագրել է. «Հողվածը չի երաշխավորում ամբողջական վնասի հատուցման իրավունքը, քանի որ «հանրության շահի» օրինաչափ նպատակները կարող են գործել ի օգուտ զիջողական փոխհատուցման՝ շուկայական արժեքից փոքր գումարով» (տես *The Holy Monasteries v. Greece*, 09/12/1994 թ. վճիռ, գանգադ թիվ 13092/87, 13984/88, կետ 71):

ՄԻԵԴ–ը չի բացառել նաև փոխհատուցման բացակայության իրավաչափությունը: Մասնավորապես, *The former king of Greece and others v. Greece* (2000) գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ փոխհատուցման բացակայությունը կարող է արդարացված լինել այն հիմքով, որ սեփականությունը ձեռք էր բերվել որպես թագավորական պարտականությունների բաղադրիչ և որոշակի արտոնություններով:

Այդուհանդերձ, նշված գործով Եվրոպական դատարանը փոխհատուցման բացակայությունը գնահատել է որպես համաչափության սկզբունքի խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

- գույքի մի մասի դիմաց կատարվել են վճարումներ,
- ուներ իրավաչափ ակնկալիք, որ փոխհատուցումը կվճարվի, քանի որ 1973 թվականի առգրավման ժամանակ տրամադրվել էր փոխհատուցում (տես *The former king of Greece and others v. Greece*, 23/11/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգադ թիվ 25701/94, կետ 98):

ՄԻԵԴ–ն անդրադարձել է նաև փոխհատուցման վճարների ուշացման հարցին՝ արձանագրելով. «Փոխհատուցման ողջամիտ լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, ինչպիսին է, օրինակ՝ փոխհատուցման վճարի ուշացումը: Այն կարող է հանգեցնել ֆինանսա-

կան կորուստի, հատկապես դրամի արժեզրկման պատճառով» (տե՛ս *Akus v. Turkey*, 09/07/1997 թ. վճիռ, գանգապ թիվ 19263/92, կետ 29):

Դասընթացում կքննարկվի *Beyeler v. Italy* (2000) գործը, որով ՄԻԵԴ–ն արձանագրել է, որ դիմումատուն ունի ծախսերի փոխհատուցման իրավունք միայն այն դեպքում, եթե ապացուցվում է, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար կատարվել են և եղել են խելամիտ: Բացի այդ՝ ծախսերը վերականգնվում են միայն այն ժամանակ, երբ դրանք վերաբերում են հայտնաբերված խախտմանը:

Դասընթացում անդրադարձ կկատարվի նաև *VISTINŠ AND PEREPJOLKINS v. LATVIA* (2012) գործին, որի փաստական հանգամանքների համաձայն՝ դադարեցվել էր հողատարածքի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը: Լատվիայի օրենսդրության համաձայն՝ առկա է կարգավորում, համաձայն որի՝ փոխհատուցման չափը չի կարող ավել լինել 1940 թվականի կադաստրային արժեքից: Արդյունքում դիմումատուները ստացել են 1000 անգամ ավելի քիչ գումար: Նշված գործով ՄԻԵԴ–ն արձանագրեց. «Չնայած այն հանգամանքին, որ 1–ին հողվածը չի պարտադրում գույքի կադաստրային կամ շուկայական արժեքի ամբողջական հատուցման տրամադրում, Դատարանը կարծում է, որ կադաստրային արժեքի և փաստացի արժեքի փոխհատուցման չափազանց մեծ տարբերությունը, ինչը հեղադարձ ուժ ավոլղ օրենսդրական փոփոխության արդյունք է, բավարար հիմք է արձանագրելու համաչափության սկզբունքի խախտում համայնքային շահի և անձի հիմնարար իրավունքի միջև» (*VISTINŠ AND PEREPJOLKINS v. LATVIA*, 25/10/2012 թ. վճիռ, գանգապ թիվ 71243/01, կետ 130): Միաժամանակ, հիմք ընդունելով գործի հանգամանքները, Եվրոպական դատարանը հետաձգել է 41–րդ հողվածի կիրառելիության հարցի լուծումը հետագա վարույթով՝ կողմերին տալով հնարավորություն՝ կնքելու հաշտության համաձայնություն:

Հետագայում նույն գործով Մեծ պալատի որոշմամբ (տե՛ս *VISTINŠ AND PEREPJOLKINS v. LATVIA*, 25/03/2014 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 71243/01) ամբողջական հատուցումը մերժվել է հետևյալ պատճառներով.

- գույքի իրական արժեքի որոշման անհնարինություն,

- հողատարածքի նկատմամբ սահմանվել էր սերվիտուտ,
- դիմումատուները որևէ ներդրում չէին կատարել հողատարածքում և չէին վճարել հարկերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ փոխհատուցման չափ է սահմանվել՝

- կադաստրային արժեքի 75 %-ը,
- հաշվի է առնվել գնաճը,
- հաշվարկվել են Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված տոկոսները (տարեկան 6 %),
- ոչ նյութական վնասը՝ 3.000 \$:

Դասընթացում կներկայացվի նաև *Pyrantiene v. Lithuania* (2013) գործը, որով հողատարածքի դիմաց պետության կողմից տրված փոխհատուցման չափի ողջամտության հարցը գնահատման առարկա դարձնելիս ՄԻԵԴ-ը հաշվի է առել գնաճը, ինչպես նաև կարևորել է այն հանգամանքը, որ հատկացված գումարը բավարար չէր նմանատիպ հողատարածքի ձեռքբերման համար (տե՛ս *Pyrantiene v. Lithuania*, 12/11/2013 թ. վճիռ, գանգադ թիվ 45092/07, կետ 64): Միաժամանակ, Դատարանը կարևորել է նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են դիմումատուի անձնական և սոցիալական դրությունը, գույքի իրական արժեքը, ինչպես նաև անձի՝ բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքը (տե՛ս *Pyrantiene v. Lithuania*, 12/11/2013 թ. վճիռ, գանգադ թիվ 45092/07, կետ 64):

Դասընթացում կներկայացվի նաև *Minasyan and Semerjyan v. Armenia* (2011) գործը, որով ՄԻԵԴ-ը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը այլևս գոյություն չուներ (տարածքը ճանաչվել էր գերակա հանրային շահ և օտարվել էր), եկավ այն եզրահանգման, որ անհնար է ստույգ հաշվարկել նյութական վնասի չափը, և հետևաբար նման վնասի գնահատումը պետք է իրականացվի արդարացիության սկզբունքի հիման վրա: Եվրոպական դատարանը մասնավորապես արձանագրեց. «Հաշվի առնելով իր նախադեպերում հաստատված համապատասխան սկզբունքները՝ Դատարանը համարում է, որ գործի հատուկ հանգամանքներով պայմանավորված՝ առավել համապատասխան և արդարացի լուծում է խնդրո առարկա ժամանակահատվածում բնակարանի

հավանական արժեքի վճարումը՝ փոխարկված ներկայիս համարժեք գնով, գնածի հետևանքները հափուցելու համար՝ այն նվազեցնելով ներպետական մակարդակում արդեն վճարված գումարի չափով» (տես *Minasyan and Semerjyan v. Armenia*, 07/06/2011 թ. վճիռ, գանգապ թիվ 27651/05, կետ 20):

Այս թեմայի շրջանակներում անդրադարձ կկատարվի նաև ոչ նյութական վնասի ինստիտուտը կարգավորող ներպետական օրենսդրությանը, դրա կիրառման առանձնահատկություններին: Մասնավորապես, անդրադարձ կկատարվի կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին, ինչը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ և 162.1-րդ հոդվածներով:

Անդրադարձ կկատարվի *Khachatryan v. Armenia* (2009) գործին, որով ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունքի բացակայությունը Դատարանի կողմից որակվել էր որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

Ոչ նյութական վնասի մասով անդրադարձ կկատարվի *Poghosyan and Baghdasaryan v. Armenia* (2012) գործին, որով կայացրած վճռով Եվրոպական դատարանն արձանագրել է. «Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև դատական սխալի հետևանքով դատապարտված անձին փոխհատուցման տրամադրումն է ցանկացած ոչ նյութական վնասի, օրինակ՝ տազնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի համար: Տվյալ գործով դիմումատուին նման փոխհատուցում, այնուամենայնիվ, չի տրվել... Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում» (տես *Poghosyan and Baghdasaryan v. Armenia*, 12/06/2012 թ. վճիռ, գանգապ թիվ 22999/06, կետ 51–52):

Ոչ նյութական վնասի հատուցման խնդիրն ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև *Minasyan and Semerjyan v. Armenia* (2011) գործով՝ արձանագրել. «Դատարանը գտնում է, որ գույքից ապօրինաբար զրկվելու արդյուն-

քում առաջացած անօգնականության և անհանգստության զգացումները պատճառել են դիմումատուներին ոչ նյութական վնաս, որը պետք է համապատասխան կերպով փոխհատուցվի: Կոնվենցիայի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուներից յուրաքանչյուրին տրամադրել 2.000 եվրո կամ ընդհանուր՝ 4.000 եվրո» (տես *Minasyan and Semerjyan v. Armenia*, 07/06/2011 թ. վճիռ, գանգապ թիվ 27651/05, կետ 24):

Թեմա: ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցությունը Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ, 14-րդ հոդվածների հետ

Տվյալ թեմայի շրջանակներում քննարկման առարկա կդարձվեն ՄԻԵԴ նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշումներն այն մասին, թե ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն ինչպես է հարաբերակցվում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի, 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի, ինչպես նաև 14-րդ հոդվածով երաշխավորված՝ խտրականության արգելքի հետ:

Հարաբերակցությունը 6-րդ հոդվածի հետ

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ, անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համեմատության արդյունքում կարելի է արձանագրել, որ եթե վերջինս սահմանում է սեփականության իրավունքի բովանդակային երաշխիքները (թույլատրելի միջամտության պահանջներ), ապա 6-րդ հոդվածը նվիրված է պրոցեսուալ երաշխիքներին (դատարանի մատչելիություն և հրապարակային դատաքննության իրավունք):

Վերոնշյալ հոդվածների հարաբերակցության շրջանակներում կներկայացվեն մի շարք գործեր, մասնավորապես՝

• *Hentrich v. France* (1994) գործը, որով սեփականության իրավունքից զրկում որակվեց չափազանց ցածր գնով գնված ապրանքը հարկային մարմնի կողմից գնելու նախապատվության իրավունքի իրացումը: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ այն դեպքում, երբ օրենսդրությունը թույլ է տալիս իշխանություններին ցուցաբե-

րել հայեցողություն, օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատեսելի, ապահովի հիմնարար ընթացակարգային երաշխիքները (մրցակցային վարույթը): Դիմումատուները պետք է ունենան ողջամիտ հնարավորություն պատասխանատու իշխանություններին իրենց բողոքը ներկայացնելու՝ արդյունավետ կերպով հերքելու այն եղանակները, որոնք, ըստ իրենց, միջամտություն են իրենց իրավունքներին (տես *Henrich v. France*, 22/09/1994 թ. վճիռ, գանգադ թիվ 13616/88, կետ 42):

- *Burdov v. Russia* (2009) գործը, որով դատական ակտերի չկատարումը ՄԻԵԴ-ի կողմից որակվել էր որպես ՄԻԵԿ 6-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Մասնավորապես, նշված գործով կայացված դատական ակտով պետությունը պարտավորվել էր անձի առողջությանը հասցված վնասը փոխհատուցել: Դատական ակտը չէր կատարվել միջոցների անբավարարության հիմնավորմամբ: Անդրադարձ կկատարվի նաև *Khachatryan v. Armenia* (2009) գործին, որով դատական ակտի չկատարումը որակվել էր որպես ՄԻԵԿ 6-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
- *Fuklev v. Ukraine* (2005) գործը: Նշված գործով դիմումատուն սեփական դիմումի հիման վրա ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: Սակայն, դիմումատուի ազատման պահի դրությամբ վերջնահաշվարկ չէր կատարվել, և հասանելիք գումարը չէր վճարվել: Դիմումատուն դիմել է դատարան՝ պահանջելով բռնագանձել գործատուից իր վերջնահաշվարկված գումարը: Դատարանը բավարարել էր ներկայացված հայցը: Դիմումատուի բողոքը վերաբերել է պետական մարմինների կողմից դատական ակտի կատարումը չապահովելուն: Դիմումի հիմքում դրվել էին Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, 13-րդ հոդվածը և 1-ին արձանագրության 1-ին հոդվածը: Նշված գործով ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ հարկադիր կատարողների կողմից դատական ակտը 4 տարի անկատար թողնելը հանգեցրել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքի խախտման: Միաժամանակ, անձը զրկված էր ներպետական գործուն մեխանիզմներից՝ դատական ակտի կատարումը ուշացնելու համար ստանալ արդարացի փոխհատուցում: Եվրոպական դա-

տարանը, հաշվի առնելով հարկադիր կատարման վարույթի ընթացքը, դրա ընդհանուր ժամկետը և անորոշության վիճակը, եկել էր այն եզրահանգման, որ խախտվել է արդարացի հավասարակշռության սկզբունքը, ինչն էլ հանգեցրել է դիմումատուի սեփականության իրավունքի խախտման:

- *Brumarescu v. Romania* (1999) գործը, որով իրավական որոշակիության սկզբունքի խախտումը ՄԻԵԴ–ի կողմից որակվել էր որպես թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի խախտում: Մասնավորապես, նշված գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վերականգնվել էր տան նկատմամբ սեփականության իրավունքը: Դատախազի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը բեկանել էր օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

Հարաբերակցությունը 8–րդ հոդվածի հետ

ՄԻԵԿ 8–րդ հոդվածով երաշխավորվում է անձի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը:

Հատկանշական է, որ բնակարանի նկատմամբ իրավունքի խախտումներին վերաբերող գործերով դիմումատուները վկայակոչում են նաև թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածը, քանի որ դրանք շատ դեպքերում փոխկապակցված են և լրացնում են միմյանց:

ՄԻԵԿ 8–րդ և թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածները համատեղ կիրառվել են հիմնականում գույքի վարձակալության հետ կապված վեճերով:

Այս երկու հոդվածների կարգավորման տարբերությունները ՄԻԵԴ–ի կողմից վեր հանվեցին մի շարք գործերով:

Մասնավորապես, *Larkos v. Cyprus* (1999) գործով ՄԻԵԴ–ն անդրադարձել էր ազգային օրենսդրական կարգավորմանը, համաձայն որի՝ վարձակալության ժամկետի ավարտից հետո վարձակալը ենթակա է վտարման բնակարանից: Ի դեպ, առկա էր կարգավորումների տարբերություն այն վարձակալների համար, որոնք վարձակալում էին պետական բնակարաններ, և նրանց, որոնք վարձակալում էին մասնավոր բնակարաններ: Դատարանը գործը քննեց 14–րդ հոդվածի շրջանակնե-

րում 8–րդ հոդվածի հետ համատեղությամբ՝ արձանագրելով, որ վարձակալված բնակարանում բնակվելու վարձակալի իրավունքը պետք է դիտարկել ոչ թե թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի, այլ 8–րդ հոդվածի շրջանակներում, քանի որ այն վերաբերում է ոչ թե սեփականության իրավունքին, այլ բնակարանի նկատմամբ իրավունքին:

Մեկ այլ՝ *Soric v. Croatia* (2000) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ ո՛չ 8–րդ և ո՛չ էլ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածները չեն երաշխավորում բնակարանը գնելու վարձակալի իրավունքը: Առաջինով ընդամենը երաշխավորվում է արդեն իսկ գոյություն ունեցող բնակարանի նկատմամբ իրավունքը, իսկ վերջինը երաշխավորում է արդեն իսկ գոյություն ունեցող սեփականության անարգել օգտագործման իրավունքը:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքը անդրադարձ է կատարել նաև այն իրավական հարցին, թե արդյոք բնակարանի սեփականատերը իրավասու է լուծարելու վարձակալության պայմանագիրը: Մասնավորապես, *Velosa Barreto v Portugal* (1995) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ բնակարանի սեփականատերը իրավասու չէ լուծարելու վարձակալության պայմանագիրը և վտարելու վարձակալին բնակարանից, նույնիսկ եթե նա այդ բնակարանում բնակվելու կարիք ունի: Դատարանը գտավ, որ 8–րդ հոդվածի խախտում առկա չէ, քանի որ սեփականատիրոջ բնակության պայմանները սարսափելի չէին: Նույն գործով անդրադառնալով նաև ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածին՝ Եվրոպական դատարանն արձանագրեց, որ այս դեպքը վերաբերում է սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության կանոնին, և որ կիրառված սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ:

Cvijetic v. Croatia (2004) գործով Եվրոպական դատարանը, անդրադառնալով նախկին ամուսնուն բնակարանից վտարելու հարցին, արձանագրեց 8–րդ հոդվածի խախտում: Վճռի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ վտարման վերաբերյալ ազգային դատարանի դատական ակտը տևական ժամանակ չէր կատարվում, ինչը խախտում էր բնակարանում բնակվելու դիմումատուի իրավունքը:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ 8–րդ հոդվածով երաշխավոր-

վում է արդեն իսկ գոյություն ունեցող բնակարանի նկատմամբ իրավունքը, իսկ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածով՝ արդեն իսկ գոյություն ունեցող սեփականության անարգել օգտագործման իրավունքը: Հատկանշական է, որ ո՛չ առաջինը և ո՛չ էլ երկրորդը բացառիկ իրավունքներ չեն և անսահմանափակ պաշտպանություն չեն երաշխավորում:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու նաև, որ Եվրոպական դատարանը նախ և առաջ անդրադառնում է այն հարցին, թե արդյոք կոնկրետ գործով գույքը թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի իմաստով համարվում է բնակարան, թե ոչ, այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե արդյոք 8–րդ հոդվածով սահմանված երաշխիքները պահպանված են, թե ոչ (բնակարան մուտք գործելու, այն տիրապետելու հնարավորություն): Ինչ վերաբերում է թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի հետ հարաբերակցությանը բոլոր այն դեպքերում, երբ միջամտությունը վերաբերում է միայն մասնավոր կյանքին և որևէ գույքային ազդեցություն չունի, կամ այն աննշան է, ապա Եվրոպական դատարանը նման դեպքերում կիրառում է միայն 8–րդ հոդվածը: Թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածով նախատեսված երաշխիքների պահպանության հարցին Եվրոպական դատարանը կանդրադառնա միայն այն դեպքում, երբ միջամտությունը գույքային հետևանքներ է առաջացնում: Եվ հակառակը, բոլոր այն դեպքերում, երբ գործով չի հաստատվում 8–րդ հոդվածի իմաստով «բնակարանի» առկայություն, դատարանը կարձանագրի 8–րդ հոդվածի բացակայություն և կանդրադառնա թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի կիրառելիության հարցին:

Հարաբերակցությունը 14–րդ հոդվածի հետ

ՄԻԵԿ 14–րդ հոդվածի համաձայն՝ *նույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:*

Հատկանշական է, որ չնայած խտրականության արգելքը Կոնվենցի-

այով երաշխավորված հիմնարար իրավունքներից մեկն է, սակայն այն կիրառվում է միայն այլ հոդվածների հետ համատեղությամբ: Բացի այդ՝ 14-րդ հոդվածի կիրառելիության համար ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելու անհրաժեշտությունը բացակայում է, բավարար է միայն նշված հոդվածի կիրառելիության ոլորտի (հոդվածի իմաստով «գույքի») առկայությունը: Այսինքն՝ 14-րդ հոդվածի կիրառման համար բավարար է, որ դիմումատուն արժանացել է վերաբերմունքի, որն առնչվել է իր «գույքին», և այդ վերաբերմունքը անարդարացիորեն տարբերվել է համեմատելի իրադրությունում առկա այլ վերաբերմունքից⁷:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքից կառանձնացվեն մի շարք գործեր, որոնցով ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառվել է 14-րդ հոդվածի հետ համատեղ: Դասընթացում մասնավորապես կքննարկվեն՝

1. Inze v. Austria (1987) գործը, որի վերաբերյալ կայացված վճռով Եվրոպական դատարանը գտավ, որ առկա է խտրականություն, քանի որ պատասխանող պետության օրենսդրությունը ժառանգման իրավունքի հարցում նախապատվությունը տալիս է օրինական երեխաներին:

2. Carson v. UK (2010) գործը, որով ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառվել է 14-րդ հոդվածի հետ համադրությամբ: Մասնավորապես, նշված գործով քննարկման առարկա էր դարձվել այն հարցադրումը, թե արդյոք առկա է Կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի և 14-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելման սկզբունքի խախտում այն դեպքում, երբ անձը բնակության վայրի փոփոխության հետևանքով զրկվել է կենսաթոշակի (ոչ մասնակցային) վերահաշվարկման իրավունքից: Հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայում կենսաթոշակները վերահաշվարկվում էին միայն այն դեպքում, երբ թոշակ ստացողները Միացյալ Թագավորության սովորական բնակիչներ էին կամ բնակվում էին մի երկրում, որտեղ կենսաթո-

⁷ Carson and others v. The United Kingdom, 16/03/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգառ թիվ 42184/05, կետ 63, A. Grgic, Z. Mataga, M. Longar, A. Vilfan, A guide to the implementation of the European convention on human rights and its protocols. The right to property under the European convention on human rights, Human rights handbooks, N10.

շակների վերահաշվարկի վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ուներ Միացյալ Թագավորության հետ: Մնացած վայրերում բնակվողները շարունակում էին ստանալ բազային պետական կենսաթոշակը: Դատարանն արձանագրեց խախտման բացակայություն, և անհիմն համարեց դիմումատուի հիմնական պնդումն այն մասին, որ իրենք հարաբերականորեն նման իրավիճակում էին, ինչ վերահաշվարկ ստացած թոշակառուները, քանի որ իրենք աշխատել են Միացյալ Թագավորությունում և կատարել են պարտադիր վճարումներ պետական ապահովագրության հիմնադրամին: ՄԻԵԴ-ը նշված դիրքորոշումը հիմնավորեց հետևյալ հանգամանքներով.

– Ի տարբերություն անհատական կենսաթոշակային համակարգի, որտեղ վճարումները կատարվում են անհատական ֆոնդին և կապված էին ակնկալվող եկամուտին, այս դեպքում պետական ապահովագրական հիմնադրամին կատարվող վճարումները կապ չունեն կենսաթոշակի հետ, այլ վճարվում են սոցիալական ապահովության բոլոր բարիքներից օգտվելու համար: Այն համալրվում է բոլոր բնակիչների կողմից վճարված հարկերից:

– Համակարգի բնույթը պետական է և նպատակ է հետապնդում երաշխավորելու կենսամակարդակի նվազագույն չափանիշներ, տվյալ երկրի թոշակառուներին ապահովագրելու տնտեսական և սոցիալական փոփոխություններից, ինչպիսիք են, օրինակ, գնաճի տեմպերը, կենսապահովման հարաբերական ծախսերը, տոկոսադրույքները, տնտեսական աճի տեմպերը, փոխարժեքները, սոցիալական ապահովության պայմանները և հարկային համակարգերը, որոնք կարող էին յուրաքանչյուր երկրում յուրովի ներգործել թոշակի արժեքի վրա (տես *Carson and others v. The United Kingdom*, 16/03/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգապ թիվ 42184/05, կետ 84–86):

3. *Pichkur v. Ukraine* (2013) գործը, որով ՄԻԵԴ-ն արձանագրեց ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի և 14–րդ հոդվածի խախտում, քանի որ այս դեպքում բնակության վայրի փոփոխության հետևանքով անձը զրկվել էր ոչ թե կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքից, այլ հենց կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Մասնավորապես, դատարանն արձանագրեց, որ նշված գործը

պետք է տարանջատել *Carson and Others v. the United Kingdom* (2010) գործից, որտեղ կարգավորումների տարբերությունը վերաբերում էր կենսաթոշակի վերահաշվարկմանը այն անձանց համար, որոնք բնակվում էին այլ երկրներում, և որևէ մեկը կասկածի տակ չէր դրել անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը: Մինչդեռ, այս գործով անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը կախվածության մեջ էր դրվել նրա բնակության վայրով, և ստեղծվել էր մի իրավիճակ, երբ դիմումատուն, երկար տարիներ աշխատելով Ուկրաինայում, կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո զրկվում է կենսաթոշակ ստանալու իրավունքից միայն այն պատճառով, որ նա այլևս Ուկրաինայում չի բնակվում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ այս դեպքում դիմումատուն հարաբերականորեն նման իրավիճակում էր, ինչ Ուկրաինայում բնակվող թոշակառուները: Բացի այդ՝ ՄԻԵԴ-ը, հաշվի առնելով բնակչության տեղաշարժի տեմպերի աճը, միջազգային համագործակցության և ինտեգրացիոն գործընթացի բարձր մակարդակը, բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, եկավ այն եզրահանգման, որ այլ երկրներ կենսաթոշակի փոխանցման անհնարինությունը այլևս չի կարող պայմանավորվել տեխնոլոգիական դժվարություններով (տե՛ս *Pichkur v. Ukraine*, 07/11/2013 թ. *վճիռ, գանձադր թիվ 10441/06*, կետ 51–53):

4. *Gaygusuz v. Austria* (1996) գործը, որի վերաբերյալ կայացված վճռով դատարանը գտավ, որ առկա է խտրականություն այն դեպքում, երբ պետությունը մերժում է անձին տրամադրել անհետաձգելի բժշկական օգնություն միայն այն հիմքով, որ նա տվյալ երկրի քաղաքացի չէ: Հատկանշական է, որ այս գործով 14-րդ հոդվածի կիրառման համար խոչընդոտ չէր նույնիսկ այն հանգամանքը, որ անդամ պետությունները Կոնվենցիայի ուժով պարտավոր չէին ապահովել անհետաձգելի բժշկական օգնություն ստանալու իրավունք: Խախտումն արձանագրելու համար բավական է եղել այն փաստը, որ նման իրավունք նախատեսված էր տվյալ երկրի քաղաքացիների համար:

Դասընթացում քննարկման առարկա կդարձվեն նաև 14-րդ հոդվածի խախտումը բացառող հանգամանքները: Մասնավորապես, նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ չի թույլատրվում պետական մար-

մինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նշված հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, ինչպես նաև դրանց կիրառության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերլուծության արդյունքում եզրահանգում կկատարվի այն մասին, որ 14-րդ հոդվածով նախատեսված պետության հայեցողության շրջանակներն ավելի սահմանափակ են, քան թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հանձնարարվող փաստաթղթեր (իրավական և դատական ակտեր)

Ա) Իրավական ակտեր

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
2. ՄԻԵԴ 1-ին արձանագրություն (1-ին հոդված)
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

Բ) Դատական ակտեր

ա) ՄԻԵԴ վճիռներ

1. Sporrøng and Lönnroth v. Sweden, 23/09/1982 թ. վճիռ, գանգատ թիվ 7151/75, 7152/75.
2. Agosi v. The UK, 24/10/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 9118/80.
3. Papamichalopoulos v. Greece, 24/06/1993 թ. վճիռ, գանգատ թիվ 14556/89.
4. Brumarescu v. Romania (1999), 28/10/1999 թ. վճիռ, գանգատ թիվ 28342/95.
5. Handyside v The United Kingdom, 07/12/1976 թ. վճիռ, գանգատ թիվ 5493/72.
6. Mellacher and others v Austria, 19/12/1989 թ. վճիռ, գանգատ թիվ 10522/83, 11011/84, 11070/84.
7. Marckx v. Belgium (1979), 13/06/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6833/74.
8. Anheuser–busch INC. v. Portugal, 11/01/2007 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 73049/01.
9. Van Marle and Others v. the Netherlands, 26/06/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 8543/79, 8674/79, 8675/79, 8685/79.
10. Tre Traktor Aktiebolag v Sweden, 07/07/1989 թ. վճիռ, գանգատ

թիվ 10873/84.

11. Malik v. The United Kingdom, 13/03/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 23780/08.

12. Ceni v. Italy, 04/02/2014 թ. վճիռ, գանգատ թիվ 25376/06.

13. Bitto and others v. Slovakia, 28/01/2014 թ. վճիռ, գանգատ թիվ 30255/09.

14. Beyeler v Italy, 05/01/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 33202/96.

15. Gasus Dosier v Netherlands, 23/02/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 15375/89.

16. Kopecký v. Slovakia, 28/09/2004 թ. վճիռ, գանգատ թիվ 44912/98.

17. Pine Valley Developments Ltd and Others v. Ireland, 29/11/1991 թ. վճիռ, գանգատ թիվ 12742/87.

18. Pressos Compania Naviera S. A v Belgium, 20/11/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 17849/91.

19. Centro Europa 7 S. r. l. and Di Stefano v. Italy, 07/06/2012 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 38433/09.

20. Autronic AG v. Suisse, 22/05/1990 թ. վճիռ, գանգատ թիվ 12726/87.

21. James and others v UK, 21/02/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 8793/79.

22. Lithgow and Others v. the United Kingdom, 08/07/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 9006/80, 9262/81, 9263/81, 9265/81, 9266/81, 9313/81, 9405/81.

23. Centre for Legal Resources On Behalf of Valentin Câmpeanu v. Romania, 17/07/2014 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 47848/08.

24. Sovtransauto holding v. Ukraine, 25/07/2002 թ. վճիռ, գանգատ թիվ 48553/99.

25. Broniowski v. Poland, 22/06/2004 թ. վճիռ, գանգատ թիվ 31443/96.

26. Blumberga v. Latvia, 14/10/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 70930/01.

27. De Kleine Staarman v The Netherlands, 16/05/1985 թ. վճիռ, գանգատ թիվ 1050383.

28. Deumeland v. Germany, 29/05/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 9384/81.

29. Carson and others v. The United Kingdom, 16/03/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 42184/05.

30. Pichkur v. Ukraine, 07/11/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 10441/06.
31. Luczak v Poland, 27/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 77782/01.
32. Colacrai v. Italy, 15/07/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 63868/00.
33. Sunday times v. The United Kingdom, 26/04/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6538/74.
34. Minasyan and Semerjyan v. Armenia, 23/06/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 27651/05.
35. Minasyan and Semerjyan v. Armenia, 07/06/2011թ. վճիռ, գանգատ թիվ 27651/05.
36. Carbonara and Ventura v. Italy, 30/05/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 24638/94.
37. Hentrich v. France, 22/09/1994 թ. վճիռ, գանգատ թիվ 13616/88.
38. The former king of Greece and others v. Greece, 23/11/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 25701/94.
39. Akkus v. Turkey, 09/07/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 19263/92.
40. Chassagnou and others v. France, 29/04/1999 թ. վճիռ, գանգատ թիվ 25088/94, 28331/95, 28443/95.
41. Air Canada v. The United Kingdom, 05/05/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 1846591.
42. Rousk v Sweden, 25/07/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 27183/04.
43. Paulet v. The United Kingdom, 13/05/2014 թ. վճիռ, գանգատ թիվ 6219/08.
44. JGK STATYBA LTD AND GUSELNIKOVAS v. LITHUANIA, 05/11/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 3330/12.
45. Loizidou v Turkey, 23/03/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 15318/89.
46. The Holy Monasteries v. Greece, 09/12/1994 թ. վճիռ, գանգատ թիվ 13092/87, 13984/88.
47. Guiso–Gallisay v. Italy, 22/12/2009 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 58858/00.
48. VISTIŅŠ AND PEREPJOLKINS v. LATVIA, 25/10/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 71243/01.
49. Pyrantiene v. Lithuania, 12/11/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 45092/07.

50. Poghosyan and Baghdasaryan v. Armenia, 12/06/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 22999/06.

51. Burdov v. Russia, 15/01/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 33509/04.

52. Fuklev v. Ukraine, 07/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 71186/01.

53. Larkos v Cyprus, 18/02/1999 թ. վճիռ, գանգատ թիվ 29515/95.

54. Velosa Barreto v Portugal, 21/11/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 18072/91.

55. Cvijetic v. Croatia, 26/02/2004 թ. վճիռ, գանգատ թիվ 71549/01.

56. Inze v. Austria, 28/10/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 8695/79.

57. Gaygusuz v. Austria, 16/09/1996 թ. վճիռ, գանգատ թիվ 17371/90.

բ) ՄԻԵԴ և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի որոշումներ

58. Bramelid and Malmström v. Sweden, 12/10/1982 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 8588/79, 8589/79.

59. Harrach v. Czech Republic, 27/05/2003 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 77532/01.

60. S. v. the United Kingdom, 14/05/1986 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 11716/85.

61. X v. the Federal Republic of Germany, 13/12/1979 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 8410/78.

62. Agrotexim and Others v. Greece, 26/09/1995 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 15/1994/462/543.

63. X. v. Austria, 04/10/1966 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 1706/62.

64. Yarrow and Others v. the United Kingdom, 28/01/1983 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 9266/81.

65. O. N. v. Bulgaria, 06/04/2000 թ. ՄԻԵԴ որոշում, գանգատ թիվ 35221/97.

66. Stec and others v United Kingdom, 06/07/2005 թ. Մեծ պալատի որոշում, գանգատ թիվ 65731/01, 65900/01.

67. Dima v. Romania, 26/05/2005 թ. ՄԻԵԴ որոշում, գանգատ թիվ 58472/00.

68. Smith Kline and French Laboratories Ltd v Netherlands, 04/10/1990 թ. ՄԻԵԴ որոշում, գանգատ թիվ 12633/87.

69. Trajkovski v. the Former Yugoslav Republic of Macedonia, 07/03/2002 թ. ՄԻԵԴ որոշում, գանգատ թիվ 53320/99.

70. WASA Omsesidigt and Others v. Sweden, 14/12/1988 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 13013/87.

71. Svenska Managamentgruppen AB v. Sweden, 02/12/1985 թ. Հանձնաժողովի որոշում, գանգատ թիվ 1103,6/84.

72. Soric v Croatia, 16/03/2000 թ. ՄԻԵԴ որոշում, գանգատ թիվ 43447/98.

73. Manukyan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգատ թիվ 44326/13, Dzvakerian v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգատ թիվ 44331/13, Asatryan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգատ թիվ 44335/13, Gabrielyan v. Armenia, 18/12/2014 թ. կոմունիկացնելու մասին որոշում, գանգատ թիվ 44338/13.

գ) Այլ դատական ակտեր

74. Լյուդմիլա Յվետկովա ընդդեմ Սվետլանա Հովակիմյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի 29/07/2011 թվականի թիվ ԳԴ1/0145/02/10 որոշում (գույք հատկացնելու մասին վարչական ակտին վստահելու իրավունք):

75. Գոլդուեյ ընդդեմ Վալթի Մոթորս, ՀՀ վճռաբեկ դատարան 19/10/2012 թվականի թիվ ԵՇԴ/0177/02/11 որոշում (վնասի հատուցում, պահանջի իրավունք):

76. «Քաղաքացի Գևորգ Սլոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ Սահմանադրական դատարանի 18/04/2014 թվականի թիվ ՍԴՈ-1148 որոշում:

2. Գրականություն (ծեռնարկներ և ընթերցվող նյութեր)

ա) Պարտադիր գրականություն

1. Էլիսաբեր Մուրբեյ, Գործեր և նյութեր, Մարդու իրավունքների եվ-

րուպական կոնվենցիա, 2010 թ., էջ 943–1007:

2. Օ. Մ. Օյան, Ն. Մ. Լ. Հեբիչ, Լ. Մ. Կրյուգեր, Ճղյանն ընդդեմ Հաստատանի գործով Ամստերդամի միջազգային իրավական կլինիկայի զեկույց, 24 թերթ:

բ) Լրացուցիչ գրականություն

3. Sébastien Van Drooghenbroeck, «The concept of “possessions” within the meaning of Article 1 of the First Protocol to the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms», *The European legal forum* 7–2000/01, pp. 437–496.

4. Stefan Kirchner, Katarzyna Geler–Noch «Compensation under the European convention on human rights for expropriations enforced prior to the applicability of the convention», 2012, 19(1), p. 21–29.

5. Laurence R. Helfer, «The new innovation frontier? Intellectual property and the European court of human rights», *Harvard Int. law J* 49 N 1 Wint 2008, p 52.

6. Aida Grgjæ, Zvonimir Mataga, Matija Longar, Ana Vilfan, «A guide to the implementation of the European Convention on Human Rights and its protocols», *Human rights handbooks*, No. 10, 2007.

7. Jean–François Akandji–Kombe, *Human rights handbook*, No. 7: Positive obligations under the European Convention on Human Rights. A guide to the implementation of the European Convention on Human Rights, Strasbourg, Council of Europe, 2007.

8. Monica Carss–Frisk, *A guide to the implementation of the European convention on human rights and its protocols. The right to property under the European convention on human rights*, *Human rights handbooks*, N4.

9. Arjen van Rijn, *Right to the Peaceful Enjoyment of One’s Possessions*, in *Theory and practice of the European convention on human rights*, 863, 864, 4ed, 2006.

10. Laurent Sermet, *The European convention on human rights and property rights*, 13 (1998).

11. Orit Frischman Afori, *Human rights and copyright: The introduction of natural law considerations into American copyright law*, 14 *FORDHAM*

INTELL. PROP. MEDIA& ENT. L. J. 497, 524 (2004).

12. F. Sudre, Droit européen et international des droits de l'homme, PUF, 7e éd, 2005.

13. A. Grgic, Z. Mataga, M. Longar, A. Vilfan, Aguide to the implementation of the European convention on human rights and its protocols. The right to property under the european convention on human rights, Human rights handbooks, N 10.

3. Դասընթացի համար մշակված հատուկ ուսումնական նյութեր, ձեռնարկներ և ընթերցվող նյութեր

1. Դասախոսության՝ էլեկտրոնային ներկայացման նյութեր ծրագրում (power point) ներառված բոլոր թեմաներով

2. Իրավիճակային խնդիրներ

4. Համացանցային էջեր

1. www.echr.coe.int – Մարդու իրավունքների եվրոպական դատարան

2. www.coe.am – ԵԽ հայաստանյան գրասենյակի համացանցային կայքը՝ հայերեն բազմաթիվ ԵԽ փաստաթղթերով:

3. www.justice.am – Արդարադատության նախարարության համացանցային էջը, որտեղ զետեղված են Հայաստանի դեմ ՄԻԵԴ–ի վճիռների պաշտոնական հրապարակումները հայերեն:

4. Հայաստանի դատավորների ընկերակցության համացանցային էջը (մատչելի է դարձնում ՄԻԵԿ–ի ձեռնարկները և նախադեպային իրավունքը (վճիռներ ընդդեմ այլ երկրների)՝ հայերեն:

5. www.sutyajnik.ru – ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքը ռուսերեն՝ ներառյալ Ռուսաստանի սահմանադրական դատարանի և այլ դատարանների նախադեպային իրավունքը հանրության համար հետաքրքրություն ներկայացնող գործերի առնչությամբ:

6. www.arlis.am – Հայաստանի իրավական փաստաթղթերի առցանց տվյալների բազա, որտեղ ներառված են Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ–ի վճիռները:

7. ՀՀ դատական տեղեկատվական համակարգ:

ԴԱՍ 1

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: 12/02/1959 թ. դիմումատուի հայրը հավաքածուներ կազմելու համար օգտագործվող 131 հատ ոսկի և 2,151 հատ արծաթե մետաղադրամներ պահելու համար դատապարտվել է 1 տարվա ազատազրկման՝ գույքի բռնագրավմամբ:

01/04/1992 թ. դատավճիռը բեկանվել է, և դիմումատուն 20/09/1992 թ. պահանջել է վերադարձնել իր հորը պատկանող մետաղադրամները՝ հիմք ընդունելով 1991 թ. ընդունված օրենքը:

Մասնավորապես, նշված օրենքով նախատեսվում էր, որ բնեղենով հատուցում ստանալու համար անձը պետք է գրավոր պահանջ ներկայացնի, որով պետք է ապացուցի իր իրավունքները պահանջվող գույքի նկատմամբ և նշի, թե ինչ եղանակով է այն անցել պետությանը: Միաժամանակ, անձը պետք է նշի պահանջվող գույքի գտնվելու վայրը:

19/09/1995 թ. շրջանային դատարանը արձանագրել է, որ գործնականորեն դիմումատուի համար անհնար է բավարարել 1991 թվականի օրենքով սահմանված պահանջները և ապացուցել 01/04/1991 թվականի դրությամբ շարժական գույքի գտնվելու վայրը: Նշված պատճառաբանությամբ շրջանային դատարանը վճռել է պարտավորեցնել ներքին գործերի նախարարությանը՝ վերադարձնել դիմումատուի մետաղադրամները:

Նախարարությունը, բողոքարկելով շրջանային դատարանի վճիռը, նշել է, որ այդ մետաղադրամներին վերաբերող բոլոր փաստաթղթերը ոչնչացվել են, և մետաղադրամների գտնվելու վայրի ապացուցման բեռը պետք է դրվի դիմումատուի վրա:

29/01/1997 թ. մարզային դատարանը բեկանել է շրջանային դատարանի վճիռը և մերժել է դիմումատուի հայցը՝ պատճառաբանելով, որ դիմումատուն, չնշելով մետաղադրամների գտնվելու հստակ վայրը, չի կատարել 1991 թվականի օրենքով նախատեսված պարտավորությունը:

Վճռաբեկ դատարանը անփոփոխ է թողել նշված դատական ակտը և ամրագրել է ստորադաս դատարանի դիրքորոշումն այն մասին, որ դիմումատուն չի ներկայացրել բավարար ապացույց այն մասին, որ 1991 թ. ներքին գործերի նախարարությունը դեռևս տիրապետում էր առգրավ-

վաճ մետաղադրամներին:

Դիմումատուն իր գանգատով նշել է, որ խախտվել է գույքից անարգել օգտվելու իր իրավունքը:

Հարց: Արդյո՞ք փվյալ դեպքում ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով առկա է սեփականության իրավունք:

ԴԱՍ 2

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Դիմումատուներին պատկանում են կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերության բաժնետոմսերը: Ընկերությանը պատկանող հողատարածքի օտարման վերաբերյալ պետական լիազոր մարմնի որոշման հետևանքով ընկերությունը ֆինանսական կորուստներ է կրել և արդյունքում սնանկ ճանաչվել: Նշանակվել է սնանկության կառավարիչ: Բաժնետերերը զանգատ են ներկայացրել ՄԻԵԴ՝ պատճառաբանելով, որ պետական մարմնի որոշմամբ խախտվել է ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրենց սեփականության իրավունքը, քանի որ միջամտության հետևանքով բաժնետոմսերի արժեքը նվազել էր:

Պատասխանող պետության կողմից ներկայացվել էր փաստարկ այն մասին, որ դիմումատուները ընդամենը ընկերության բաժնետերեր են, հետևաբար պետական մարմնի որոշմամբ չէր կարող խախտվել նրանց սեփականության իրավունքը, քանի որ նրանք Կոնվենցիայի իմաստով տուժող չեն:

Հարցեր:

- 1. Արդյո՞ք բաժնետերերը ՄԻԵԿ իմաստով տուժող են և իրավասու են վիճարկելու պետական մարմնի որոշումը:*
- 2. Հարցին պատասխանե՞ք այն հաշվառմամբ, որ դիմումատու բաժնետերերին է պատկանում ընկերության բաժնետոմսերի 5 տոկոսը:*

ԴԱՍ 3

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Պետական ծառայողների համար օրենքով նախատեսված են եղել որոշակի սոցիալական երաշխիքներ, մասնավորապես սահմանված էր, որ պետական ծառայողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով աշխատանքային պարտականությունները դադարելու դեպքում նշանակվում է կենսաթոշակ վերջինիս միջին տարեկան աշխատավարձի 60 տոկոսի չափով: Ա.-ն աշխատանքի է ընդունվել նշված օրենքի գործողության ժամանակ: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախկին օրենքով սահմանված կենսաթոշակը կրճատվել է՝ կազմելով միջին տարեկան աշխատավարձի 30 տոկոսը: Ընդ որում՝ օրենսդրական փոփոխությամբ նախատեսվել է, որ այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո կենսաթոշակի անցնող պետական ծառայողների կենսաթոշակի հաշվարկը իրականացվելու է նոր կարգին համապատասխան: Ա.-ն օրենսդրական փոփոխությունների ընդունումից 1 տարի անց, կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով, ազատվել է աշխատանքից:

Պետական ծառայող Ա.-ն փաստարկել է, որ Պետությունը միացել է մի շարք միջազգային պայմանագրերի, որոնցով սահմանվում է Պետության պարտավորությունը՝ երաշխավորելու պետական ծառայողների պատշաճ վարձատրությունը, թոշակի գնալու պայմանները և սոցիալական երաշխիքները: Միաժամանակ, սահմանվել է, որ պետական ծառայողի ծերության կենսաթոշակի չափը պետք է հնարավորինս մոտ լինի պետական համակարգում նրա զբաղեցրած պաշտոնում ստացած աշխատավարձին: Օրենքի դրույթների տարածումը մինչև դրա ընդունումը նշանակված և ներկայումս պաշտոնավարող անձանց նկատմամբ վատթարացնում է տվյալ անձանց իրավական վիճակը: Պետական ծառայողը նշել է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված իր գույքային իրավունքները և, մասնավորապես, օրինական ակնկալիքները:

Պետությունն առարկել է, որ նման սոցիալական քաղաքականություն-

նը հետապնդել է իրավաչափ նպատակ: Մասնավորապես, օրենսդրական փոփոխությունները պայմանավորված են եղել բյուջետային կրճատումներով: Ավելին, Պետությունը նշել է, որ «գույքային իրավունքների» խախտման մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ գործում է կուտակային կենսաթոշակային համակարգ, այսինքն, երբ անձն իր իսկ միջոցներն է ներդնում ապագայում կենսաթոշակ ստանալու համար, հակառակ դեպքում սեփականության իրավունքի մասին խոսք չի կարող լինել:

Հարց: Արդյո՞ք պեղական ծառայողների կենսաթոշակի չափի կրճատման վրա տարածվում է ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը:

ԴԱՍ 4

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Գործով 4 դիմումատուները 2000 թվականից մինչև 2010 թվականը տարբեր ժամանակահատվածներում իրականացրել են հաշվապահական գործունեություն: 2011 թ. ընդունված օրենքով հաշվապահական գործունեությունը ճանաչվում է որպես լիցենզավորման ենթակա գործունեություն: 2012 թ. դիմումատուներից մեկը, հիմք ընդունելով 2011 թվականի հաշվապահական գործունեությունը կարգավորող ակտի անցումային դրույթները, դիմել է հաշվապահի լիցենզիա ստանալու համար: Նրանցից յուրաքանչյուրից պահանջել են համապատասխան հանձնաժողով ներկայացնել 5 տարեկան հաշվետվություններ: Բացի այդ՝ նրանք անցել են հարցազրույց: Հանձնաժողովը մերժել է դիմումատուների դիմումները: Դիմումատուները բողոքարկել են Հանձնաժողովի որոշումները բողոքարկման հանձնաժողովում: Նրանցից կրկին պահանջել են ներկայացնել իրենց կողմից կազմված հաշվետվություններ և անցնել հարցազրույց: Բողոքարկման հանձնաժողովը բողոքները ևս մերժել է այն հիմքով, որ դիմումատուների հաշվետվությունները որոշ հիմնական կետերով և նրանց կողմից հարցազրույցի ընթացքում տրված պատասխանները չէին փաստում վերջիններիս մասնագիտական որակավորման բավարար մակարդակի մասին:

Դիմումատուները նշել են, որ Բողոքարկման հանձնաժողովի որոշման արդյունքում նրանց եկամուտները, ինչպես նաև նրանց հաշվապահական գործունեության ոչ գույքային ակտիվները (գուղվիլը) նվազել են: Նրանք նշել են, որ արդյունքում տեղի են ունեցել նրանց սեփականության իրավունքի խաղաղ օգտագործման իրավունքի միջամտություն և նաև մասնակի սեփականագրկում առանց փոխհատուցման:

Կառավարությունը նշել է, որ դիմումատուները ձեռք չեն բերել որպես հաշվապահ գործելու իրավունք մինչև հաշվապահական գործունեությունը կարգավորող օրենքի ընդունումը, քանի որ մինչև այդ պահը գոյություն չի ունեցել իրավական առումով ճանաչված և պաշտպանված իրավունք, այլ միայն այդ գործունեությամբ զբաղվելու ազատություն: Ավելին, նույնիսկ եթե լիներ ձեռք բերված իրավունք, այն Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չէր կարող գնահատ-

վել որպես սեփականության համաձայն: Կառավարությունը նաև ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ Նիդերլանդների օրենսդրության համաձայն՝ գոյություն չունի գուդվիլի իրավունք, որը կարող է գնահատվել որպես սեփականություն:

Հարց: Արդյո՞ք սույն դեպքում ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով առկա է սեփականության իրավունք, և եթե այո՞, ապա արդյո՞ք խախտվել է այդ իրավունքը:

ԴԱՍ 5

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Դիմումատու պորտուգալական ընկերությունը զբաղվում էր գարեջրի արտադրությամբ, որը արտադրվում էր «Բուդվայգեր» անվան տակ: 1981 թ. ընկերությունը ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացնում համապատասխան ներպետական լիազոր մարմնին: Ներկայացված հայտի դեմ առարկել է չեխական ընկերությունը, որն ուներ «Բուդվայգեր գարեջուր» գրանցված ապրանքային նշան: 1995 թ. դիմումատու ընկերությունը ստացել է ծանուցում այն մասին, որ Դատարանի որոշմամբ ապրանքային նշանի գրանցման գործընթացը կասեցվել է: Դրանից հետո ներպետական լիազոր մարմինը գրանցել է ապրանքային նշանը: Չեխական ընկերությունը վիճարկել է այդ գրանցման որոշումը առաջին ատյանի դատարանում՝ վկայակոչելով Պորտուգալիայի և Չեխիայի միջև կնքված երկկողմանի համաձայնագիրը, որն ուղղված է գրանցված ապրանքային նշանների պաշտպանությանը: Առաջին ատյանի դատարանը մերժել է չեխական կազմակերպության դիմումը, սակայն դատարանի այդ որոշումը բեկանվել է վերաքննիչ դատարանի կողմից, որը ճանաչել է այն փաստը, որ Դիմումատու ընկերության ապրանքային նշանի գրանցումը անվավեր էր: Դիմումատու ընկերության կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված դիմումը մերժվել է 2001 թ. այն հիմքով, որ չեխական ընկերության ապրանքային նշանը պաշտպանվում էր երկկողմանի համաձայնագրի ուժով: Դիմումատուն նշել է, որ նա զրկվել է իր ապրանքային նշանից մի այնպիսի երկկողմանի համաձայնագրի ուժով, որը ուժի մեջ է մտել ապրանքային նշանը գրանցելու դիմումը ներկայացնելուց հետո:

Հարց: *Արդյո՞ք ապրանքային նշանի գրանցման հայտի ներկայացման փուլում անձն ունի Կոնվենցիայի նշված հոդվածի ուժով պահպանվող իրավունք:*

ԴԱՍ 6

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Հունաստանի նախկին թագավորը պնդել է, որ իրեն են պատկանել վեճի առարկա հողատարածքները և այդ հողատարածքների վրա առկա անշարժ գույքերը, որոնց մի մասը ձեռք է բերվել իր իրավանախորդ միապետերի օրոք: Այդ հողատարածքների մի մասը գնվել է միապետերի մասնավոր միջոցներով, մյուս մասը Հունաստանը փոխանցել է նրանց բացարձակ տնօրինմանը՝ նրանց ունեցած կարգավիճակի հաշվառմամբ (այս առումով դիմումատուին ներկայացրել է ապացույցներ այն մասին, որ իրավանախորդ միապետերը, ցանկանալով այդ հողատարածքները ձեռք բերել փոխհատուցմամբ, հունական բանկում ավանդներ են ներդրել): Հետագայում հողատարածքների մի մասը փոխանակվել է անշարժ գույքի հետ, և որպես այդ գույքերի միջև արժեքային տարբերություն՝ թագավորների կողմից վճարվել է փոխհատուցում:

Այդ հողատարածքներից մեկում էր թագավորական նստավայրը, որը դիմումատուի իրավանախորդների կողմից վեր էր ածվել ընտանեկան սեփականության մի տեսակի, որը այդ պահին գործող օրենսդրության համապատասխան գործում էր 4 սերունդների համար, այսինքն՝ այդ սերունդների ավարտից հետո սեփականության իրավունքը դադարում էր: Այդ կալվածքը փոխանցվել է 4 սերունդների, այնուհետև միապետության վերացումից հետո կալվածքը փոխանցվել է Հունաստանի կառավարությանը օրենքի հիման վրա, իսկ այլ հողատարածքներ առանց փոխհատուցման վերածվել են պետական սեփականության: Այնուհետև կալվածքի մի մասը վերադարձվել է թագավորական ընտանիքին, մի մասը հանձնվել է հող չունեցող էմիգրանտներին: Կալվածքի մի մասի վերադարձը կատարվել է այն հիմքով, որ սեփականագրկումը տեղի է ունեցել առանց փոխհատուցման, ինչը հակասում էր այդ ժամանակահատվածում գործող Սահմանադրության պահանջներին: Օրենսդրական ակտի համաձայն՝ այդ կալվածքի մասը դարձել է թագավորական ընտանիքի բացառիկ սեփականությունը: Հետագայում, ընդունված օրենսդրական ակտի համաձայն, թագավորական ընտանիքին պատկանող բոլոր շարժական և անշարժ գույքերը պետք է առգրավվեր և

անցներ Հունաստանին: Միաժամանակ, սահմանվել է փոխհատուցում 100.000 դոլարի չափով, և նշվել է, որ այդ փոխհատուցումը կարող է պահանջվել 1975 թվականից, սակայն մինչ օրս որևէ փոխհատուցման պահանջ չի ներկայացվել: 1974 թ. Հունաստանում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում հաստատվել է պառլամենտական հանրապետություն: Նոր կառավարության և նախկին թագավորի ընտանիքի միջև 1992 թ. հաստատվել է համաձայնություն, որի համաձայն՝ նախկին թագավորը Հունաստանի ազգային ֆոնդին է հանձնում կալվածքի հողատարածքում առկա անտառները, նշվածի հիմքով Հունաստանի կառավարությունը հրաժարվում է թագավորական ընտանիքի ունեցած հարկային պարտավորությունների վերաբերյալ հայց հարուցելու իրավունքից, միաժամանակ սահմանվել են ժառանգման հարկի, եկամտահարկի վերաբերյալ որոշակի արտոնություններ թագավորական ընտանիքի համար: Այս համաձայնությունը ստացել է օրենքի ուժ: Այնուհետև, 1994 թ. ընդունվել է օրենք, որի համաձայն՝ անվավեր են ճանաչվել թագավորական ընտանիքի և նախկին կառավարության միջև ձեռք բերված համաձայնությունը և դրանից ծագող բոլոր գործողությունները, այդ թվում՝ ազգային ֆոնդին անտառների հանձնումը: Ազգային ֆոնդը բողոք է ներկայացրել, որի արդյունքում ընդունվել է հռչակագիր, որով չեղյալ է ճանաչվել 1994 թվականի օրենքը: Ներպետական դատարաններն արձանագրել են այն հանգամանքը, որ թագավորական ընտանիքի սեփականության վերադարձը Սահմանադրության խախտում է, այդ հիմքով 1994 թվականի օրենքը հակասում է Սահմանադրությանը:

Կառավարությունը նշել է, որ վիճարկվող սեփականությունը սերտորեն կապված է պետության ղեկավարի ինստիտուտի հետ և այդ պատճառով սեփականություն չէ՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Կառավարությունը նաև նշել է, որ բոլոր եվրոպական պետություններում առկա է եղել հստակ սահմանազատում պետական և մասնավոր սեփականության միջև: Պետական սեփականությունը պատկանում էր պետությանը և միապետերի տիրապետման տակ էր՝ որպես պետության ղեկավարների: Հունաստանի իշխանությունները նշել են, որ նման օբյեկտներն ունեցել են մասնակիորեն հանրային բնույթ: Նշվածն արտահայտվում էր հետևյալում. այսպես,

օրինակ՝ նշված գույքն ամբողջովին ազատված էր հարկերի վճարումից, ժառանգման դեպքում հարկ չէր գանձվում: Այսպես, եթե կիրառվեր ժառանգման հարկ նշված գույքի նկատմամբ, ապա այդ հարկերի գումարը 4 սերունդների ժառանգման նկատմամբ կիրառվելու դեպքում կգերազանցեր այդ գույքերի շուկայական արժեքը: Կիրառվում էին նաև մի շարք այլ արտոնություններ, որոնց արդյունքում այդ գույքի արժեքը ավելանում էր: Այդ առումով էական չէր, թե ինչպես է այդ օբյեկտներից յուրաքանչյուրը ձեռք բերվել. այն իր մեջ ներառում էր անտառներ, պատմական վայրեր, որոնք սահմանադրական պաշտպանության առարկա էին, և որևէ քաղաքացի չէր կարող այդպիսի գույք ձեռք բերել:

Դիմումատուներն իրենց հերթին նշել են այն հանգամանքը, որ թագավորական ընտանիքի անդամներն ունեցել են մասնավոր սեփականություն, տարբեր ժամանակահատվածներում ընդունվել էր նաև հունական կառավարության կողմից: Այսպես, օրինակ՝ 1992 թվականի համաձայնությունը չէր կարող կնքվել, եթե կառավարությունը թագավորական ընտանիքին չդիտարկեր որպես գույքի սեփականատեր:

Դիմումատուները նշել են՝ այն փաստը, որ Կառավարությունը որպես հանրային շահից բխող միջամտություն վկայակոչել է այդ տարածքներում անտառների, պատմական վայրերի առկայությունը, չի կարող արդարացի լինել, քանի որ միապետությունը վերացել է 1974 թ., իսկ սեփականությունը նրանցից վերցվել է միայն 1994 թ., այսինքն՝ 20 տարի անց: Ավելին, այդ տարածքների թագավորական ընտանիքի տնօրինման ողջ ընթացքում այդ տարածքների պահպանման հետ կապված որևէ դժգոհություն առկա չի եղել:

Հարց: Արդյո՞ք տեղի է ունեցել սեփականությունից զրկում, և եթե այո՞, ապա արդյո՞ք պահպանվել են սեփականությունից զրկելու օրինականության պայմանները:

ԴԱՍ 7

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Դիմումատուները Բրատիսլավայում գտնվող բնակելի շինությունների 21 սեփականատերեր են: Նրանց նկատմամբ կիրառվել են վարձավճարների որոշակի սահմանափակումներ, որոնք ամրագրված էին ներպետական օրենսդրությունում: Արդյունքում, նրանք զրկվել էին վարձավճարների չափը ազատորեն որոշելու հնարավորությունից, իսկ բնակարանների վարձակալության պայմանագրերի դադարեցումը հնարավոր էր միայն այն դեպքում, եթե վարձատուները վարձակալներին ապահովեին համարժեք այլընտրանքային բնակարաններում հաստատվելու հնարավորությամբ:

Դիմումատուները նշել են, որ վարձավճարների թույլատրելի չափը իրենց հնարավորություն չէր տալիս ծածկելու իրենց բնակարանների պահպանման ծախսերը և երեքից չորս անգամ ավելի ցածր էր նմանատիպ բնակարանների համար նախատեսված վարձավճարների համեմատ: Դիմումատուները մասնավորապես նշել են, որ սեփականության իրավունքի միջամտությունը տևել է ավելի քան 20 տարի:

Պետությունը նշել է, որ միջամտությունը հետապնդել է օրինաչափ նպատակ, մասնավորապես վարձակալների իրավունքների պաշտպանությունը: Պետությունը մասնավորապես նշել է, որ վեճի առարկա տները վարձակալության իրավունքով տիրապետելու և օգտագործելու վարձակալների իրավունքը սահմանվել էր նախքան շուկայական հարաբերությունների հաստատումը: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարձակալները մեծ մասամբ ծեր անձինք էին, որոնք չէին կարող վճարել սահմանված վարձավճարներից ավելի, իսկ իշխանությունները հնարավորություն չունեին նրանց կացարանով ապահովելու, վարձատուների սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ:

Հարցեր:

1. *Արդյո՞ք սույն դեպքում առկա է միջամտություն սեփականության իրավունքին, և եթե այո՞, ապա Կոնվենցիայի 1-ին արձանագրության*

1-ին հոդվածի ռը կանոնն է կիրառելի:

2. Արդյոք պեղության կողմից պահպանվել են սեփականության իրավունքի միջամղության օրինականության կանոնները:

ԴԱՍ 8

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: 1999 թ. հուլիսի 28–ին դիմումատու ընկերությանը տրամադրվել է համազգային ստացիոնար հաղորդակներով հեռուստահեռարձակման արտոնագիր՝ թույլատրելով տեղադրել և գործարկել հեռուստացանց: Արտոնագրում նշվում էր, որ ընկերությունը իրավունք ուներ օգտագործելու երեք հաճախականություն, որոնք ծածկում էին երկրի տարածքի 80 %-ը: Ինչ վերաբերում է հաճախականությունների տրամադրմանը, արտոնագիրը հղում էր անում 1998 թ. հոկտեմբերի 30–ին ընդունված պետական հաճախականության տրամադրման պլանին, որի համաձայն՝ տեղադրումները պետք է համապատասխանեն առաջադրանքների պլանի պահանջներին քսանչորս ամսվա ընթացքում, և որ այդ նպատակով իրականացվող միջոցառումները պետք է համապատասխանեն հեռահաղորդակցության նախարարության հետ համատեղ հեռահաղորդակցություն կանոնակարգող մարմնի կողմից սահմանված ճշգրտման–կանոնավորման ծրագրին: Սակայն, հանրային կառավարման մարմինների որոշմամբ արտոնագրի հաճախականությունների տրամադրումը հետաձգվում է մինչև այն պահը, երբ իշխանություններն ընդունեն ճշգրտման–կանոնավորման ծրագիրը, որի հիման վրա դիմող ընկերությունը պարտավոր էր արդիականացնել իր տեխնիկական սարքավորումները/տեղադրումները: Ճշգրտման–կանոնավորման ծրագիրն իր հերթին պետք է հաշվի առներ պետական հաճախականությունների տրամադրման պլանի պահանջները: Սակայն պլանը ևս չէր իրականացվել: Արդյունքում, դիմող ընկերությունը, արտոնագրի ունենալով հանդերձ, մինչև 2009 թ. հունիսը անկարող եղավ ապահովելու հեռարձակում, քանի որ նրան չէր տրամադրվել որևէ հաճախականություն:

Դիմող ընկերությունը ներկայացրեց փաստարկներ, որ նա ի վիճակի չէր հեռարձակելու հեռուստածրագրեր, չնայած նա ստացել էր այդ անելու արտոնագիր՝ հանրային մրցությային ընթացակարգի արդյունքում:

Կառավարությունը նշել է, որ 1999 թ. դիմող ընկերությանը շնորհվել էր արտոնագիր, որն այդ փաստի ուժով նրան չէր տալիս հաճա-

խականություն ստանալու իրավունք: Կառավարությունը բացատրեց, որ դիմող կազմակերպությանը շնորհված արտոնագիրը նշանակում էր, որ այն իրավական տեսանկյունից պաշտպանված վիճակում էր և կարող էր գնել հաճախականություններ, օգտագործել այլ օպերատորների թվային հաղորդակցման կարողությունը:

Հարցեր:

1. Արդյո՞ք սույն դեպքում առկա է միջամտություն սեփականության իրավունքին, և եթե այո՞, ապա Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի դր կանոնն է կիրառելի:

2. Արդյո՞ք պետության կողմից պահպանվել են սեփականության իրավունքի միջամտության օրինականության կանոնները:

ԴԱՍ 9

ԻՐԱՎԻԺԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը ճանաչվել էր գերակա հանրային շահ (մայրաքաղաքի կառուցապատման ծրագրի շրջանակներում) և օտարվել էր: Բնակարանի շուկայական արժեքը բնակարանի օտարման պահին 50.000 \$ էր: Դիմումատուին տրվել էր փոխհատուցում 40.000 \$-ի չափով: Դիմումատուն դատական կարգով վիճարկել էր փոխհատուցման չափը՝ պահանջելով նաև բարոյական վնասի հատուցում՝ 15.000 \$-ի չափով: Դատարանները մերժել էին հայցադիմումը: Բարոյական վնասի մերժումը դատարանը պատճառաբանել էր այն հանգամանքով, որ ազգային օրենսդրությամբ բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտ նախատեսված չէ:

Հարցեր:

- 1. Արդյո՞ք դիմումատուին վճարված փոխհատուցման չափը ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվում է համաչափ:*
- 2. Արդյո՞ք ազգային օրենսդրությամբ բարոյական վնասի հատուցման ինստիտուտի բացակայությունը հիմք է այդ մասով հայցապահանջը մերժելու համար:*

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Փաստեր: Դիմումատուն X պետության քաղաքացի է, ով կենսաթոշակի անցած քաղաքացիական ծառայող է: 1986 թ. նա պետությունից վարձակալել է տուն, որտեղ ապրում էր կնոջ և երեխաների հետ: Վարձակալության պայմանագիրն ուներ վարձակալության տիպային պայմանագրին բնորոշ մի շարք պայմաններ, մասնավորապես վարձավճարի վճարման կարգի, սեփականության օգտագործման և պահպանման, ծանուցման և պայմանագրի գործողության ժամկետի հետ կապված պայմաններ: Պայմանագրի համաձայն՝ վարձակալության պայմանագրի գործողությունը ավարտվում էր դիմումատուի՝ վարձակալությամբ հանձնված գույքի գտնվելու տարածքից տարբեր այլ տարածք տեղափոխվելու փաստի ուժով:

2006 թ. դեկտեմբերի 3-ին ֆինանսների նախարարությունը տեղեկացրել է դիմումատուին այն մասին, որ այն թույլտվությունը, որի հիմքով կնքվել էր վարձակալության պայմանագիրը, անվավեր է ճանաչվել, և որ նա պարտավոր էր ազատել բնակարանը 2007 թ. ապրիլի 30-ին: Դիմումատուի կողմից բնակարանը չազատելու հիմքով նրան տեղեկացրել են, որ մինչև 2007 թ. հուլիսի 31-ը բնակարանը չազատելու դեպքում նա կվտարվի: 2007 թ. հուլիսի 3-ին դիմումատուն նշել է, որ նա այդ տանը բնակվում է իր ընտանիքի հետ միասին արդեն 20 տարի: Նա ծախսել է բավականաչափ միջոցներ այդ գույքի պահպանման և պայմանների բարելավման նպատակով, քանի որ համապատասխան պետական մարմինները որևէ կերպ հետաքրքրված չէին այդ գույքի ճակատագրով: Նա նշել է, որ օրինական վարձակալ է 1983 թվականի Վարձակալության հսկողության օրենքի ուժով (այսուհետ նաև՝ Օրենք): 2010 թ. X պետության կառավարությունը հայց է ներկայացրել դատարան դիմումատուին վտարելու պահանջով: Կառավարությունը այդ հայցի հիմքում մասնավորապես դրել է այն հանգամանքը, որ դիմումատուն չի զբաղեցրել տունը վարձակալության պայմանագրի հիման վրա 1983 թվականի Վարձակալության հսկողության օրենքի ուժով, քանի որ այդ տունը նրան էր հանձնվել վարչական ակտի հիման վրա՝ հաշվի առնելով վերջինիս քաղաքացիական ծառայող հանդիսանալու փաստը:

Դատարանը վճռել է կառավարության հայցը բավարարել: Դատարանի մեկնաբանություններից հետևում էր, որ 1983 թվականի Վարձակալության հսկողության օրենքի գործողությունը չէր տարածվում նշված իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ այն վերաբերում էր միայն գույքի մասնավոր սեփականատերերին և ոչ թե պետությանը սեփականությամբ պատկանող գույքին: Այդ պատճառով անձը, ով գույքը վարձակալել է պետությունից, չի կարող հանդիսանալ օրինական վարձակալ, որի իրավունքները պաշտպանված են վերը նշված օրենքով:

Դիմումատուն բողոքարկել է դատական ակտը՝ նշելով, որ առկա է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 8-րդ հոդվածի հետ համատեղ և 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված իրավունքների խախտում: Նշված խախտումները դիմումատուն մասնավորապես հիմնավորել է այն փաստի ուժով, որ իր՝ որպես վարձակալի իրավունքները գույքային իրավունքներ են 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, և որ ինքը դարձել է խտրականության զոհ, քանի որ 1983 թվականի Վարձակալության հսկողության օրենքը Դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ չի պաշտպանում պետության հետ վարձակալության պայմանագիր կնքած անձանց իրավունքներն այն դեպքում, երբ այդ նույն օրենքը պաշտպանում է պետությանը որպես օրինական վարձակալի այն դեպքում, երբ պետությունը վարձակալում է գույք մասնավոր անձանցից: Դիմումատուն նաև նշել է, որ ինքը խտրականության զոհ է, քանի որ նա քննարկվող օրենքի հիման վրա օգտվել է ավելի քիչ պաշտպանությունից, քան մասնավոր անձանց վարձակալները:

Դիմումատուի վճռաբեկ բողոքը ևս մերժվել է այն հիմքով, որ դիմումատուն՝ որպես վարձակալ, չունի սեփականության իրավունք Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, և հետևաբար չի կարող խոսվել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտման մասին: Դատարանը նաև նշել է, որ հավասարության հասկացությունը չի նշանակում, որ այն անձինք, որոնք, որպես վարձակալներ, Օրենքի պաշտպանության դաշտում են, պետք է տրամադրեն նույնական պաշտպանություն այն անձանց, ովքեր իրենց հերթին վարձակալության պայմանագիր կնքեն իրենց հետ: Վերջապես, մասնավոր անձանց կողմից վարձակալության հանձնված և պետության կողմից վարձակալության

հանձնված գույքերի առկայության դեպքում կարգավորման տարբերությունը պայմանավորված է վարձակալների կարգավիճակների տարբերությամբ: Մասնավորապես, ի տարբերություն մասնավոր սեփականատիրոջ, կառավարությունը պետք է տիրապետի պետական գույքը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, հանրային շահի հաշվառմամբ:

Հարց: Արդյո՞ք առկա է միջամտություն ՄԻԵԿ երաշխավորված որևէ իրավունքին: ՄԻԵԿ ռի հողվածներն են կիրառելի նշված իրավահարաբերության նկատմամբ:

Էմիլ Ամիրխանյան
Արթուր Հովհաննիսյան

**ՄԻԵԴ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ**

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹ

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am